


092. 94 шп.

Римани



5 - 6 / 1990

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1-***	Հայաստանաւերները	
3-Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ	Հայաստանաւերներ	
28-Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Պարզ քաղաքացիի մը սուրբայ երգերէն	
41-Գ. ԱՔԵԼԵԱՆ	Աննա հարսը	
50-ՄԱՐՈՒՇ	Պատարագ	
50-»	»	Ետդարձ
52-»	»	Աստղիկ առ Վահագն
53-»	»	Նուիրում
54-***	Ժամ ժիրոտու	
55-Ժ. ԺԻՐՈՏՈՒ	Տրովադայի պատերազմը տեղի պիտի չունենայ	
63-***	Վերստին յաւելուած	
64-***	Ռուբէն Յովսէփեան	
65-Ռ. ՅՈՎԱԷՓԵԱՆ	Լոյս՝ եեռուոր ու մօտ, այսօր ու վաղը ստեղծուող պատմութեան	
71-ՀԲ. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ	Վերահասուցման անխորտակելի՝ ոգին	
72-***	Արմէն Մարտիրոսեան	
73-Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Ինքնաճանաչման բարդութիւնը	
80-***	Յովհաննէս Մելիքեան	
81-Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ	Դիմանալ մանր լաւ ժամանակին	
91-Ա. ՍԱՀԱԿԵԱՆ	Մի խաբուէ՛ք	
92-***	Կարէն Սիմոնեան	
93-Կ. ՍԻՄՈՆԵԱՆ	Նահանջի ճանապարհ չկայ	
100-***	Պերճ Զէյթունցեան	
101-Պ. ԶԵՅԹՈՒՆՅԵԱՆ	Մի՛ վախեցէ՛ք ճշմարտութիւնից	
107-Ա. ԴԱՐԲԵՒ	Կրիայի անունիմները	
108-»	»	Մանկութիւնը
109-»	»	Ֆորմալիստ կաշաղակը
110-»	»	Առակի ճնարկումը
113-Բ. ԵՂՈՍԵԱՆ	Առակը գրականութեան մէջ	
124-***	Լոյս տեսան	

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԹ. ՏԱՐԻ

ԹԻԻ 5-6

ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

1990

ՊԵՅՐՈՒԹ

ՀԱՅԱՍՏԱՆԱՍԷՐՆԵՐԸ

Յաջորդող էջերուն երեւոյղ Նշան Պէշկիթաչեանի «Հայաստանասէրներ» անուն երգիծավէպը գրուած է վաթսունական թուականներու կիսուն եւ ճամբայ Հանուած «Գէորգ Մելիտինեցի» մրցանակին ներկայացուելու արամադրութեամբ: Բայց դատակազմին չհասած՝ աւելի ծաւալուն երկով մը ներկայանալու բարեկամներու թելադրանքին ընդառաջելով, անուանի երգիծաբանը վերախմբագրեց եւ վեց ամիսէն պակաս ժամանակի մը մէջ փութացուց «Թատերական դէմքեր»ուն ձեռագիրը, որ յետքենութեան արժանացաւ առաջին մրցանակի ու ապագութեան:

Այս գործը, «Թատերական դէմքեր», ինչպէս հետագային վկայեցին մտաւորական թէ դրասէր անխտիր բոլոր խաւերը, իր պատկառելի ծաւալին եւ նոյնքան ու աւելի՝ պատկառելի որակին համար՝ թէ՛ Նշան Պէշկիթաչեանի գլուխ-գործոցներէն մէկը հանդիսացաւ եւ թէ «Գէորգ Մելիտինեցի» մրցանակին լոյս ընծայած անտիպ գործերուն շարքին մէկ փողփողուն զարդը:

Յիշեալ փոփոխութեան ընթացքին, տուեալ մրցանակին ներկայացուած «Հայաստանասէրներ»ը մնաց դատակազմի ան-

դամներուն մօտ, այս վերջիններուն ու Հեղինակին համաձայնութեամբ օր մը զայն «Բագին» ի էջերէն ընթերցողին մատուցանելու համար: Հակառակ Հեղինակին նամակային հետաքրքրութիւններուն ու Հետապնդումներուն, գլխաւորաբար շարունակելի գրութիւններու առկայութեան պատճառով՝ անոր ողջուցը հնարաւոր չեղաւ տեղ բանալ երգիծավէպին, իսկ մահէն ետք որոշուեցաւ աւելի ուշ թուականի մը լոյս ընծայել զայն, գրագէտին մէկ ամեակին, թերթով ու հատորով, պատշաճ հանդիսութեան մը նախօրէին, բայց լիրանանեան դէպքերը արգելք եղան այդ ծրագրին գործադրութեան ու «Հայաստանասէրներ»ուն հրատարակութիւնը հասաւ մինչեւ ներկայ թուականը:

«Հայաստանասէրներ»ը տաղանդաւոր գրագէտին առջին կարգի ստեղծումներէն չէ անպայման, բայց նաեւ աննշան գործերէն չէ, մանաւանդ՝ երբ անոր մօտենանք իբրեւ վկայութիւններէն մէկը այն մտայնութեան, որ համարեա՛ կէս դար տուն-տեղ եղաւ Սփիւռքի մեր հատուածներէն մէկուն ծոցը, ա՛յն հատուածին, որ դժուար թէ համարձակութիւն ունենայ ետ դառնալու ու սիրտ ունենայ հպարտանալու «կարմրաշալա» իր հին սէրերով: Աւելի պարզ՝ Նշան Պէշկէթաշեանի «Հայաստանասէրներ»ուն նախատիպար հայաստանասէրները մեր իրականութեան մէջ չնչած այն Հողեղէններն էին, այն այլ տիպարները եւ այն կին տիպարները, որոնք, առջին օրէն պարզուեցաւ, սէրերէ աւելի հաշիւներ ունէին եւ առտնին մտահոգութիւններով կը փորձէին դեր խաղալ հայ կեանքին մէջ, որ տեղ չունէր իրենց համար: Հաւախնդրութեան այս ասպետները քսանական թուականներուն բուսան մեր մէջ, որոնք սակայն եռանդի առաւելագոյն չափ մը գրսէւորեցին ի մասնաւորի ստալինեան մոպլին, մասամբ նաեւ «Ստալինի ժառանգորդներ»ուն օրօք, առանց նկատի առնելու, որ ազատութեան մէջ ազատօրէն հանդիսադրած իրենց շոշորթութիւններով խորապէս կը վիրաւորեն փառաբանուած փրկիչներուն մականին տակ Հեծող հայրենի մեր ժողովուրդին հոգին ու արժանապատուութիւնը:

Հայրենասիրութեան ձրի պատիւներով իրենք զիրենք պճնազարգած այս դասուն ներկայացուցչական խորամանկներն ու ծառայամիտները չքանալու վրայ են այսօր, բայց գրականութիւնը երեւի դեռ պիտի գրադի անոնցմով, ինչպէս կը գրադի յայնկոյս մոլեգնած իրենց բախտակից սովետասէր որբերով: Բռնակալութեան անողոք թաթին տակ ապրելու սահմանուած այս վերջիններուն սովետասէր դառածութիւնը այնքան դժուար չէ անշուշտ ըմբռնել, որքան դժուար էր ըմբռնել շահատակութիւնները մեր հայրենասէրներուն, որոնց գոյութեան ու գործունէութեան վրայ լոյսի բաւական մեծ շերտ մը կը նետեն Նշան Պէշկէթաշեանի էջերը...

Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԱՍԷՐՆԵՐ

(ԵՐԳԻՇՄԱՎԷՊ)

ԵԴՈՒԱՐԳ ԱՏՈՄԵԱՆ՝ ՓԱՐԻՉԱՀԱՅ
ՀԱՅԱՍՏԱՆԱՍԷՐՆԵՐՈՒ ՄԷՋ



Եղուարդ Ատոմեան, ճարտարագէտ, երեսուն-
հինգ տարեկան, գրօսպտոյտի համար եկած էր Ֆրանս-
սա՝ Միացեալ Նահանգներէն: Իր ժամանումին յաջորդ
օրը Նոր Կիրակի էր:

Եղուարդ եւրոպական իմաստով գեղեցիկ է. ունի
հասակ, համաչափութիւն ու դէմք արտայայտիչ ու
հանելի: Նաեւ անձ մըն է յեզուանի:

Պէյրուսէն մեկնած էր Ամերիկա. առաջին ան-
գամն էր, որ կու գար Ֆրանսա:

Նոր Աշխարհի մէջ ծանօթացած ու մտերմացած
էր Ֆրանսահայու մը՝ Գաբրիէլին, որ Եղուարդին
տուաւ իր փարիզաբնակ եղբոր, Գեղամ Մամասեանին
հասցէն, ջերմապէս յանձնարարելով, որ այցելէ իր
ամուսնացած եղբորը: Ու անելուցած էր.

— Եղբօրս պէտք էր գրած եմ բու մասիդ:
Վստահ կրնաս ըլլալ, որ քեզ պիտի ընդունին հարագա-
տի մը պէս:

Գաբրիէլ, իր գրած մամակին մէջ, գովելով
Եղուարդը ամէն կերպով, սա քանի մը տողերը ստո-
րագծած էր.— «Դուն ու կինդ Գաթարին յաջողուցէք, եւ
մեր Անժելիքը ամուսնացուցէք Եղուարդին հետ: Վստահ
եմ, որ Անժելիք մեծ բախտի մը պիտի տիրանայ: Ձեր ընե-
լիքը դժուար բան մը չէ, քանի որ մեր Անժելիքը ոչ միայն
չափ գեղեցիկ է, հասկա միտքով ու մարմինով մազնիս է:
Մօրը ելած է: Հա՛, ձեզ տեսնեմ: Կը սպասեմ լաւ լուրե-
րու...»:

«Մօրը ելած է» խօսքը՝ Գաբրիել իբրև կաշառֆ տուած էր Գաթարիին, որ մնաց չափազանց գոհ, ու գինովցաւ գովեստով:

Այդ ներքողը հաղորդեց շատերու, անշուշտ առանց յայտնելու, թէ ի՛նչ առիթով գրուած էր գնահատութիւնը:

Մամասեանները, այր ու կին եւ իրենց ազգիկը, անհամբեր կը սպասէին Եդուարդին գալուստին:

Եւ օր մը, ցնծածայն հնչեց հեռածայնը, Մամասեաններու յարկաբաժնին մէջ: Ընկալուչը վերցուցած էր տիկին Գաթարի: Խօսողը Եդուարդ Ատոմեանն էր. կը խօսէր իր իջեւանած պանդոկէն: Համակ սարսուռ եւ յուզում էր, նաեւ՝ մեղր ու շաքար Գաթարի: Քաղաքավարական քանի մը փոխադարձ խօսքերէ ետքը, Եդուարդ փափաք յայտնեց կիրակի, յետմիջօրէին այցելել Մամասեաններուն: Տիկին Գաթարի հրաւիրեց Եդուարդը կէսօրուայ ճաշի, կիրակի:

Աւտիսը հաղորդեց երեկոյեան՝ աղջկանը ու ամուսինին: Կարծէք յարկաբաժինը վերածուեցաւ հարսնետունի:

Կիրակի, կէս օրուան մերձ, Եդուարդ ներկայացաւ շէնք վարդափունջով, ինչպէս նաեւ արքայավայել տուփով մը՝ թագածեւ շոքոյաներ, որոնք կը պարունակէն գանազան մարսողական ըմպելիներ:

Օրը անցաւ ուրախ-գուարթ մեծապէս հանելի:

Երեք Մամասեաններն ալ առանձին-առանձին պահանջեցին ու պնդեցին, որ շաքաքը առնուագն երեք անգամ Եդուարդ այցելէ իրենց, մնալով ճաշի:

Հետգհետէ շատ տաքցան իրարու հանդէպ:

Եդուարդ փոխադարձաբար, քանի մը անգամ Մամասեանները հրաւիրեց ճաշի, Շան գ'էլիզէի պողոտային գագաթը գտնուող «Փերկոյա» ճաշարանը, որ իր *տեղը* ներով կը պարզէ հեֆիաթագեղ գանազան տեսիլներ:

Քանի մը անգամ ալ տարաւ Օփերա, Օփերա — Քոմիք, Ֆրանսական Թատրոն ու Օտէոն:

Այդ յառաջաբաններէն ետքը, Գաթարի ու Գեղամ դիւանագիտօրէն ճաշուեցան, որպէսզի Եդուարդ ու Անժելիք միմակ մնան եւ մեներգեն, կամ աւելի ճիշդը՝ գուզերգեն:

* * *

Գաթարի ու Անժելիք մէկ քանի անգամ Եդ-

ւարդը տեսնելէ ետքը, ունեցան հետեւեալ գաղտնասացութիւնը.

— Անժեյիք, ինչպէ՞ս գտար Շղուարդը: Գնորդի պէս ֆենեկով...

— Ի՞նչ, ըսել կ'ուզես, որ դրա՞մ պիտի վնարեմ ու գնո՞րդ դառնամ...

— Խե՛նք: Ատիկա ըսելու ձեւ մըն է:

— Ներկայանալի, զարգացած, կրթուած է ու խելացի: Նաեւ շատ համակրելի եւ լեզուանի:

— Տակաւին մասնագէտ, գործը լաւ, շահը մեծ, ապագան փայլուն: Իտէլի փետացու մըն է:

— Քայց մայիմֆ ան ինձի ինչպէ՞ս գտաւ:

— Ըսեմ. քեզ գտաւ շատ գեղեցիկ: Ուսուելիք պատառ, եւ պատառ մը անսպառ:

— Ինչպէ՞ս գիտցար...

— Իր քեզի մայած ատենները, աչքերը կարդացի, զգացումները հոտոտեցի ու մտածումները թարգմանեցի:

— Ի՞նչ լեզուով կը մտածէր, որ դուն կրցար թարգմանութիւն ընել: Եթէ հայերէն կը մտածէ, թարգմանութեան պէտք չկայ. իսկ եթէ անգլիերէն կը մտածէ, դուն անգլիերէն չես գիտեր:

— Ազուոր *խախտ*, դուն չե՞ս գիտեր, որ սիրահարի մը բուն լեզուն, լռած ատենը անգամ կը լսուի, ու հին, յաւիտենական էսփերանթօ մըն է: Եւ այդ լեզուին մասնագէտներէն է *մամադ*: Ատկէ գատ, դուն իմ ազգիկս ես. կարելի՞ քան է, որ մէկը քեզ տեսնէ ու չսիրահարուի:

— Ուրեմն մարդը բռնուեցաւ ու բռնկեցա՞ւ:

— Բռնուեցաւ ալ, կապուեցաւ ալ: Հաւատիսը, այսինքն՝ աւետիսը ինձմէ առ: Միայն մէկ թերութիւն ունի: Տարիքով սանկ քեզէ տասը տարի մեծ ըլլալու է:

— Եթէ տասը տարի մեծ է, ուրեմն միայն հինգ տարի մեծ է, քանի որ իբրեւ էրիկմարդ հինգ տարի մեծ ըլլալու իրաւունք ունի:

— Զգէ որ այդ թերութիւնը առաւելութիւն մըն է քեզի համար: Տարիքը քիչ մը աւելի ունեցողները տալիք շատ կ'ունենան: Ան միշտ քեզի պարտական պիտի ըլլայ այդ պատճառով: Դուն ալ միշտ առնելիքուոր պիտի ըլլաս:

— Ուրեմն գործը եղած է:

— Հայրդ մէկ կողմ նետէ: Ես ընելիքս ըրի, շատ մուրթ, շատ ազնուական կերպով: Ասկէ ետքը, գործին

դեկը դուռն ձեռք պիտի առնես ամբողջովին: Նայէ որ դուռն քեզ ծանրէն ծախես: Վրան մի՛ իյնար:

— Քանի որ պէտք է ծանրանամ, հարկաւ ծանրութիւնովս վրան իյնալու չեմ, տակը կը նզմուի եղուարդս... Մեղք է չէ...

* *

Եղուարդ քանի մը այցելութիւններէ ետքը, ծանօթանալով հիրերու ալ, Մամասեաններու բնակարանին մէջ, տեսաւ, որ ինկած է «Հայաստանաւեր»ներու միջավայրի մը կամ միջնաբերդի մը մէջ:

Փափաքեցաւ քաղի տեղեկութիւններ «Հայաստանաւեր»ներու մասին, երբ օր մը, ծանօթացաւ Մարտիրոս Աղբօր, որ մարած ու ծուած կերտնի պէս մարդ մըն էր: Դէմքը կը նմանէր շատ գործածուած էջ մը մագաղաթի, իսկ աչքերը հանգած կանթեղներ էին: Յայտնի էր, որ լախտաւարուած ու տառապող Հայ մըն էր: Եւ կոնակին վրայ ունէր փոքրիկ բռն մը.— կուզիկ էր:

Գեղամ Մամասեան այդ Մարտիրոս Աղբօր համար, եղուարդին ըսած էր.

— Կը տեսնեմ, որ կը հետաքրքրուիք «Հայաստանաւեր»ներով: Ձեր յաջորդ այցելութեան, հոս պիտի գտնէք տիպար մը, որ կը կոչուի Մարտիրոս Աղբար: Ձեր հարցումները խորհուրդ կու տամ որ անոր ուղղէք, բայց գաղտնօրէն, առանձնանալով: Մարտիրոս Աղբար հմուտ մարդ է: Բաւական ալ գրոց-բրոց է: Մեր սպագայ պատմագիրն է: Իրմէ կը սպասուի ուսումնասիրութիւն մը:

Առիթը ներկայացաւ, եւ եղուարդ կերպով մը պատշգամին մէջ մեծանալով Մարտիրոս Աղբօր հետ, հարցուց.

— Կրնա՞մ ձեզնէ կարգ մը տեղեկութիւններ քաղել «Հայաստանաւեր»ներուն մասին:

Մարտիրոս ցած ձայնով ըսաւ.

— Ինձի պատմագէտի տեղ դրած են: Բայց ես պատմագէտ ըլլալէ աւելի՛ դիմագէտ եմ: Դուք «Հայաստանաւեր» մը չէք:

— Բայց ես չըսի, թէ «Հայաստանաւեր» մըն եմ, հակառակ որ Հայաստանը բնականաբար կը սիրեմ իրբեւ հայրենիքի: Եւ սակայն, դուք ինչպէ՞ս հասկցաք, դէմքիս նայելով, իմ «Հայաստանաւեր» չըլլալս:

— Ատ իմ գաղտնի գիտութիւնս է: Հայու մը դէմքին նայելով, ձայնը լսելով, երկու որեւէ խօսք ունկրնդ-

բերով՝ կրնամ ըսել, թէ ո՛ր կուսակցութեան կը պատկանի կամ համակիր է: Քիչ անգամ կը սխալիմ, եւ սխալելուս յանցանքը իմս չէ, որովհետեւ մարդիկ կան, որոնք խառնուածով Դաշնակցական են, ու արկածով մը եղած են Ռամկավար: Հակառակն ալ կայ. մարդիկ ալ կան, որոնք խառնուածով Ռամկավար են ու արկածով մը եղած են Դաշնակցական: Մարդիկ կան, որոնք փոխած են իրենց կոչումը, որոնք իրենց հոգուն մէջ չեն, եւ պատճառ կ'ըլլան բազմաթիւ սխալներու, ինչպէս նաեւ ի՛մ սխալելուս: Գալով ձեզի, դուք կուսակցական չէք, բայց համակիր էք Դաշնակցութեան: Ճիշդ ըսի՞...

— Ամէնէն կարելորը, բարեկամս, չակերտաւոր «Հայաստանաւեր» մը չեմ:

Մարտիրոս աւելի ցած ձայնով ըսաւ.

— Կը շնորհաւորեմ: Ուրեմն ինձի պէս էք:

— Բայց դուք պաշտօնապէս «Հայաստանաւեր» մըն էք:

— Այո՛, սակայն, ոչ ազատ կամփոյս: Վախէս, սիրելի բարեկամ, վախէս: Կը խոստովանիմ:

— Բայց որմէ՞ կը վախնամ, քանի որ կ'ապրիք ազատ աշխարհի մէջ, մա՛նաւանդ՝ Ֆրանսա, ուր բռնակալներ չկան:

— Ուրիշ տեսակի բռնակալներ կան, որոնցմէ կը գտնուին ամէնէն ազատ երկիրներու մէջ անգամ:

— Որո՞նք են այդ բռնակալները եւ ի՞նչ կրնան ընել...

— Կը քանդեն, կը քայքայեն, կը խայտառակեն...

— Բայց մէկ հատին անունը տայիք:

— Ես ձեզի առայժմ երկու հատին անունները պիտի տամ: Նախ՝ ընկերուհի Սեւանը...

— Ո՞վ է որ...

— Կնիկս է: Բարով-խերով շըլլար: Այո՛, կնիկս, որ Սոկրատին կնոջ քոյրն է: Կը տեսնէք, որ Սոկրատին հետ ազգական եմ: Միակ միտքարուքիւնս: Երկրորդն ալ ընկերուհի Գաթարինն է, բուն անունով՝ կատարինն, կիսով ինձի բախտակից Գեղամին կնիկը:

— Իսկ օրիորդ Անժելի՞քը...

— Ան հոգիով ալ գեղեցիկ է, մտքով ալ առողջ է: Կ'արժէ գայն փրկել մեր միջավայրէն:

Եղուարդ ներքին շունչ մը առաւ:

Մարտիրոս Աղբար շարունակեց.

— Պարպուիլ կ'ուզէի մէկուն: Խոստովանաւոր

մը պէտք ունէի: Աստուած դրկեց ինձ: Կը ներես, որ ա՛լ եզակի պիտի խօսիմ հետդ...

— Խօսէ՛ այնպէս՝ ինչպէս որ կ'ուզես:

— Կիմս կատաղի հակադաշնակցական մը ըլլալուն, եղաւ Հայաստանսէր: Թէ ինչո՛ւ հակադաշնակցական դարձաւ, կարծեմ արհամարհուեցաւ ու լեցուեցաւ յիտով: Ընկերուէի Գաթարի, որ Դաշնակցութեան համակիր եղած էր աղջիկնութեան շրջանին, սիրահարուած էր Դաշնակցականի մը, որուն հետ ամուսնանալ կ'ուզէր: Երբ մերժուեցաւ, Դաշնակցականին հետ ատեց Դաշնակցութիւնն ալ, ու ի վերջոյ, եղաւ Հայաստանսէր: Կա՛մ այն է, որ կիմս ու Գաթարի զօրաւոր անհատականութիւններ են, որոնք կրցան իրենց ամուսիններուն պարտադրել Հայաստանասիրութիւնը, եւ կամ մե՛նք, Գեղամն աւ ես, շատ ողորմելի արարածներ ենք, քանի որ ենթարկուեցանք մեր կիներուն, վասն ընտանեկան խաղաղութեան: Գեղամին վիճակը իմինէս գէշ է, իմ վիճակս՝ անորինէն գէշ: Ան առաջին օրէն ստրկացաւ, իսկ ես քիչ մը ուշ, քայքայ խայտառակաբար ստրկացայ: Գիտեմ, Գեղամը ինձի նայելով՝ ինքզինքը բախտաւոր կը համարէ: Փիլիսոփայ եղած է *սոփա* ուտելով: Կը տեսնես, որ Հայաստանասէրներու պատմագիրը ըլլալու համար պէտք եղած ատաղձը, գերակը, քարը ու կիրը ունիմ: Վստահ եղիր, որ տուարակս դեռ չեմ քացած լայնօրէն: Բայց ինչո՞ւ այս հետաքրքրութիւնը: Դո՞ւն ալ ապագայ մատենագիր մըն ես...

— Օ՛, ո՛չ: Կ'ուզեմ գիտնալ՝ գոհացումի մը համար անձնական: Ազանդները զիս կը հետաքրքրեն: Կ'ուսումնասիրեմ մարդկային մոլեռանդութիւնը: Հայաստանասիրութիւնն ալ ինքնատիպ ազանդ մըն է:

— Ազանդը կրօնական կ'ըլլայ: Հայաստանասիրութիւնը ո՛չ միայն կրօնական չէ, այլեւ անկրօն ալ է:

— Ազանդ մըն է զուգահեռական գիծերով: Բազմազան ու քրիստոնէական: Ձէ՞ որ Հայաստանասիրութեան հետ կայ նաեւ էջմիածնասիրութիւնը: Ուրիշ ի՞նչ անուններ ունի այդ ազանդը...

— Իրենց ամէնէն կարեւոր անունը, որ լռելիայն կ'արտասանուի, Սովետասիրութիւնն է: Կար նաեւ Ստալինասիրութիւնը, որ ինչպէս նորածնութենէ: Իսկ երկրորդական անուններն են Սեւանասիրութիւնը, Իշխանասիրութիւնը (ձուկին համար), ինչպէս նաեւ հաւանասիրութիւնն ու Քոնեաբասիրութիւնը: Իսկ իզական սեռին պատկանող Հայաստանասէրներն ալ

հաւատարիմ են Մուշտակասիրութեան եւ Մամոնայասիրութեան: Ո՛չ միայն կը սիրեն Հայաստանը, այլեւ՝ Հայաստանի կորովի այրերը: Երբ խմբակցութեան մը անունին ծայրը սէր կայ, սկիզբն ալ ատելութիւն կ'ըլլայ: Մեր Հայաստանասէրները դաշնակաւտեաց, անկախատեաց ու ազատատեաց են: Անոնց մէկ ատելութեան միայն կարելի է միանալ.— քրքատեացութեան:

— Խօսէ տակաւին, կը խնդրեմ...: Մեզմով գրադող չկայ, բարեբախտաբար:

— Ատիկա Գեղամին կարգադրութեան կը պարտինք: Որչափ ալ ստրուկ ըլլայ, վերջապէս խանութպան է: Իրենները եւ հիւրերը հաւատացած են, որ ես Հայաստանասիրութիւն կը քարոզեմ քեզի:

— Հիտնալի՛ր...: Բայց դուն շարունակէ խօսիլ:

— Եթէ Հայաստանասիրութեան մինչեւ արմատը խորանմէ, պիտի տեսնենք, որ Հայաստանասիրութեան բարի ծագիկներ ու բարի պտուղներ ունենալուն բուն պատճառը հակադաշնակցութիւնն է: Իսկ ամէնէն մոլեռանդ Հայաստանասէրներ հանդէս եկողները եղան Հայուհիները, մանաւանդ անո՛նք, որոնք պատերազմի ընթացքին ենթարկուեցան հայրենասիրական ներարկումներու, հայաստանցի ռազմագերիներու կողմէ:

— Եւ անշուշտ այդ ներարկումներուն ենթարկըւող Հայուհիներէն ոմանք բախտաւորուեցան, եւ աղանդին համար ապագայ անդամներ ու անդամուհիներ ապահովեցին:

— Հայաստանասէրներուն մէջ, քիչ մը ամէն տեղէ Հայեր կան, բնականաբար: Բայց Հայաստանասէրները ընդհանրապէս երկու տեղերու, երկու նահանգներու պատկանող Հայեր են: Չըլլայ որ պահանջէք ինձմէ՝ այդ երկու նահանգներուն անունները: Կը վախճամ խաչը հանուելէ: Ինքզինքիս հազիւ կը փոփոսամ այդ երկու անունները: Սա կարեւոր կէտն ալ աւելցնեմ, որ Հայաստանը համայնավար ըլլալէն առաջ, այդ Հայերը գրեթէ անտարբեր էին Հայութեան, Հայրենիքին ու Հայերէնին հանդէպ:

— Այդ երկու նահանգները պիտի ջանամ գտնել:

— Այսօրուան այսօրուան համար բաւ համարենք: Ուրիշ առթիւ, մա՛նաւանդ՝ ուրիշ տեղ կը շարունակենք մեր խօսակցութիւնը: Կը յուսամ, որ այս առաջին դասախօսութիւնը, քանի մը ուրուագիծներով, ընդհանուր գազափար մը կազմել տուաւ այն աղանդին մասին:

Երբ Մարտիրոս մեկնեցաւ, Գեղամ մօտեցաւ Եդուարդին ու գաղտնօրէն ըսաւ.

— Մեր պատուական Մարտիրոսին սիրտը այրած է: Բացուեցա՞ւ...

— Բաւական: Բայց պատուոյ խօսք տուէ՛ք, որ կը պահէ՛ք գաղտնի:

— Անհոգ եղէ՛ք: Ես կազմակերպեցի ձեր խօսակցութիւնը:

— Տառապած ու տառապող մարդ մըն է:

— Մարտիրոսը պատուական ու պատուախնդիր մարդ է: Ձէ կըրցած մարսել եզածը, ու պիտի չկրնայ մարսել: Առանց մերձենալու իր կնոջը, ընկերուհի Սեւանին, բախտաւորուեցաւ երկու աղջիկ գաւակներով:

— Անարա՞տ յղութեամբ...

— Հայաստանասիրական ներարկումներով: Պատերազմի վերջին շրջանին, երբ այստեղ էին Հայաստանի ռազմագերիներէն քանի մը խմբակներ: Մեր ընկերուհիներէն ուրիշներ ալ բախտաւորուեցան ընկերուհի Սեւանին պէս:

— Այդ «ընկերուհի»ն ինչո՞ւ կը կոչուի Սեւան:

— Գեղամ խնդաց ու պատասխանեց.

— Որովհետեւ շատ կը սիրէ իշխանաձուկեր ունենալ իր ծոցը:

Գեղամ որ թէ՛ կը ցաւէր, թէ՛ գաղտնօրէն կը հեզներ Մարտիրոս Ազարբը, չէր գիտեր, որ քիչ մնացած էր իր ալ բախտաւորուելուն:

Անժեղիք, այն ատեն հագիւ աղջնակ, բնագոյով բունն կերպով ընդդիմացած էր, ու տուներն վրնտած՝ ներարկումի երկու աննահանջ մասնագէտներ:

Գեղամ չէր գիտեր, որ իր աղջկան կը պարտի՝ նոր գաւակներով բախտաւորուած չըլլալու անբախտութիւնը:

ՄԱՄԱՍԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՒԱՆԻԱԿԱՆ ՈՒ ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ահաւասիկ Մամասեան ընտանիքին սկզբնաւորութեան աւանդավէպը.

Գեղամ իր ամուսնութեան յաջորդ առտուն, արթնցած է վաստակաբեկ՝ կէս օրուան մօտ, ու տեսած է, որ իր կինը, Գաթարի, առագաստի անկողնին մէջ չէ, ոչ ալ քովի սենեակներուն մէջ: Լուացուած, ածիլուած է

Եւ ուզած է հագուիլ, բայց չէ գտած իր տաքատը: Դուռը բացած ու պոռացած է.

— Փա Գաթարի, ո՞ւր ես, ի՞նչ կ'ընես...

Յայտնուած է կիներ՝ իր մարդուն տաքատը հագած, մէկ ձեռքը՝ ծխիկ, միւս ձեռքը՝ սկահակը սուրճի, եւ պոռացողին պատասխանած է գոռայով.

— Էն առաջ ըսեմ, որ պոռայը խստիւ կ'արգիլեմ: Քիչ առաջուան պոռալդ կ'ըլլայ առաջինը ու վերջինը: Ահա հոս եմ, ու սուրճս կը խմեմ ծխելով: Ուզածդ ի՞նչ է...

— Տաքատս հագեր ես...

— Ա՛, գիտցած եղիր, որ ասկէ ետքը, *փանթայոնը* ի՛նչ է: Բոլոր տաքատները ե՛ս պիտի հագուիմ: Քեզի կը ձգեմ փէշս, գոզնոցս ալ միասին: Ես ճեզի հնագանդ պիտի ըլլամ խօսքով, դուն ալ ինձի հպատակ պիտի ըլլաս գործով: Եթէ հլու հպատակ ըլլաս, լուծս քաղցր է: Աշխարհի ամէնէն երջանիկ մարդը պիտի ըլլաս: Ամէն վայելք պիտի ըլլայ ինչդ: Հակառակ պարագային, կը յայտարարեմ անվերջ ու ամբողջական պատերազմ: *Կէն թոթալ*: Սա ալ գիտցիր, որ իմ հագած փանթայոնս ցանկ պիտի չշինէ, *աբորտէնի* պիտի չվերածուի. մա՛նաւանդ կօշիկիս փթերուն սրբիչները պիտի չըլլան փանթայոնիս ետեւի, վարի մասերը: Ատոնցմէ գաս, իմ փանթայոնս միշտ պիտի մնայ հեղինակութեամբ յարդելու աստիճան լեցուած:

Գեղամ գլուխը փերելէ ու նակատը շփելէ ետքը, գնաց համբուրեց Գաթարին, անոր շքերէնէն, ու կնքեց խաղաղութեան դաշինքը: Իբրեւ պատուաւոր մարդ, յարգեց իր կնիքը, իսկ իբրեւ պատուական ամուսին յարգելով յարգեց իր կնիկը: Եթէ երանելի մը չեղաւ, սակայն, ապրեցաւ խոհանոցային խաղաղութեան մը մէջ, հոշակուելով ամուսին արդիական, որով՝ օրինակելի:

Գեղամ ինքզինքը ազատագրելու համար խոհանոցային զանազան գործունէութիւններէ, պարտաւորւեցաւ վարձել հայ ազախին մը, մա՛նաւանդ որ բախտաւորուած էր ազգիկով մը, ու թագուհի Գաթարի դադրած էր իր սուրճը սնգամ ինք եփելէ:

Տարիներ ետքը, Տէր եւ Տիկին Մամասեանները, երբ դարձան Հայաստանաւերներ, իրենց ընկերներն ու ընկերուհիները, Մամասեաններուն բացակայութեան, տիկին Գաթարին կ'անուանէին «ընկեր»¹, իսկ Գեղամը՝ «ընկերուհի»:

Անգամ մը, թունդ Հայաստանսէր ընկեր Թո-
րոս, Հայաստանսէր ընկերուհի Եպրաֆսէին հարցուց.

— Մամասեաններուն աղջիկը, Անժելիքը, ինչ-
պէ՞ս պէտք է կոչել. ընկե՞ր թէ ընկերուհի...

Ընկերուհի Եպրաֆսէ պատասխանած էր.

— Անժելիքը առայժմ մեր սեռին կը պատկանի,
որով՝ ընկերուհի է: Բայց այնքան յառաջդիմական է, որ
վստահ եմ, թէ ատեն մը ետքը պիտի պատկանի քու սե-
ռիդ, ու մօրքը պէս պիտի կոչուի «ընկեր»:

— Ես ալ ատանկ կը կարծեմ, քանի որ կը յառաջ-
դիմէ իբրեւ մանչ-աղջիկ:

Գաթարիի պատգամը, որ քանի մը անգամ կըրկ-
նըւած էր, ուղղուած իր ամուսինին, բոլորին ծանօթ էր,
ու հետեւեալն էր.

— Կերպասը քեզ, պատրաստութիւնը քեզ,
բայց փանթալոն հագնիլն ալ ինձմէ: Արդու կեյն ալ քեզի
կը ձգեմ:

* *

Գերձակ վանառական Գեղամ Մամասեան՝ գեր-
մանական գրաւումէն քանի մը ամիս ետքը, յանկարծ,
մեծապէս հարստացաւ, պարզապէս կողոպտուելով:

Գիշեր մը, գողերը պարպած էին իր խանութը,
կողոպտելով կերպասները:

Գեղամ ձեռքը գլխուն գարկաւ ու աղաղակեց.

— Մեռա՛յ...

Դիմեց ոստիկանութեան:

Յուսահատութեան երեք օրեր ապրեցաւ:

Զորքորդ օրը, սակայն, ոստիկանութիւնը յաջո-
ղած էր գտնել գողերուն մթերանոցը, բերնէ բերան լե-
ցուն կերպասներով, որոնց հարիւրին ութսունը գող-
ցըւած էին մայրաքաղաքէն հեռացած Հրեաներու վա-
նառատուններէն:

Ոստիկանապետը կարծելով, որ բոլորն ալ Գեղա-
մին ապրանքներն են, ըսած էր.

— Բեռնակառք մը վարձեցէ՛ք ու կերպասները
փոխադրեցէ՛ք խանութ:

Բեռնակառքը երեք անգամ մթերանոցէն խանութ
երթեւեկած էր, միշտ բլրակուտակ:

Գեղամ առատածեռնօրէ՛ն, նուէր, հագուստ մը
պատրաստեց ոստիկանապետին, շահելով անոր շահե-
կան բարեկամութիւնը:

Այսպէս, Գեղամ բախտի մէկ խաղով եղած էր տէր միլիոններու, որոնք բազմապատկուեցան շնորհիւ սեւ շուկային, որ անունով «սեւ» էր, մինչդեռ իրականին մէջ ոսկեգոյն էր ու ոսկի:

Գեղամ կ'ըսէր.

— Իբրեւ հարուստ երեք օր մեռա՛յ, մեռա՛յ ու մեռա՛յ: Բայց մեռա՛յ, մեռա՛յ, ու ողջնցայ իբրեւ մեծահարուստ: Մարդիկ կան, որոնք կողոպտելով կը հարքստանան: Ինձի պէս պատուաւոր մարդն ալ կը հարստանայ կողոպտուելով:

Գեղամ գործը գիտցող մարդ էր: Երբ հարստացաւ, զնեց երկու հսկայ տուն, եւ մեծ արուարձաններու մէջ բնդարձակ հողեր, որոնց զինքը հետզհետէ բազմապատկուեցան: Բարեբախտ բազմապատկութիւն մը եղաւ իր կեանքը, եւ կիներ, որ բաժանումի հակումներ ունէր, գոհացաւ բազմապատկութեամբ, եւ իր բախտին վերագրեց յաջողութիւնները:

Ծանօթ մազթանքը, «Հող բռնես՝ ոսկի կտրի», շրջելով՝ Գեղամ կ'ըսէր.— «Ոսկի բռնես՝ հող կտրի»:

Գեղամ գործը գիտցող էր: Երբ հարստացաւ, համակրութեամբ համայնավարացաւ, որպէսզի ձախ կողմէն վտանգ մը չսպառնայ իր հարստութեան:

Կառավարութեան կողմէ ալ վտանգ չէր կրնար ըլլալ, քանի որ ոստիկանապետը կենդանի վկայ մըն էր իր ունեցած մոխ կերպասներուն, սեւ շուկային գործունէութենէն առաջ:

Համակիր համայնավար դառնալով՝ մտաւ Հայաստանախրութեան հոսանքին մէջ, ուր կը գտնուէր արդէն իր կիներ:

Գեղամ նախ կոչուեցաւ «բնկեր ազա», ապա, «բնկեր քափիթալիստ» ու վերջապէս «բնկերուհի Գեղամ»:

Կ'ըսէր մտովի.

— Եթէ ոմանք համայնավար եղած են, օր մը, առիթը ներկայանայու ատեն, կողոպտելու համար, ես համայնավար եղած եմ, չկողոպտուելու համար:

* *

Գաբարի յիսունի մերձ, արեւելեան կանանոցի օտաւէջի նմանող աշնանագեղ կին մըն էր: Անցեալին թէեւ բաւական գեղեցիկ եղած էր, բայց ոչ նրբեմի:

Իր պարծանքը իր ազգիկն էր, Անժելիքը, որուն համար կ'ըսէր.

— Ճիշդ ինձի ելած է: Իմ երիտասարդութիւնս է, բայց ճիշդ ու ճիշդ:

Եւ սակայն, Անժելիք չէր նմաներ իրեն ո՛չ բնաւորութեամբ, ոչ ալ գեղեցկութիւնով: Անժելիք չունէր պոռոտ գիծեր: Նուրբ էր ու շնորհալի: Իսկ բնաւորութեամբ հակապատկերն էր մօրը, որ կեղծաւոր էր, մաեւ սնապարծ ու հանգանակիչ հիացումի: Մինչդեռ Անժելիք հետամուտ չէր գովեստի: Իր թերութիւնը իր բուն անկեղծութիւնն էր, իր սանձարձակ նշմարտախօսութիւնը, որ մերթ կ'երթար մինչեւ կոպտութեան:

Անժելիք գիտէր, որ դժմով, մարմնով ու բնաւորութեամբ չէր նմաներ մօրը, սակայն, մօրմէն շատ սիրուած ըլլալուն համար, ինք ալ մայրասէր ըլլալուն, ո՛չ կը հերքէր, ոչ ալ կը հաստատէր մօրը յայտարարած նմանութիւնը:

Անժելիք յաճախ կ'ունենար գաղտնի ֆմծիծաղ մը, որովհետեւ ինք գիտէր, թէ ո՛րու կը նմանէր: Հայրը ըսած էր իրեն, մօրը բացակայութեան:

Անժելիք կը նմանէր իր վաղամեա հօրաբոջը, որուն մեծանկարուած պատկերը՝ Գաթարիի կողմէ ենթարկուած էր իրերայաջորդ շնորհագրկումներու, հետեւանքով նախանձի մը, որ կը տեսէր մահէն ալ ետքը: Գաթարի, տարիներ առաջ, նախ պատէն վար առած էր տալոջը լուսանկարը, ապա գրկած էր գայն շրջանակէ ու, վերջապէս, այդ մեծանկարը խոթած էր ներմակեղէններու դարակի մը յատակը: Զէր ուզեր, որ մէկը տեսնէ այդ լուսանկարը, որովհետեւ տեսնողները միշտ ըսած էին.— «Ո՛րքան կը նմանի Անժելիքին. կարծես մեծ ֆոյրն է»:

Գեղամին մեղմանուչ դիտողութեան իրրեւ պատասխան, Գաթարի ինքզինքը չֆմեղացուցած էր, ըսելով.

— Ամէն անգամ, որ կը տեսնեմ Հերմիոնէին պատկերը, գէշ կ'ըլլամ, շատ կը յուզուիմ: Ես գգայուն կնիկ եմ:

Գեղամ իր աղջկան ցոյց տուած էր Քրոջը պատկերը: Անժելիք խոր յուզումով ու հիացումով դիտած էր երկարօրէն այդ լուսանկարը, ապա, իրովի ըսած.

— Մեռելի մը հանդէպ չար ըլլալ. ամօ՛ք...: Մեռելի մը յիշատակը նախատել. ամօ՛ք...: Մեռելի մը գեղեցկութենէն նախանձիլ. ամօ՛ք...

Ամէնէն անհանդուրժելին, Գաթարիի համար ա՛յն էր, որ մեռեալը իրմէ կը խլէր իր հարագատ աղջի-

կը, իր պարծանքը, իր միակ գլուխ-գործոցը, քանի որ քանիներ ըսած էին, պատկերին նայելով.— «Ի՛նչ անըման նմանութիւն...: Շատ գարմանաւի...: Հերմինէ ու Անժելիֆ ճիշդ իրարու կը նմանին»:

Ատկէ գատ, կար ուրիշ պատճառ մըն ալ պատէն վար առնելու համար Հերմինէին մեծանկարը: Այդ պատկերը պատճառ կ'ըլլար, որ իրեն աննպաստ բաղդատութիւն մը ըլլայ: Այդ պատկերը իր ազնուագեղ դէմքով՝ մէջտեղ կը հանէր Գաթարիի դէմքին նուազ գեղեցկութեան հետ, գոնիկ գիծերը: Մինչդեռ բախդատութիւն մը իր ու Անժելիֆին մէջ, որքան ալ անընպաստ ըլլար Գաթարիին, պիտի վերագրուէր տարիքին:

Անժելիֆ չէր կրցած հանդուրժել իր մօր այդ չար վերաբերումը: Օր մը, ստելով, մօրը ըսած էր.

— Գիտե՞ս, մամ, այսօր կրան Պուլվարին վրայ հանդիպեցայ պառաւ Մարիամին, որ զիս տեսնելով յուզուեցաւ եւ ըսաւ.— «Ամէն կերպով, դէմքով, մարմինով, նոյնիսկ ֆալուածքով՝ Հերմինէ հօրաբոջը կը նմանիս»: Ճի՞շդ է, մամա: Ես հագիւ չորս տարեկան էի երբ ան մեռաւ:

Գաթարի դէմքը թթուեցուց ու պատասխանեց.

— Աշխարհ գիտէ, որ այդ պառաւը ցնդած է: Հետն ալ տարիներէ ի վեր չխօսելուս՝ կ'ատէ զիս: Գիտմամբ ատանկ կ'ըսէ: Ամէն մարդ գիտէ, որ դուք ինձի, մինակ ինձի կը նմանիս: Ո՛չ հօրդ, ոչ ալ հօրդ կողմէ մէկուն կը նմանիս: Վերջապէս, կը կարծեմ որ, եթէ չեմ սխալիր, ծնած ես ինձմէ:

Անժելիֆ մօրը վրդովու՛մը տեսաւ, ու կեղծ անտարբերութեամբ առարկեց.

— Բայց, մամա, աս ինչ տեսակ բան է: Շատեր խօսք մէկ ըրած են՝ զիս հօրաբո՞ջս նմանցնելու: Քանի՞-քանիներէ լսած եմ, որ հօրաբոջս կը նմանիմ: Կարելի է քեզի նմանելով՝ անոր ալ կը նմանիմ: Հերմինէ հօրաբոջս կարծեմ լուսանկար մը ունէր: Կրնա՞մ տեսնել այդ պատկերը:

— Այո՛, ունէր: Չեմ գիտեր թէ ո՛ւր է: Վաղը միւս օր կը փնտռեմ, կը գտնամ...

Անժելիֆ ա՛լ չխօսեցաւ այդ լուսանկարը տեսնելու մասին: Գաթարի ալ գտնելու եւ ցոյց տալու խնուումը չկատարեց:

Անժելիֆ լաւ նանչցած էր իր «մամա»ն:

Գաթարի առեղծուածային կը գտնէր իր աղջիկը, որ ա՛լ չի հետաքրքրուիր Հերմինէի լուսանկարով:

Անժեղիք ամէն բան պատմեց հօրը, որ տուաւ հետեւեալ խորհուրդը.

— Մայրիկդ որքան կեղծ յառաջդիմական, նոյնքան ճշմարիտ յետադիմական է: Չափազանց աւելորդապաշտ է, ու կը հաւատայ ոգիներու եւ ուրուականներու: Եթէ ես քու տեղդ ըլլամ, լուսանկարը տեղէն կը հանեմ, ու սեղանի մը վրայ կը դնեմ: Մայրդ նախ պիտի կասկածի ինձմէ: Ես կընամ մեծ երդում մը ընել, որ ես մէջտեղ հանած չեմ քոնջս լուսանկարը: Կը յայտարարեմ. — «Քրոնջս հոգին է, որ խոսովուած է, իրեն հանդէպ եղած փոքրագուրեմէն, ու ընդվզած՝ մէջտեղ հանած է իր պատկերը: Աս ըրածը նախանշան մըն է կընայ ուրիշ ծանր բաներ ալ ընել...»: Մայրդ շատ պիտի վախճայ ապագայ պատիժէ մը, ու այդ վախը պիտի ըլլայ իր պատիժը:

— Հապա եթէ լեղապատառ ըլլայ...

— Կընայ ըլլալ. մայրդ երկու բանէ միայն կը վախճայ, — մուկէ ու մեռելէ: Եթէ լեղապատառ ըլլայ, քաշելիք կ'ունենանք: Հրածարիմք ատկէ: Բայց, վերջապէս, բան մը ընելու է, լուսանկարին հանդէպ ունեցած իր վարձոց վերաբերումին համար: Միշտ նախանձած է հօրաբոյրէդ: Նոյնիսկ կը նախանձէր անոր երեք տարի պոտիկ ըլլալուն համար իրմէ: Ուշ ծնած ըլլալուն կը նախանձէր, շուտ մեռնելուն համար կը կարծէի, որ նախանձելէ պիտի դադարէր: Մինչդեռ Հերմիներն այնքան ներողամիտ, այնքան ազնիւ էր իրեն հանդէպ, այնքան բարի...

Անժեղիք յայտնեց իր որոշումը.

— Մամա կընայ հօրաբոյրն *ակրանտիսըմանը* պատառ-պատառ ընել, ու ազբամանը նետել: Արդէն կը գարմանամ միեջեւ հիմա ըրած չըլլալուն: Պատկերը պիտի առնեմ ու պիտի պահեմ գաղտնի տեղ մը, կղպանքի տակ: Եւ երբ օր մը ամուսնանամ ու առանձին տուն ունենամ, պատէն պիտի կախեմ, քովն ալ դնելով մօրս ակրանտիսըմանը:

— Մայրդ այդ ըրածդ տեսնելուն պէս՝ կը մարի, կ'իյնայ: Առաջուց ատ սենեակին մէջ *օ սը քոլոն* պատրաստէ:

— Եթէ մարի, ես ալ լոյսը կը վառեմ, ու զինքը տեղը կը նստեցնեմ: Ձէի լսած, որ մեռել հալածող ալ կը գտնուի մարդոց մէջ:

— Քոյրս մեռաւ, բայց մօրդ նախանձը չմեռաւ: Հա՛, լաւ յիշեցի. տարիներ առաջ, օր մը, Մարտիրոս

Աղբարը, մօրդ ներկայութեան, քոքս պատկերին նայելով՝ ըսաւ.— «Օ՛, ի՛նչ քաղցրութիւն, ի՛նչ նրբութիւն: Եթէ նկարիչ ըլլայի, Հերմիտէին դէմքով Մայր Հայաստան մը կը նկարէի»: Հետեւեալ օր, պատկերը վար առնուած էր պատէն: Վար առնուածը կը նմանէր Մայր Հայաստանին, իսկ վար առնողը Հայաստանաէր մըն էր...

— Ա՛հ, սա կիները, սա նախանձստները...

— Յառաջդիմական կիներն ալ...

— Յառաջդիմական են նախանձի մէջ:

— Բայց կենկցու մըն ալ դուն ես:

— Որչափ բախտուոր են սա խայտառակ տղաքը, ազգիկ ծնած չըլլալուն համար, թէն անոնց մէջ ալ կենկներ չեն պակսիր:

Երեկոյ մը, կանուխէն, ըստ որոշուած ժամադրութեան մը, Եդուարդ գացած էր Մամասեաններուն, որովհետեւ գանձի պիտի առաջնորդէր նախ հաշարան, ապա՝ ֆրանսական ներկայացման մը, որուն տոմսերը օրեր առաջ գնած էր:

Եդուարդ գտաւ Գաթարինը կազմ ու պատրաստ, որովհետեւ ժամեր առաջ, ան գործի լծուած, եւ լրացուցած էր գեղեցկանալու գործողութիւնը, եւ դարձած էր քազուհի Օփերէթիայի:

Գաթարիի տրամադրութիւնը արդէն բարձր էր ու աւելի վերելակեց Եդուարդին ներկայութեամբ, ու անոր բաժակակիցը ըլլալով ախորժաբերի, մինչ ձայնասփիւռէն, որ մեղմօրէն բացուած էր, կ'երգէր երգչուհի մը, եղանակներով սիրոյ:

Գեղամ նոր վերադարձած ըլլալով վաճառատունէն, զբաղած էր ածիուելով ու հագուելով:

Անժելիք ալ կը զգեստաւորուէր, ու իր գեղեցկութիւնը կը կարկառէր հայելիին դիմաց:

Երբ կանանց հագուելուն ու սփռելուն խօսքը եզաւ, Գաթարի ըսաւ.

— Ազգիկս, մէկ այս խնդիրին մէջ, ինձի պէս չէ: Արագաշարժ է: Է՛, ան թէ՛ երիտասարդ է, թէ՛ շատ գեղանի: Բազմաթիւ շնորհներու տէր է Անժելիքս:

Հետզհետէ Գաթարի քացիկցաւ, եւ ըմպելով ու ծխելով՝ մտաւ արբեցութեան մը վարդերանգ ամպի մը մէջ, ու սկսաւ գովաբանել իր դուստրը.

— Ամէն տեսնող, ըլլայ այր կամ կին, կը հիանայ ազգկանս գոհար աչքերուն ու կը գովէ, կը գովէ: Ան-

շուշտ աղջիկս միայն իր աչքերով չէ, որ գեղեցիկ է: Իրեն չափ քանի մը գեղեցիկներ կարելի է գտնել աշխարհի մէջ, բայց կը կարծեմ, թէ իր աչքերուն պէս կախարդող աչքեր կարելի չէ գտնել: Միայն դուք էք, որ մինչեւ այսօր բան մը չըսեիք, գեղեցիկ աղջկանս գոհար աչքերուն համար:

— Տիկին Գաթարի, երբեմն արտակարգ հիացումները կը համբացեն մարդս: Կուսիւններ կան, որոնք հիացումին բարձրագոյն արտայայտութիւններն են: Մարդ կրնայ բերանը բաց, բայց անխօս մնալ սքանչելիքի մը առջեւ: Բառ չի գտներ նկարագրելու, ներբողելու:

— Իրաւունք ունիք: Ձեր բացատրութիւնը գոհացուցիչ է: Վստահ էի, որ դուք գեղազէտ էք: Սա ալ աւելցնեմ որ, շատերէ լսած եմ, որ ճիշդ ինծի կը նմանի աղջիկս:

— Անուրանալի կերպով բացառիկ, տպաւորիչ գեղեցկութիւն մը ունին օրիորդ Անժելիին աչքերը, եւ անվիճելի կերպով ձեզի կը նմանի իր ամբողջութեամբ: Մարդ թէ՛ կը վերանայ, թէ՛ կը վախճայ օրիորդ Անժելիին աչքերէն: Ան ի՞նչ խաղեր ունի: Հոգիներու ալեկոծութիւն, խոսքիւն կու տայ: Կը շանթահարէ, խոքապէս կը խոցէ, կրնայ մինչեւ անգամ մահացնել:

— Այդ նշմարութիւնը ես ալ ըսած եմ աղջկանս, որ ինծի կատակով պատասխանած է.— «մամա, եթէ մահացու աչքեր ունիմ, միւս կողմէ ալ կեանք տուող շրթունքներ ունիմ: Ատկէ գատ ալ, բարեսիրտ եմ: Երբ տեսնամ, որ մէկը աչքերու ֆլէշներէն գէշ կերպով վիրաւորուած է ու կը գտնուի հոգեվարքի մէջ, կ'երթամ ու կը համբուրեմ զինքը, ու կը փրկեմ մահամեծրը»: Ի՞նչ կ'ըսէք իր գրասիրտ վերաբերումին:

— Կ'ըսեմ, թէ վերաբերումը բարեգործական է ու բժշկական: Միայն կը վախճամ, որ օրիորդ Անժելիի համբոյրը պատճառ ըլլայ, որ վիրաւորը վառի ու մոխրանայ:

— Օ՛, այդ պարագային, աղջկանս բարեսիրական բժշկութիւնը կը շարունակուի: Մա՛նաւանդ՝ երբ զարնուած անձը ըլլայ ձեզի պէս համակրելի:

— Ուրեմն օրիորդ Անժելիի տարօրինակ *տոբ-թոր* մըն է: Թէ՛ կը հարուածէ, թէ՛ կը համբուրէ: Թէ՛ կը մեռցնէ, թէ՛ յարութիւն կը պարգեւէ:

— Կը բժշկէ, առանց դեղի: Վիրաբուժական գործողութիւն կը կատարէ, առանց ներարկումի ու

նշոյրակի: Ու կը պարգեւէ վիթամիտներ, արեան կարմիր գնդիկներ ու քաւորի:

— Եւ անշուշտ ձեր ազգկան բժշկական հրաշագործութիւններուն սպասողներ կան...

— Բայց լսեղն ազգիկս ո՞ր մէկուն հասնի...

— Պէտք է մէկը իրեն հասնի, ու ամուսնանալով բախտաւորուի, օձիքը ազատելով մահամերձներէն, հագեցվարքներէն, ու ամէն տեսակ վիրաւորներէն:

— Ա՛հ, Աստուած լսէ ձեր ձայնը: Իմ միակ փափաքս ալ ա՛յդ է արդէն: Երանի՛ ազգկանս արժանի մէկը իր ձեռքը խնդրէ:

— Ի՞նչ տեսակ մէկը արժանի կը նկատէք ձեր ազգկան...

— Դժուար է ըսել: Բայց, է՛ն առաջ, ըլլալու է ներկայանալի: Կազմուելու է գոյգ մը ներդաշնակ: Ըլլալու է պրոլետարի պէս աշխատասէր, պուրժուայի պէս շահող եւ արխատոկրատի պէս ալ նուրբ:

— Պուրժուա՞, արխատոկրա՞տ...

— Բայց յառաջդիմական պուրժուա մը:

— Անհոգ եղէք: Եթէ կատարեալ պուրժուա է, ուրեմն կատարեալ ալ Հայաստանասէր մըն է:

— Շատ ճիշդ՝ ըսիք:

— Սանկ ու մանկ մարդիկ են, որոնք Հայաստանասէր չեն եղած: Բայց պուրժուաները թէ՛ համայնավարասէրներ, թէ՛ Հայաստանասէրներ, թէ՛ էջմիածնասէրներ են: Ձեզի կը մնայ գործը այնպէս մը կարգադրել, որ ձեր ապագայ փեսան՝ նուիրատուութիւն մը ընէ էջմիածնի, եւ ստանայ կաթողիկոսական կոնդակ մը օրինութեան:

— Ա՛հ, ի՞նչ գիւտաւոր մտածում: Գեղեցիկ ազգկանս՝ գեղեցիկ աչքերուն շափ գեղեցիկ գաղափար մը տուիք: *Մեռսի*: Բայց չմոռնամ. պայման մըն ալ ունիմ փեսացուիս համար: Փեսացուն եւ շատ սիրելու եմ, անոր տալու համար ազգիկս:

— Բայց ձեր փեսացուն առաջին անգամու առաւելապէս ձեր ազգկան կողմէ սիրուելու է:

— Իմ սիրածս՝ ազգկանս սիրածն է՝ ազգկանս սիրածը՝ իմ սիրածս է:

— Չըսէ՞ք, որ կատարեալ գոբանչ մը պիտի ըլլաք:

— Օ՛, ատոր վստահ եմ: Ազգիկս առանց ինծի չի կրնար ըլլալ: Փեսաս ալ առանց ինծի պիտի չկրնայ ըլլալ: Ես ալ առանց ազգկանս ու փեսիս չեմ կրնար ըլլալ:

— Հապա եթէ ձեր ապագայ փեսան հետաւոր երկիր մը հաստատուած է:

— Ատիկա չարիք մըն է, որ իր առաւելութիւնները ունի: Կարօտը կրակ է: Տարի մը անոնք կ'այցելեն ինձի, տարի մըն ալ ես կ'այցելեմ անոնց: Այսպէս, ամէն տարի իրարու կը միանանք, կարօտի կրակներով: Ես ու աղջիկս այնքան սիրով ենք, այնքան նման ենք իրարու, թէ՛ մարմինով, թէ՛ մտքով, թէ՛ նաշակով:

Եղուարդ կեղծելով կը հեզներ: Ու ըսաւ.

— Երբ առաջին անգամ տեսայ ձեզ ու ձեր աղջիկը, կարծեցի երկուորեակ բոյրեր:

Այս խօսքը տասը բաժակ ախորժաբերէ աւելի արբեցուցիչ էր: Ու Գաթարի պոռթկաց.

— Ճշմարտութիւնը տեսնող ձեր այժերը սիրեմ: Հազար ապրիք: Յաւիտեան պիտի չմոռնամ ձեր այդ աննման նմանութիւնը: Կ'արժէ, որ գնահատութիւնս յայտնեմ, համբուրելով ձեզ...

Ու Գաթարի ոտքի ելաւ եւ շուտով կերպով մը ստուգելով, որ եկող չկայ, համբուրեց Եղուարդը երկու այտերէն, իր շրթներուն ամբողջ ուժովը:

Եղուարդ մտովի ըսաւ.

— Հին միջնաբերդը ներսէն գրաւուած է:

Ապա, հարցուց.

— Եթէ ձեր փեսան՝ ձեր ուզածին պէս մէկը ըլլայ, զայն Հայաստանի չափ պիտի սիրէ՞ք...

— Եթէ ուզածներս ինքնաբերաբար ընէ, պիտի սիրեմ Հայաստանէն ալ աւելի:

— Երանելի՛ փեսայ...

— Ըսիք բուն բառը: Այո՛, երանելի՛...

— Ուրեմն իտէալ փեսայ մը բաւական է, ջախջախիչ պարտութեան մատնելու համար Հայաստանն ալ, Հայաստանասիրութիւնն ալ:

— Լաւագոյն Հայաստանասիրութիւնը՝ շատ լաւ, ամէն կերպով կատարեալ փեսայ մը ունենայն է:

Վրայ հասաւ Գեղամ, հագուած-սփուած: Եւ ժպտելով՝ բաժակ մը ախորժաբեր լեցուց իրեն, ըսելով.

— Մենք ալ ծառան ենք Աստուծոյ:

Սկսան տափակաբանել այր ու կին:

Եղուարդ ծխիկ մը վառեց եւ մտածեց.

— Կիներ կան, որոնք պուտ մը բանականութիւնով բռնակալներ կը դառնան, երբ չեն սիրեր: Իսկ երբ կը սիրեն, այդ պուտը կամ կուտը կը կորսնցնեն ու

կը վերածուի՞ն գերիի կամ սիրոյ մուրացկանի: Եւ տա-
կաւի՞ն կը կարծեն, թէ մնացած են թագուհի:

Յանկարծ, լոյս մը ծագեցաւ սենեակին մէջ:

Անժեւի՞քն էր, որ մուտք գործած էր, իբրեւ իտէլայ
իշխանուհի:

Այո՛, թարմագեղ իշխանուհի, իրականներէն շատ
աւելի, քանի որ բազմաթիւ են կեղծերը, չիշխանուհիներ-
ըը, նոյնպէս չիշխանները:

* *

Երեկոյ մը, Եդուարդ ու Անժեւի՞ք միասին
ունկնդրած էին նուագահանդէս մը:

Կէս գիշերին, Եդուարդ առաջնորդած էր Անժեւի-
քը, մինչեւ բնակարանին դրան առջեւ:

Քաժնուէլէ՛ առաջ, պահ մը կանգ առած էին:

Կեցած էին ձեռք ձեռքի:

Լեցուած էին իրարմով: Յուզումը կը յորդէր
սնունց աչքերէն:

Մնացին պահ մը իրարմով ակնահար:

Երկու գոյգ հայու ազուոր աչքեր, սիրով լի:

Անժեւի՞քին աչքերը գիշերային լոյսին ներքեւ կը
փողփողէին գունագեղ գոհարներու պէս, արձակելով
սեւ, կապոյտ ու մեղրաթոյր ճաճանչներ:

Երկուքին ալ աչքերուն վրայ կը մարմրէր մեղա-
մաղձոտութեան մշուշ մը:

Աչք աչքի մնալով՝ հոգիով հաղորդուած, համ-
բուրուած էին:

Եդուարդ իր մմբողջ խոստովանութիւնը ամփո-
փեց մէկ բառի մէջ.

— Անժեւի՛ք...

Անժեւի՞ք ալ մէկ բառով պատասխանեց.

— Եդուա՛րդ...

Եդուարդ կիսաձայն հարցուց.

— Այո՛, Անժեւի՛քս...

Ընդունեց պատասխանը.

— Այո՛, Եդուարդս...

Եւ երկու մեծ ալիքներ գանձնք իրար միացուցին,
շուրթ առ շուրթ...

Եդուարդ համբուրեց երկարօրէն, անյագօրէն:

Անժեւի՞ք ալ սանձագերծ սիրով համբուրեց

Եղուարդը, իր շրթները տեղափոխելով անոր շրթներուն վրայ:

Անհուն էր արբեցութիւնը Եղուարդին:

Անխորաշափելի էր արբեցութիւնը Անժելիֆին:

Եւ խենթերու նման՝ վերստին համբուրեցին զիրար:

Երբ պահ մը կանգ առին, Եղուարդ ըսաւ.

— Գիտես համբուրել հանճարեղ կերպով: Գիտես զիտութիւնն ու արուեստը համբոյրին:

Անժելիֆ վրդովուեցաւ եւ անկեղծօրէն պատասխանեց.

— Կ'երդնում, Եղուարդ, որ առաջին համբոյրս էր: Առաջին անգամն էր, որ կը համբուրուէի, կը համբուրէի: Կրնայ ըլլայ, որ գտնես անհատատալի: Հակառակ Փարիզի մէջ ապրելուս, Փրանսական շրջանակի մէջ ըլլալուս, բազմաթիւ հիացողներ ունենալուս եւ զգայուն ըլլալուս, ինչպէս նաեւ քանակազօրէն մէջ գտնուելուս, հաւատա՛, առաջին անգամ ըլլալով համբուրուեցայ...

Եղուարդ պատասխանեց.

— Հանդարտէ՛, Անժելիֆս, որովհետեւ կատարելապէս կը հաւատամ Քեզի: Գուն համբուրել զգիտես, որովհետեւ ծնած ես համբուրուելու կոչումով: Աս ալ տաղանդ մըն է, որ չէ տրուած ամէնուն: Ուրիշներ, անժառանգներ, եթէ տարիներով դաս առնեն համբոյրի, չեն կրնար հաւասարիլ անո՛նց, որոնք օ՛ժտուած են համբուրուելու հանճարով: Եւ այս այսպէս է, բոլոր ասպարէզներուն մէջ ալ:

ՄԱՐՏԻՐՈՍԻՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

(Հայր Բէրնոյին առջեւ)

Եղուարդ իր պանդոկին քարթը տուած էր Մարտիրոսին, ու փափաք յայտնած, որ օր մը, նախապէս հետախօսելով՝ ժամադրուի եւ իր մօտ գայ, որպէսզի քիչ մը աւելի պեղեն Հայաստանասիրութեան փորը:

Մարտիրոս խոստացած էր, եւ երեկոյ մը, երկուքը միացած էին, պանդոկին ըմպելարանին մէջ, սեղանի մը շուրջը, իրենց առջեւ ունենալով հեղուկ խոստովանահայրը, որ կը կոչուի Հայր Բէրնօ:

(Բերնոն ախորժաբեր ըմպելիներուն ամէնէն ան-
նականն է: Ունի երկու տեսակ արտադրութիւն, որուն
առաջինը կը կոչուի «Բերնո Փէր» — Հայր Բերնո —, իսկ
երկրորդը՝ «Բերնո Ֆիս» — Որդի Բերնո —: Դժբախտա-
բար, գոյութիւն չունի «Օրիորդ Բերնո» մըն ալ: «Հայր
Բերնո»ն հայր ըլլալուն, ինչպէս նաեւ զօրաւոր ալքով՝
կը համարենք խոստովանահայր, քանի որ կը բանայ
մարդուս լեզուն):

Իրարու որպիսութիւն հարցնելէ, ծխիկներ վա-
ռելէ, մէյ-մէկ ումպ բերնո ըմպելէ եւ քանի մը պիտակ
ուտելէ ետքը, Եդուարդ, որ իր կարգին խոստովանա-
հայր մըն էր, սկսաւ ուղղել հարցումները: Իր առաջին
հարցումը եղաւ հետեւեալը.

— Հայաստանասէրները ինչպէ՞ս կը հաշտեցնեն
հայրենասիրութիւնը եւ համայնավարութիւնը:

Մարտիրոս քմծիծաղով մը պատասխանեց.

— Համայնավար տեսաբանները գիտական
մարքսիզմով՝ հակայեղափոխութիւն կը համարեն ազ-
գայնութիւնը, ուստի չեղողին համար: Այդ պա-
րագան չի խրտչեցներ մեր Հայաստանասէրները, որոնց
հայրենասիրութիւնը դիմակի դեր կը կատարէ: Տակը
կայ համայնավարասիրութիւնը, որ որոշ չափով ան-
կեղծ է կարգ մը Հայաստանասէրներու մէջ: Անոնք հայ-
րենիքը կը սիրեն, համայնավար տիրապետութեան
տակ գտնուելուն համար: Իսկ համայնավարութիւնը
կը սիրեն, հակադաշնակցական ըլլալուն համար: Հա-
կադաշնակցութեան ալ փարած են, իբրեւ ազդեցիկ դե-
ղը փորացաւերու: Վերջապէս, Հայաստանասիրու-
թիւնը երկերես է: Մէկ երեսը հայրենասիրութիւն է,
միւս երեսը համայնավարասիրութիւն է: Երկու երես-
ներն ալ մէկ ջուրով կարելի է լուալ:

— Հայաստանասէրները ինչո՞ւ կատարի հակա-
դաշնակցականներ են:

— Ամէն անգամ, որ վարպետօրէն պեղած եմ
Հայաստանասէրի մը անցեալը, գրեթէ միշտ գտած եմ
նոյն բանը. — Անձնական խնդիր մը Դաշնակցականի մը
կամ Դաշնակցականներու հետ: Ապա, այդ անձնական
հարցը ստացած է զաղափարական գոյն: Անձնական
խնդիրներու համար դաւանափոխ եղողներ կան. կան
նաեւ զաղափարափոխներ: Հայաստանասիրութիւնը
կեղծիք մըն է, տեսակ մը ռիսկալութիւն: Բայց կայ
կեղծիք կեղծն ալ. — էլ միաժամասիրութիւնն է ան:

Մարտիրոս ումպ մը ըմպեց, մէկ-երկու պիստակ կերաւ, ծխիկ մը վառեց ու շարունակեց-

— Կայ հոգեբանական կէտ մըն ալ: Բոլոր այն հայերը, որոնք մասամբ իսկ չեն կրցած յագեցնել թշնամիին հանդէպ իրենց ունեցած վրէժը, կ'ուզեն յագուրդ ստանալ հարուածելով Գաշնակցականները:

— Հայաստանասէրները ի՞նչ կ'ըսեն սովետօթիւրք բարեկամութեան համար:

— Կ'ըսեն.— «Դիւանագիտութիւն»: Ու կը միտի-բարուին: Բարեկամս, հիմա թոյլ տուր, որ խորանամ խոստովանքի մէջ, ու քանի մը խօսով ցուցադրեմ իրողութիւններ, որոնք տեղի ունեցան Փարիզ, պատերազմի վերջին շրջանին: Գերմանիայէն հոս ժամանեցին Հայաստանցի ազգագրիներ, ոմանք երգի, պարի ու նուագի *անսամպլով*, ոմանք ալ անանց այդ խումբին մաս կազմելու, բայց միշտ երգով, պարով ու նուագով: («Անսամպլով» ֆրանսերէն բառ մըն է, որ գաղթած է եղեր Հայաստան: Հայ ազգագրիներուն շնորհիւ, այդ բառը, հայրենադարձի մը պէս, մտաւ իր երկիրը՝ Ֆրանսա): Մեր Հայաստանասէր տիկիներն ու օրբորդները ինկան ազգագրիներուն վրայ: Եղան միացողներ ու մեղանչողներ: Ռազմագրիներուն սիրոյ ազմական եռանդը բորբոքեցաւ: Հուրը հրահրեցին Հայաստանասիրուհիները: Պատուոյ դաշտէն ետքը, սկսան գործել պատուոյ պտղաստաններուն մէջ: Գրականցին, գրկեցին, գերեցին Հայաստանասիրուհիներ: Տեսակ մը գիրկընդիսռն սիրամարտ էր տեղի ունեցածը: Տեսակ մը սարսուհամարտ, փոխան սուինամարտի: Արդար ըլլալու համար, ըսեմ որ յանցանքը ազգագրիներունը չէր: Անոնք կրակէ կարօտը ունէին հայ տունի, հայ տանտիրուհիի, հայ սենեակի, հայ խուցի: Աւելի արդար ըլլալու համար, ըսեմ որ յանցանքը Հայաստանասիրուհիներունը չէր: Անոնք ալ կարօտը ունէին գուտ հայկական ու պատուական բաներու: Անգամ մըն ալ արդար ըլլամ ու ըսեմ, որ յանցանքը Հայաստանասէրներունն ալ չէր: Անոնք անկարող էին երկիր Դրախտավայրէն եկած Ադամներուն չցուցնել Եւանները: Ամբողջ յանցանքը Հայոց ձակատագրինն էր: *Նիչէֆօ*: Ահա այսպէս է, որ պատուոյ դաշտերէն ետքը, անպատուութեան դաշտերուն վրայ կատարուեցան քաջագործութիւններ:

— «Հայաստանասէր»ին ծայրը «սէր» կայ: Ու-

րեմն միայն խօսուով չէ, որ Հայաստանսէր են, գործով ալ են:

Մա՛նաւանդ՝ Հայաստանցիսէր են: Բայց մտքի ցաւալի ցաւագարութիւն չէ՞, երբ խու՛մք մը խեղճ խեղապատակներու տէրեր էլլեն ու իրենք գիրենք անուանեն «Հայաստանսէր», ըսել ուզելով, որ Հայաստանը չսիրող Հայեր ալ գոյութիւն ունին: Մինչդէռ իրենց սէրը շահախնդիր է նիւթապէս կամ բարոյապէս եւ կամ երկուքը միասին: Սիրելը տալ է: Մեր օրերու Հայաստանսէրները իրենց մտէն ու մարմինէն ի՞նչ տուած են Հայաստանին, ի՞նչ կրնան տալ, ի՞նչ ունին որ տան: Ես տուող չտեսայ, միայն առնող տեսայ: Ուրեմն շահու համար, վարկի համար կը սիրեն Հայաստանը: Մեր Հայաստանսէրները՝ մեր հայրենիքին ճիկուլներն ու ճիկուլէթներն են:

Եղուարդ տխրօրէն ժպտելով՝ ըսաւ.

— Եւ սակայն, Հայաստանասիրութեան ծառը, գոնէ Փարիզի մէջ, բաւական պտուղներ տուած է:

— Օ՛, այդ մէկը մտռայ, հակառակ անուրանալի ըլլալուն: Երբ Հայաստանասիրութեան ծառին ծաղիկները բացուեցան, ա՛յ յայտնի էր, որ պիտի ունենայինք պտուղներ: Ռազմագերիները ասպետօրէն թողուցին միրգերը մեզի:

— Ինչպէս կ'երեւի, Հայաստանասիրութիւնը հայրենասիրական ազանդ մըն է. տեսակ մը *նէօ-մու-հասպէթճիներ*: Եւ բոլոր ազանդներուն պէս ծուռիկ է: Իր հետեւորդներն ալ մոլեռանդ են: Կը կարծեն, որ իրենց հետ չեղողները ոխերիմ թշնամիներ են Հայաստանի: Զմոռնանք ըսել, որ Հայաստանի համայնավարացումէն առաջ, այսօրուան Հայաստանսէրներուն հայրենասիրութեան աստիճանաչափը գէրօ էր: Իսկ եթէ պատահի, որ օր մը, Հայաստան դադրի մաս կազմելէ Սովետական Միութեան, Հայաստանաւերներուն հայրենասիրական ջերմաչափը կրնայ իջնել գէրայէն վար յիսունի:

— Հայաստանսէրներէն գիտակից կամ անգիտակից հայրենասէրները անոնք եղան, որոնք հանդիսացան հայրենադարձներ: Մնացեալ մնացականները մրուրն են գինիին, ազգային տակառին տակաճէն են, ու ոչ մէկ պատճառաբանութեամբ չեն կրնար չմեղանալ:

Բերնոները նորուեցան եւ խոստովանանքին գուզերգութիւնը շարունակուեցաւ.

— Բայց ինչպէ՞ս եղած է, որ փարիզահայ հա-
րուստները եղած են ձախակողմեան, համայնավարա-
միտ: Ի՞նչ կ'ըսես, Մարտիրոս Աղբար...

— Երբ մարդ հարստացած է, կը նշանակէ, որ
գործերը յաջող գացած են: Յաջողութիւնը մարդու մը
աջ կողմին ծանրանալն է: Եւ երբ աջ կողմը շատ ծան-
րանայ, ծռիկ կը սկսի: Հաւասարակշռութիւնը պահելու
է՛՝ ձախ կողմն ալ բանով մը ծանրացնելով, որպէսզի
կարելի ըլլայ մնալ ուղիղ: Մեր հարուստներուն աջ
կողմը եթէ նիւթով ծանր է, ձախ կողմն ալ ծանրացած է
ծանր գաղափարներով: Եւ այդպէս, ծանրածանր կեր-
պարանք մը կ'առնեն, ու հակառակ իրենց ծանրու-
թեան, կը յառաջդիմեն: Կը դադրին հին գլուխներ ըլլա-
լէ: Կը ծառայեն թէ՛ սատանային, թէ՛ մամոնային, որ
մանրանկարն է Սաղայէլին:

— Բայց հարստացած մը իր ձախակողմը ծան-
րացնելու համար, ինչո՞ւ ընդունի ձախակողմեան գա-
ղափարներ:

— Զ'ընդունիր: Կը կրէ. ընդունած կը ձեւացնէ:
Գիշերները կը պարպէ, կը նետէ մէկ կողմ: Կարեւորը
այն է, որ իր հարուստ ըլլալու յետադիմութիւնը կը բա-
րեխառնէ յառաջդիմական գաղափարներով: Եւ կ'ըլլայ
խառնուրդ մը յետադիմութեան եւ յառաջդիմութեան,
պահանջին համաձայն, իր ուզած կողմը կարկառելով:

— Եւ երբ այդպիսիները իրարու ինչ գան, ի՞նչ
կ'ըսեն, ի՞նչ կ'ընեն...

— Կը ստեն, կը կեղծեն: Իրարու իրար կը խնդան,
ու մէկը միւսին համար մտովի կ'ըսէ. — « Ի՞նչ գարշելի
կեղծաւոր... »:

Մարտիրոս ու միւս մը բերնօ ըմպեց, ապա ծխեց ու
լռեց, մնալով խոհուն: Եւ երբ Եղուարդ հարցուց, թէ
ի՞նչ կը մտածէ, պատասխանեց.

— Խոստովանութեանս միջուկը հիմա պիտի
բանամ, քեզ քահանայի տեղ դրած: Եթէ բախտը ողորմի
իմծի եւ կիմս ինձմէ առաջ անդարձ հեռանայ աս աշ-
խարհէն, տունուտեղ եւայլն իմծի պիտի մնայ: Գիտե՞ս
ինչ պիտի ընեմ: Խնդրագիրով մը պիտի դիմեմ Գաշ-
նակցութեան, շարքային ընկեր դառնալու համար: Ահա
այն ատեն Մարտիրոսը Մարտիկ պիտի դառնայ, տունս
ալ ակումբի պէս բան մը պիտի ըլլայ: Տարին տասն ան-
գամ սեղան սարքեմ պիտի, ու Դաշնակցական խումբ
մը ընկերներու հետ պիտի ուտեմ ու խմեմ, որոտաձայն
երգելով հայ յեղափոխական եղանակներ: Իսկ Հայաս-

տանասէրները թո՛ղ լսեն ու պայթին: Շտուած է, որ այր մարդուն մահով տուն չի ֆանդուիր, տուն մը կը ֆանդուի կնոջ մահով: Բայց բացառութիւն պիտի ըլլայ իմ տունս, որ պիտի վերածաղկի կնոջս մահով: Ահա թէ ինչո՛ւ կը գուրգուրամ առողջութեանս վրայ: Կը վախնամ՝ սաստիկ ատելութենէս, որ կրնայ թունաւորել ու մեռցնել զիս: Յանախ կ'ըսեմ.— «Շո՛, անգութ ու անխելք Մահ, անգամ մըն ալ մարդավարի գործ մը տեսիր, եւ իմինէս առաջ ֆաղէ՛ աղտոտ հոգին մեզերայիս»:

Եղուարդ անգամ մը եւս լեցնել տուաւ Բէրնոյի բաժակները եւ ըսաւ.

— Սիրելի Մարտիրոս Աղբարս, բոլոր մեղքերդ ներուած են: Տէրն ալ թո՛ղ շնորհէ թողութիւն: Եւ սրտագին կերպով կը բարեմաղթեմ արեւշատութիւն, կատարեալ առողջութիւնով:

Մարտիրոս աւելցուց.

— Կայ ուրիշ լուծում մըն ալ: Կնիկս եղած մեզերան թո՛ղ Հայաստան ներգաղթէ, ես ալ ներգաղթեմ զէպի Դաշնակցութիւն:

(Շար. 1)

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

**ՊԱՐԶ ՔԱՂԱՔԱՑԻԻ ՄԸ
ԱՌՕՐԵԱՅ ԵՐԳԵՐԷՆ**

COLLAGE — ՈՒՐՈՒԱՆԿԱՐ

ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆԻՆ

Առաւօտուն

նիշդ ժամը վեցին
 երբ խոկացող գնդացիքները դարձեալ գեղգեղեցին
 դատարակապորտ շուները հաջեցին երազող աստղերուն
 որպէսզի կաղն ի կաղ արթննամբ ընդոստ
 արշալոյսը ահագանգող փամփուշտներուն հետ ապաժամ
 լուսամփոփի կողքին բաց մնացած գիրքին ջուրերով լուացուինք
 եւ մահնակալին տակէն մեր կայր կօշիկները դուրս քաշենք
 մախֆան որ տունէն փախուստ տան կրկին
 կամ մեզ առաջնորդեն մահուան քայլին

Զինեալներ եկան

պատուհաններէն պիշ-պիշ աչքերով
 կարմիր շառաչներ ներս արձակեցին
 հրացանաձգութեանց արշաւը շարունակուեցաւ
 մինչեւ ետինքի ժամն այս անհաւանական
 լուսինը մերժեց բարձրանալ սառած ամպերուն
 եւ երկարաձգուող շան կաղկամձին կշռոյթով
 մօտակայ թաղերէն մանր անցաւ

Մօրուսաւոր զինեալը ըսաւ

Քէ իրար անցնելու լուրջ պատճառներ չկան
 «եղածն ի՞նչ է որ արձան կտրած էք
 դուք կախումներու երգ համարեցէք
 մեր ընկերները ուր որ են՝ կու գան»
 սակայն

— ով գարմա՛նք գարմանաւորաշ —

սապալեցաւ մօրուսաւոր դժոխաբիբ հսկան
 երբ այրի դրացուհիս ոսկի ակոսան փայլատակեց

Եւ խարխլած մարմինը ճռնչաց հեշտախոռով
 Երկաթեայ առաստաղ մը իջաւ մեր գլխուն
 Քոֆախտաւոր աստղեր մերժեցին քնանալ
 հիւժախտաւոր լոյս մը միջոցը գրաւեց
 Եւ գայրոյթէն ուռնացած խմբապետը գոռաց
 «մարեցէ՛ք այս անհնազանդ յիմար կոյսերը
 թէ ոչ ձեր բոլորին մայրերը կը մարեմ»

Կմկմացող ֆայլերով
 մարդկային ուրուականներ
 ներս խուժեցին խոնար կիսապաստարանէն՝
 լուացարանի փրփուր-փրփուր օճառներուն մէջ մտոցած
 իրենց ձեռքերը
 իրենց դէմքերը
 Եւ անցեալը վկայակոչող ատամնաշարերը
 «այս անմիտ լուսինը ինչպէ՞ս պիտի աւլենք»
 աղաչեց կառքը փախցուցած ծեր աղբահաւաքը
 «ասոր փոփէր կ'ըսեն» ծիծաղեցաւ լուկեաց խաղամուր
 Եւ խօսքը մնաց կախուած օդին մէջ՝
 պարանէն առկախ չոր պղպեղ-սմբուկներու շարոցներուն պէս
 երբ խայտառակ փամփուշտ մը սուլեց սարսափածայն
 հասաւ իր ճօճաթռոփն վրայ գոռոզացող եագարապետին
 ուսերէն վար թափեց շատոնց հանգստեան կոչուած
 աներեւոյթ աստղերն ու գովացուցիչի կափարիչները
 «աման աստուած»՝ ճչաց եղունգները ներկող դրացուհիս
 ամէն մարդ սարսափած անկիւն մը կծկուեցաւ
 միայն մանուկները ներս-դուրս վազվզեցին
 Եւ վերադարձան ճռուողելով թէ գիտէ՞ք
 դուրսը ձիւնը կ'իջնէ կարմիր - կարմիր
 ամբան այս տաք Եւ անսպասելի եղանակին
 թերահաւատ բայց բոլորս ալ ուրախացանք
 Եւ իրարու ետեւէ դուրս նետուեցանք
 հաւաքական գերեզմանափոս կիսապաստարանէն
 գարմացական մեր աչքերէն կայծեր փայլատակեցին
 շուներն ու թնդանօթները ուժգին կաղկանձեցին
 սարսափահար զինեալները նետուեցան գետին
 Եւ մինչ այդ մրափոզ պառար սկսաւ կրկնալ
 «երանի՛ր մեծ հայրըս մեռած չըլլար
 նմանը չունեցող ձիւնի պէս ներմակ մազեր ունէր
 որոնք երբեմն մինչեւ աստղեր կ'երկարէին»
 բայց կիսամութին մէջէն խիստ ձայն մը շաչեց
 «լո՛ւ՛ յիմար ան քիչ առաջ սափրիչի գնաց
 որ երկինքը ձիւնէ ներմակ-ներմակ հայեոյանքներ
 շուները լուսափայլ վերարկուներ հագուին
 Եւ թնդանօթներուն կարմրած փողերն ալ պազին»

Պէյրուք, 15 Օգոստոս 1989

ԱՄԷՆՈՐԵԱՅ ԽՈՒՃԱՊ

Կէս գիշերին
 երբ կը սկսի երգչախումբը ուումբերուն
 ամառանոցներու շիկածայն կղմիւտքներուն
 եւ շէնքերը ակամայ կը դառնան
 խորտակման խեղանդամ յուշարձաններ
 կը բանամ դռնակը գերեզմանիս
 գաղտագողի կ'ելլեմ դուրս
 ուրուականներու քայլերով դողողոջ
 եւ գգեստներով որ մեռելներունը չեն
 կը թափառիմ
 կը թափառիմ
 եւ դարձեալ կը թափառիմ
 վիրաւոր շիրիմներուն միջեւ
 սպասելով որ իմ օրերը ծագին
 իշխանուհիիս կիսաքանդ պատշգամէն

Կէս գիշերին
 ճիշդ կէս գիշերին
 երբ կը լռէ երգչախումբը աստղերուն
 կը խաւարի լռյսը պատուհանիդ
 ստուերըդ կ'իյնայ սրտիս մէջ
 եւ լարերը սրտիդ կը ճարճատին
 շարականներ ծնունդի
 սգերգներ գայութեան
 տնօրէն շիրիմներուն
 հառաչը շէնքերուն
 անկումը ստուերիդ
 կէս գիշերը
 լռութիւնը
 եւ...

ճիշդ անճիշդ կէս գիշերին
 երբ շղջիկներ կը բզկտեն մարմինը գիշերին
 երբ ուումբերու աղմուկին կ'արձագանգեն բուեր
 երբ ափաղաղը կը կանչէ սարսափահար
 իսկ թոճերս ալ կը դառնան ծուխ ու կապար
 արտորանքով կը հաւաքեմ բեկորները մարմնիս
 եւ կը մտնեմ գերեզմանէս ներս
 ...գգեստներով հարսանեկան

Պէրուք, 6 Փետրուար 1990

ԱՆՀԱՄԱԶԱՓ ՏՐՈՓՆԵՐ

I

Ակնթարթը
չունի իմաստ
այս լռութեան հետ մահաբեր

Կը մարեմ սիկարէթը վիշտերուս
դեռ մխացող մոխրաման որտիս մէջ
եւ հայեացքներն իմ համեմ
պատուհանիդ առկայծող սիրտ-ճրագին կ'աղեղեմ

Շոգ մը դայուկ
միակ նշանն է վաղուան

II

Ժամանակը
չունի իմաստ
ոչ ալ արժէք կամ սահման
սարսափահար ահադադի
այս կանչին հետ անժամանակ

Կը գգուեմ մահինը մահուան
եւ կը մտնեմ
եւ կը մտնեմ
ծէսերէն ներս յուսախաբութեան

Պէրուք, 13 Փետրուար 1990

ՀԵՇՏԱՆՔԻ ՆԱԻԹԱՀՈՐԵՐԸ

Կայծ տա՞մ
հեշտանքի նախահորերուն
մարմնիս մէջ
որուն տերը ա՛լ ես չեմ

Կրթ օղբ կը ծանրանայ մահագոյն նեններահռուով
 Եւ դառնահամ ժանգափոշիով
 որոնք կռկորդրս կը խեղդեն
 կը խեղդեն
 կը խեղդեն

Պէրուք, 8 Մարտ 1987

ԲԱՄԲԱՍԱՆՔ

Վարդին համար են պատշգամները
 — ո՞վ կը հասկնայ լեզուն ծաղիկին
 — իշխանուհիս եւ քերթողը

Մարմնին համար են կոյր փամփուշտները
 — ո՞վ կը գգայ ջերմը մահացող մարմնին
 — վիրաւորը եւ արեւը

Պէրուք, 8 Մարտ 1987

ՄԵՂՄԱԶԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

— Ո՞ւր են վարդը եւ փամփուշտը
 — բանաստեղծին ջարդուփշուր գանկին մէջ

— ո՞ւր է էգը հեշտամփնեբուն
 — պատշգամէն վար կաթկթոզ կարմիր արեան
 ամենագոր բոյրին մէջ

— իսկ տեսլահար բանաստեղծը
 — բառերուն մէջ որ կը մեռնին
 կը մեռնին եւ կը մեռնին սիրուհիին փոխարէն

Պէրուք, 9 Մարտ 1987

ՃԱՄԲԱՆԵՐ/ՊԱՏՇԳԱՄՆԵՐ

I
 Ճամբաներ
 ուրիշ կը գողթէ
 ջերմութիւնը ոտնահետքերուն

ու կը թազուի հեռաւոր ամերուն
 ախարավայր սրտին մէջ

Նոյնպէս
 կը գաղթէ հոգիս
 երազներու երկնակայոյտ բոցերուն
 ու կը տեղայ թախիժը աստղերուն
 դրախտավայր սրտիս մէջ

II

Պատշգամներ սիրելի
 օրօրոցներ կայոյտ-կայոյտ երազներու երբեմնի
 ատելութեան փոշիներուն տակ կը թազուին
 եւ իրենց հետ
 դեռ չծաղկած հազար սէրեր

Պատշգամներ անցեալի
 լուսօրեան հետ կու գան փուլ
 կ'ըլլան սարսափ եւ աւեր
 եւ դագաղներ - դագաղներ
 մեկնումի եւ կարօտի
 կիսալուսն երգերուն

Ատելութեան փողոցներուն
 գինեալներու ներբաններուն տակ կոպիտ
 կը ճգմուին սիրերգները մանուկին
 եւ աստղերուն վերամբարձ

Պէտքը, 10 Փետրուար 1990

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

I

Կէս գիշերին
 երբ լուսօրեանը կ'այրէ յիշողութիւնն իր՝
 ինչպէս յիշատակի կայոյտ խունկ
 մնջեցեալ դէմքեր
 — անընթեռնելի մագաղաթներ —
 կը գրաւեն սրտիս պատուհանին
 փոշեծածկ ապակիով

Կը կարդանք պաստառը փոշիին —
անցեալին յամեցող

Եւ դէմքերը կը ձուլուին անհետք
գիրենք սպասող հորիզոններուն

II

Գողգոթաներ կ'ակօսեն
տափաստանները ցաւի
Եւ երկինքի կննիւնները մտատանջ

Ննջեցեալները
կը տնօրէն անձայն
գիշերները մեր բառերուն անձեւակերպ
Եւ կը մանեն խաւարն իրենց

Փռչի համայնակուլ
Եւ յարաշարժ

Անձանօթ ձեռքեր
կմախփ — կմախփ կ'երկարին
մեր կանքեղներու կայայտ խօսքերուն

Տննդահար քայլեր
կը յուշեն ներմակ փռչի յաւերժի
ստուեր առ ստուեր
իրենց ստուերին

Հրեշտակներու փետուրներու պէս՝
ննջեցեալներու դէմքերը պայծառ
կը ջնջեն կեանքի փռչոտ ապակին—
հռհռոցներու դաժան հայելին
Եւ կը ծաղկին ծիածանը ծնունդի

Պէյրուք, 21 Մարտ 1986

ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

Եթէ աստղ մը մարի
նշան է դժբախտութեան
Եթէ ծառ մը տապալի

ողբերգութեան
 իսկ եթէ ասուպ մը թառի դէմքիս
 մահուան
 որովհետեւ
 մայրամուտն իմ լարեցի
 արշալոյսին ուղղութեամբ
 եւ մեկնեցայ անհեթեթի կզգիներուն
 Պէրուք, 19 Մայիս 1988

ԱՆԿՈՉ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Երկրագունդին մոռցուած կայարաններէն
 սեւ-սեւ կառէր կ'այցելեն
 բեռնաւորուած ողբերգութեան հակերով
 տիրութեան թզրածրարներուն անուններով
 եւ սիրոյ խրախնամներուն բորբոսած փշրամբներով

Երկրագունդին կիսաբանգ կայարաններէն
 կ'այցելեն հին-հին կառէր սեւանուն
 մինչ ցերեկը —
 ծուռ հայելիներու շուկան
 պատ է ծաղկած պէտք եղածէն աւելի —
 ինքանդամ գիծեր եւ սառած աչքեր
 որոնք կ'իյնան ամպեր ինչպէս՝
 առանձնութեան անպատի աւազներուն
 Պէրուք, 19 Մայիս 1988

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՊԱՏԿԵՐ

Լեռներու կատարներուն
 ամպ մը գուարթ կ'աւտոստէ
 եւ կը շարժէ բեզմնափռոյն ժամանակի

Փեթակներէն երանութեան
 կը բարձրանան հարսնետր մեղուներ
 եւ միջոցը կը լեցուի
 խայտանքով մը անիրական

Խրտուիլակի կոյր աչքերու հայեացքներով
կը մաքրեմ փոշիները տառապանքի փշալարերուն
եւ այգիէն ներս կը հրաւիրեմ
սոխակները սիրերգակ

Եթէ մանուկ ըլլայի
ամպն այդ գուարթ եւ անպայման կը բռնէի
կը նստէի իր լուսազարդ ցահին վրայ՝
հեփաթներու իշխան ինչպէս
յետոյ կը հրահանգէի բարակներուն
— հաջեցէ՛ք ընկերներ
...որպէսզի թռչիմ

Պէրուք. 18 Օգոստոս 1985

ԱՂԵՐՍԱՆՔ

I

Տուր ինձի կտոր մը
ծովափին վստահուած հագուստէդ
կամ տուր ինձի կանգուն մը պատանփէդ
որ աչքերէ մթաստուեր մարմինն իմ լոյս անթեղեմ
երկինքներու մէջ մերկ
որոնք դանդաղ կը դալկանան
երկինքներու մէջ մերկ
որոնք դժուար արիւն կու լան
երկինքներու մէջ մերկ
որոնք կրակ կը թաւալին
կը թաւալին անվերջ մոլորակներն ողբերգութեան
եւ իրենց հետ սեւ դրօշներ կը ծածանեն
երկինքներու երկինքին մէջ

Մ'անուկ
որ կը փայտ խաղաղ
հեփաթներու եւ հրաշքի ջուրերուն վրայ
երբ մենք միայն ֆայլ կը նետենք տիղմերու մէջ
ինչպէ՞ս կ'ուզես որ քեզի հետ ֆայլ պահենք

II

Գուցէ այսօր սրճարանը հանդիպինք
 կամ ամպերու դարպասին զիբար ուրախ ողջունենք
 մէկ-երկու բառ փոխանակենք եւ հարցնեմ ալ քեզի
 — ի՞նչ է գինը ներումին մեր չգործած յանցանքին
 բայց յանկարծ
 նուաստացման նոր անցքերուն վրայ
 դէմքդ տեսայ նահատակներու դէմքերուն
 բայց յանկարծ
 ստորնացման նոր անցքերուն վրայ
 դէմքդ փայտակեց աստղ-դէմքերու հոյլին մէջ
 եւ մեր գլխուն տեղաց տառապանքի անձրեւ

Ո՛վ իմ մանուկ աստուածադէմ
 որ մեզի սորվեցուցիր գալուստը նահատակներուն
 ըսէ ինչպէ՞ս նուանենք պսակները ինչ վերին
 որ արժանի ըլլանք մենք միայն փառաց պսակին
 առանց շարժելու ձեռքերն մեր անուժ
 առանց յանձնուելու ծովերու կամփին

III

Թռչուններ ոսկեքերան մեզ արձակեցին
 լինելուքեան երկինքներուն մէջ պար եկող ամպերուն
 բայց սուրոցը ռումբին մեզ բաժնեց մեր մարմնէն
 եւ դարձեալ տիրեց օրէնքը անտարին

Ո՛վ գրօշներ խաբեբայ
 ա՛լ հեռացէ՛ք մեր աչքերէն
 որ մերը չեն
 որ մերը չեն

Հայկպ. 27 Փետրուար 1990

ՍՊԱՍՄԱՆ ՊՂՊՋԱԿՆԵՐ ՈՐՈՆՔ ՄԻՋՈՑԸ ԿԸ ԳՐԱԻԵՆ

Սպասում —
 քայլերուն որոնք կ'օղակուին տասը ճանապարհներէ եւ
 տասնեակ վայրերու մէջ գորդեան հանգոյցներ կը ցուցադրեն

դուռներուն որոնք կը փակուին տասը ազազակներէ եւ բազմատասնեակ սրտերու մէջ սարսափի հրդեհներ կը ճչան

պատուհաններուն որոնք շարունակ փախուստ կու տան իրենց մարմիններէն եւ կը նախընտան զէպի փարթամ հիւրասրահներ կամ հայելիներ / գողեր կամ թզուկներ որոնք արարման հաճոյքը կ'ապրին կրկններու կամ բռգանոցներու մէջ / տարտղնելով գոյքերն ու դիմակները եւ իրար խտնելով նառագայթները թիթեռնիկին եւ ֆարձերը ցնդած ֆանանային / երանգները գեղուհիին եւ ստուերները նորափետուր բանաստեղծին / փակուած սրճաբանի ծուռ դարձած սեղան-աթոռներուն կամ ալ օժիտի սնտուկներուն մէջ մրափող գոյնգոյն հագուստներուն վրայ / որոնք պատրաստուած են դիմաւորելու իրենց յապաղող բացակայութիւնը միայն / եւ բացակայութիւնն այս կը փոխանակեն ծովէն նոր դուրս ելած քարմ ձուկի պէս / որ ձեռքէ ձեռք եւ գրպանէ գրպան կը պատի ու յանկարծ կը դառնայ առանցքը շարժումին / նման երեսփոխանին հիւրասրահը գրաստան հսկայ ժամացոյցի ճօճանակին վրայ ստուած ազախիմին սեւեռաբիբ հայեացքին / ունկնդրելով եղանակը մերօրեայ առասպելին որ ունկնդրու մէջ կը պղպջայ

Սպասում —

տասնեակ պատերուն որոնք կը հալին տասնեակ ուղղութիւններով / մէկ ռոտի վրայ կանգնած պատժուած աշակերտներու պէս եւ պղպջակներու մէջ նիհար միջանցքներ կը թխմեն

Սպասում —

դատարկ բաժակին մէջ լուծ խմիչքի վերջին վերիվայրումներուն / վարդին որ յիմար-յիմար կ'երջանկանայ իր նիհար ցողունին վրայ եւ գոռոզաբար աշխարհը կը դիտէ / կապոյտին որ կը գունաթափի նաւաստիին բանկունին վրայ եւ անհունին մէջ թաւալող փռչիւնները կը դարպասէ՝ իբրեւ անձամօք նաւահանգիստներու հասցէներ / եւ յիշողութեան խամրող ստուերներուն որոնք կը ֆնաման սեղաններու վրայ կամ վարագոյրներու ետին իրերը կը լըզւըրտեն

երաշքի ժամերուն որոնք կը յօրանջեն տասնեակ-տասնեակ պատերն ի վեր եւ կը շատախօսեն բոլոր ուղղութիւններով / մետաղադրամին որ մեծ հայրիկին ֆակէն դեղին-դեղին կը զնգզնգայ եւ անջրպետէն տակաւ առ տակաւ կը գնէ ամպերը թափառական / գառանցող բոպէներուն որոնք դուռները կը վերածեն յետամնաց արուարձաններու եւ օդը կը ծանրացնեն անգործութեան ու անպահովութեան սեւ երկինքով / տան սեմի սրբամաշ ֆարին որ նեղֆրտուած աստիճանին ծանր գլուխը կը խնդէ մտատանջութեան արձագանգներով / եւ ֆամիին որ ամայի փողոցներն ու սալաբարերը կը հալածէ եւ ֆագաքը կը մաքրէ անհեթեթի փռչիւններէն:

Սպասում —

փերեզակներն ու վաճառականները կ'արթննան ընդոստ /

խօսքը որ կը բարձրանայ իր արմատներէն ծառ է կամ աստղերուն բացուող լուսապողոտայ / դատարկ շրջանակներուն մէջ պատերը նոր նկարներ կը թամբեն եւ կը ցուցադրեն հին-հին հասցէներ / մայթերը մաշեցուցած պոռնիկը կը կորսուի ինքն իր մէջ եւ կը դառնայ յիշատակի կմախֆ / սպասումը կը դառնայ ամբողջական իր ամբողջ գորշութեամբ՝ սեւ գիշեր մը ինչպէս / երբ իրերն ու գիծերը իբրեւ ազախիներ կը վերագառնան իրենց նախկին խօսքերուն / վայրը կը յորդի ելեկտրոնիկ մեքենաներով եւ տղամարդը կը մրափէ իր գրասենեակի բազմաթոռին մէջ՝ իբրեւ խանգարուած հեռաձայն / խօսքերը սյուս հեշտայարոյց երիտասարդուհիներու կիսազգեստներ են որոնք գարուն-գարուն գոյներ կը պղպջան / ծառերը գեղուհիները կը դիտեն զմայլած եւ կը մերկանան իրենց կեղեւներէն սգաւոր / միայն ծաղիկները թեթեւ-թեթեւ կ'աւտոտեն թաղ թաղ / երբ ծաղկաւոր փէշերը կը փայտատակեն երփներանգ ժպիտները գարունին եւ կը կորսուին աւազապարկերու ետին / էզը կը ծածկուի բոլոր տղամարդոց ծերացած մարմիններով / ժամադրութիւնը կը ծածկուի բոլոր ժամանակներուն սաւաններով / բայց ժամացոյցը արդէն լոած է վաղուց

Սպասում —

սպասումի օրէնքին / խանգարուած խօսքերուն / քայքայու սիրուհիին / պղպջակ-պղպջակ շոգիացող երազներու վերջին տեսարանին / սարսափի եւ անիշխանութեան անջրպետին մէջ սեւ մալորակներու պէս խտացող փոշիներու պայթումին / հին գիծերու զարթումին եւ երջանկութեան շարժումներու տօնահանդէսին

Սպասում —

սպասումին

Հալեպ, 20 Մայիս 1990

ՏԵՈՒՐ ԵՐԳ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆԻՆ

Որովհետեւ աշունը
 իր ոսկեհաս արութիւնը ունի
 որովհետեւ ձմեռը
 իր կատաղի երիտասարդութիւնը ունի
 որովհետեւ գարունը
 իր միամիտ պատանութիւնը ունի

որովհետեւ ամառը
 իր տաճարին խենթութիւնը ունի
 որովհետեւ խարոյկը
 իր այլամերժ եւ գնչու պարէն ետօ
 ունի մարմինը մոխիրին եւ հոգին ծուխին
 որովհետեւ շշուկներն ու կանչերը
 անհունին մէջ յար թեւածոյ արձագանգներ ունին
 որովհետեւ արթնութիւնը
 հոռիզոններ խուզարկոյ իր արծիւները ունի
 եւ տեսիլներն ալ ունին հօտերը իմաստութեան
 որովհետեւ պարտութիւնը
 արինոճ գրուած պարգեւն իր ունի
 եւ սիրտը կը դառնայ նեկտար
 յուսախաբութեան դառնահամ կարասներուն միայն
 որովհետեւ նախատիւնը
 կրակի զիմադրականութիւնը ունի
 երբ սիրտը կը խաչուի ժամանակի խաչափայտին
 որովհետեւ արտասուքը
 չափ աւ սահման չունի եւ արցունքի կաթիլները
 ճակատագրուած են դառնալու սառած աստղեր
 որովհետեւ օրերն այս անհեթեթ
 կը հանդուրժենք մեր զոյնութեան մէջ անգամ
 եւ կասկածներն ալ սատանաներուն կը ճամբենք
 որովհետեւ վերջապէս
 ստիպուած ենք ամէն օր մեռնիլ
 եւ դատապարտուած իբր թէ ապրիլ

ահաւասիկ
 այս է ամբարտակը մեր ռզբերգութեան
 որ կը բարձրանայ լեզուիս աւագահատիկներուն վրայ

Հալեպ, 29 Մայիս 1990

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Գ. ԱՐԷԼԵԱՆ

ԱՆՆԱ ՀԱՐՍԸ



ԵՏԴԱՐՁ — Բ.

Աստուտուն, շատ կանուխ, եկան երկու ջորեպաններ: Տիրան կարգադրած էր, որ կանուխ դան եւ շուտով սեղ հասցնեն իր եղբոր կինը: Ջորեպանները բռնուցին Աննային ունեցածները: Մէկ ջորին վրայ ինք՝ Աննան հեծաւ: Գիրկին մէջ ունէր փոքր մանչը: Երկրորդ ջորին բռններուն վրայ նստեցուցին մեծը՝ ձորճիկը: Ջորեպանները ուրիշ երկու ջորիներ եւս ունէին: Ասոնց վրայ բնասպիտակ թղթեղաններու համար ապրանք բռնուցան էին:

Աննան որոշ յուզումով ժըբամուռեցաւ: Տիրանէն: Կարծէք կը նախըզգար, որ այդ վերջին հանգիպումը պիտի ըլլար...: Տիրան կուրճէին սեղման էր մանչու կները...: Միայն Աստուած գիտէր, գարձեալ տեսնուկու առիթ պիտի ունենայի՞ն...

Աննան քանի ժը անգամ ետ գարձաւ: Տաղբը, սննդած, կեցած էր պանզոկին առջեւ: Վերջին անգամ, երբ մանկամարդ կինը ետ գարձաւ, տեսաւ առաքողը ձեռքի մէկ ջղային շարժումը...: Երես եւ անուղռ մարդու ապաւորութիւն սասցած էր իր առաքէն...

Ճամբան երկար էր: Այդ օր, երեկոյան գէժ, Աննայի պիտի հասնէին: Աստուած մեծ էր: Այդ ճամբան ալ կը հասնէր...: Նափուրէն հող հասնողը, Անտիոք ալ կը հասնէր, Գեոսալ ալ, բայց հ՛րբ:

Աննան առիթ չէր փախցնէր գաստակին վրայի ապարանջանին նայելու: Է՛հ, եթէ ասոր շահութիւն կ'ընէին, թող ըտէին: Սիրուն էր անպիտան գարգեղները: Մա՛նաւանդ աւելի սիրունցած էր իր գեղեցիկ գաստակին վրայ: Հիմա իր շուրջի տեսարանները, որոնք գեղեցիկ էին, այնքան ալ չէին հետաքրքրէր զինք...

Կէսօրուան ատենները, երբ արեւը Հասած էր իր գեներիքին, Զորեպաննե-
րը կանգ առին սաղարթախիտ ծառի մը տակ: Քեթիկը ցուցին Զորեպաննե-
րը: Իսկէնտէրու նէն իրենց Հեռ ընթաց ու տեղիները մէջտեղ դրին: Աննա
չփոթեցաւ: Ինչպէ՞ս ուտել որ Համեստ մարդոց ճաշը: Զորեպաննեքը ստիպե-
ցին, որ նստի Հետերին: Աստը, Տիրան եղբոր կարգադրութեամբ, Հետերին
Հաց, պանիր եւ այլ ուտելիքներ վերցուցած էին: Երբ Հաստատեց, որ տաղը ող
կարգադրութիւնն էր սա, ախորժակով կերաւ, նաեւ Հող տարաւ, որ մանչուկ-
ներն այ ուտէին: Մօտակայ աղբիւրէ մը սառնորակ ֆուր խմեցին, լուացուե-
ցան: Կտրծ Հանգիստէ մը ետք, ճամբայ ելան:

Երկօրեան Հասան Անտիոք: Մէկ-մէկուկէս ամիս առաջ, Անտիոքը
Աննայի Համար թուացած էր մեծ քաղաք մը: Իսկ Հիմա, երբ կը վերադառնար
Նափուիէն, խեղճու կրակ, ծրարտ քաղաք մը, տեղի ճիշդը՝ զի քաղաքաբն ժըն
էր Անտիոքը: Իր ճամբուն վրայ տեսած էր քանի՞-քանի՞ քաղաքներ, նա
նստած էր, քնացած էր Իսկէնտէրունի պանդոկին մէջ: Արքա՞ն գոցուեցաւ
սիրտը, երբ մին ներս մտաւ խանին դարպասէն: Աստուած՞ իմ, սա ի՞նչ խեղ-
ճութիւն էր...

Գեղեցիկ անակնկալ մը կար սակայն այս կեղտոտ խանէն ներս: Հոն
դաս իր կեսուր Հայրը: Հաննոն անակնկալի եկաւ: Ինք եւ իր տեղեկները, գեո
կերու օր առաջ, Հայի կ'ընէին, որ Հարսը արդէն իսկ Հասած ըլլալու էր Ամե-
րիկա: Օտան պատաւը կը միջիթարէր ինքզինք անձ'՝ որ տղան, Քերտը, սփե-
րու շանն չէր այլեւս, կիներ քովն էր, թէ՛ տաքուկ կերակուր կ'եփէր իրեն եւ թէ
այ տղամարդը առանց կողմ ի՞նչ կ'արժէր:

Հաննոն նախ չհաստատեց աչքերուն: Սակայն արդէն իսկ թոնիկները
փաթթուած էին ստերուն, պապո՞ւկ, պապո՞ւկ կանչելով...: Հաննոն ծանր
ձեռքը դրաւ Հարսին ուսին...

— Աննա Հարսնա, այս դո՞ւն ես, ի՞նչ եղաւ, ինչո՞ւ, ետ եկար...
— Քերտըն ու Աերտըն այ շուտով ետ պիտի գան, Հայրիկ: Զի՞ջիք պիտի
բանան:

— Իրա՞ւ, — ուրախացաւ Հաննոն: Վերջապէս, տղաքը պիտի գային:
Վաստակարար քանի մը զուրուշ պիտի բերէին: Կը ցանկապատէին Քանթա-
նենց քալլան, կը շինէին փոքր ազարակ մը: Ամենակարեւորը՝ Հարսին դատին
դո՛ւր գացած արտը վերադառնալը կը գնէին: Ուրախացաւ, շա՛տ ուրախացաւ, բայց
Հարցուն մ մնաց ինչո՞ւ, Հարսը չարչարած եւ մինչեւ հետո տեղեր տարած
էին: Քող կանուխէն զրէին, որ Հարսը չարչարուէր...

Կարգադրեց, որ Աննա եւ գաւակները տեղաւարուէին խանին մէջ. Ինք
քիչ մը գործ ունէր շուկային մէջ: Հարսը պնդեց, որ միտսին երթային հետը:
Յոգնութիւնը աչքին չէր երեւեր: Հաննոն թէ՛ն պնդեց, բայց տեղի տուաւ
Հարսին խնդրանքին:

Երբ կ'անցնէին Օպէտին նշանաւ որ ճաշարանին առջեւ էն, ճաշարանա-
տէրը ներս կանչեց Հաննոն: Փոքր ծրար մը ունէր դրկելիք: Երբ տեսաւ Ան-
նան, չկրցաւ զարմանքը գուպել:

— Հարսնա, այս ի՞նչ բան է. չէ՞ որ հիմա Ամերիկա Հասած պիտի ըլլա-
նիր: Անցէք, անցէք, սա ի՞նչ լուր է, մեղա՛յ, Տէր: Անցիր, Հարսնա, անցիր:

Աննան ասոր եւս պատմեց չի՞ջիքի պատմութիւնը: Օպէտ ճարպիկ
մարդ էր, շատ այ տրամարանական չգտաւ այս ս՛հեքիսթը, բայց բան չըսաւ:

— Ո՛ւր պիտի պատկի Հարսը, Հաննո, — Հարց տուաւ Օպէտ:

— Խանը: Արդէն իսկ ամէն բան կարգադրուած էր:

— Ամօթ չէ՞, Հաննո, շո՛ւտ, Հարսը Հոս կը մնայ հիմա. դու ն պիտ' եւ ինչ
որ պէտք է Հոս բեր: Ասանկ Հարս մը ի՞նչ գործ ունի խանին մէջ: Եո՛ւտ գնա,
բեր բերելիքներդ. վերը, մեր տունը կ'ըլլէր: Գացի մի բաներ, այլ՝ եկայ:

Օպէս կարգադրեց, որ Աննա անձիբապէս իրենց տունը կլլէ: Յանձնարողներուն մեծ մասը թեւապէս ինն: Եկողը նոյն հարցումներով նեղ կացութեան կը մատնէր Աննան: Բոլորն ալ ապշած էին. ի՞նչ ըսել էր մինչեւ կէս ճամբան երթայ եւ հաղտոնայ: Ասոր մէջ անլուծելի գաղտնիք մը կը տեսնէին ժարդիկ:

Այդ գիշեր, Օպէս կանուխ վերադարձաւ տուն: Արդէն իսկ կինը հոգ տարած էր, որ Աննա եւ փոքրիկները ընթրէին: Հաննոն ալ հոն եկաւ: Աննա, յոգնութեանը պատճառաւ, չէր կրնար նստիլ: Օպէսին կինը կարգադրեց, որ քնանային: Դեռ ճամբայ ունէին կարելիք:

— Քեո՛ր, ինչո՞ւ ես դարձած է հարսը, — հարց տուաւ Օպէսին կինը՝ տիկին Մարին:

— Ես ալ չեմ հասկնար: Տղաքը հետք թողնելու: Ես ալ չեմ հասկնար ինչպէս: Թէլէ՛Քոն կ'ըսէ, ի՞նչ կ'ըսէ, բայց խելքի պատկերէք բան չէ, ազլիկս, ծոփերուն ն վրայէն ինչպէ՞ս կը թօսին: Այս ի՞նչ օրի հասանք:

— Կ'ըլլայ, կ'ըլլայ, Հաննո: Այդ թէլէ՛Քոնէն հիմա շատ կայ Սասնայուլի մէջ: Մինչեւ Անտոնը ալ հասած է: Հոս քանի՞ — քանիներ ունին արդէն:

— Ի՞նչ կ'ընեն ատուփ:

— Այս անգին կը թօսին իսկէնտերունի հետ, Սասնայուլի հետ...

— Վալլաիի հաստալս չի գար, փեսայ: Ըլլայիք բա՞ն է սա:

— Ըլլայիք է, որ եղած է, Հաննո: Դուն հիմա սա ըսէ, ինչո՞ւ հարսը ես եկած է:

— Տղաքն ալ պիտի գան եղեր, փեսայ: Երանի կանուխէն լուր գրկած ըլլային, գոնէ սա խեղճ կինը այսքան չէր շարժարուեր: Մէկու կէս ամիս է ճամբաներն է, ծոփու վրայ, ցամաքի վրայ: Փոքրիկներուն հետ ով գիտէ, թէ որքան շարժարու եցաւ խեղճ ազլիկը...

— Տղաքը անխելք բաներ են, Հաննո...

— Օպէտ, — յանդիմանել կրնար, — ի՞նչ կ'ըսես քեո՛րիս...

— Անխելքի ալ անխելքն են: Կրա՛կ է, Մարի՛, կրա՛կ: Այս աշխարհը շատով պիտի պայթի: Հաննո՛, լուր գրկէ, թող չգան: Եթէ կրնաս՝ Աննա հարսն ալ գրկէ...

Հաննոն մտաուրբ մէջ ինկաւ: Եթէ Օպէտը կ'ըսէր, որ աշխարհ պիտի կրակի բռնուի, ուրեմն ճիշդ ըլլալու էր: Օպէտը շատ բան գիտցող մարդ էր: Իր ալ անհանձին գպած էր, որ Փրանսիացիները, այսօրուները, ինկիզները պատրաստութեանց մէջ են: Բայց, կը տրամաբանէր մարդը, ատուք հետո՛ւ Եւրոպայի մէջ եթէ կռուին, իրենց ի՞նչ: Աշխարհի յետին ծայրամասին գանուող Քեոսպը ի՞նչ գիտա պիտի ունենար այդ կռուին...

— Հաննո, մերիններն ալ պիտի մտնեն եզեր կոտի մէջ...

— Ո՞վ, օսմանցիները: Վալլաի չեմ գիտեր, բայց ի՞նչ ունին մեր օսմանցիքը ինկիզներուն կամ Փրանսիացիներուն հետ: Անոնք՝ Եւրոպա, մենք՝ հոս:

— Վաղը Օպէտը ըսաւ պիտի ըսես, Հաննո: Կրակը հոս ալ պիտի հասնի:

— Է՛հ, օսմանցիին ո՞վ ինչ կրնայ բնի: Օսմանիին չի յաղթուի, փեսայ: Օսմանիին ուրիշ է, ուրիշ: Ասոր գաւ ազանը չի կոտորի...

— Այդ անցած պատմութիւնն է, Հաննո: Օսմանիին շատ աւելի դորաւոր կայ այսօր: Եւ դեռ՝ օսմանիին ունեցած զէնքը ոչինչ է...

— Չեմ հասկնար, փեսայ, չեմ հասկնար, բայց թող Աստուած օգնէ բոլորին: Ծառ երիտասարդներ կ'այլընի պատերազմի մէջ:

— Այս անգամ շատեր, շատ շատեր պիտի այրին, Հաննո, Աստուած օգնէ բոլորին: Եթէ կրնաս, լուր գրկէ աղոցող, որ չգան:

— Հապա Տիրանս ի՞նչ պիտի ըլլայ:

- Մի վախ՛նար: Ես լաւ կը ճանչեամ Տիրանը. ան դու ի կ'ազատէ:
 - Այո, բայց ան ալ ասմանչիին բանակին մէջն է:
 - Գիտե՞մ, գիտե՞մ, ան ջաջ տղայ է, նաեւ խելացի: Գլու ի կ'ազատէ:
- Ինչչալլա՛հ բան չի պատահիր. կրակը մեզի չի հասնիր, Հաննո, շատ հոգ մի ընէր: Երանի՛ր Աննա հարսն ալ ետ դարձած շրջար:



Այդ պիշեր, խանին մէջ, Հաննոն չկրցաւ կողքը կողպին միացնել: Մժեղները, փայտոջիւնները, լուերը արիւնքաճ կ'ընէին զինք: Բայց ամէնէն զժուարը Օպէանին պատճառն էր: Օպէտը շատ բան պիտոյց մարդ էր: Եթէ ան բան ըսէր, աղբիւրէն խմած կ'ըլլար զայն, շատ մեծ մարդոց նետ էլլող-նատող մարդ էր ան: Եր ճաշարանին մէջ շատ մեծամեծներ կը ճաշէին, զայժադամ, գասաւոր, սպաներ, տեսակ-տեսակ մարդիկ կը ժտնէին հոն: Իսկ ինչ ապուր կերած էին իր տղաքը: Գիտէր, ասիկա իր Սերորին եփած ապուրն էր: Ա՛խ, այդ Շէքերնին...: Ի՞նչ պէտք ունէր ճաշիլ հարսը ետ դրկելու...: Վայ տունդ չքան-գրեի, Շէքերնի տղա...

Առաւօտուն, իր բնոները ասու ալն ջորեպաններուն, որոնք Աննան բերած էին Իսկէնտերունէն, իսկ ինք իր հարսին գոյքերը բեռցուց իր ջորիներուն վրայ: Հարսն ու թուներն ալ անգաւորեց ջորիներուն վրայ: Ծամբայ ինկան զէպի Քեսապ:

Աննան շատ անհամբեր էր: Հազար ու մէկ հարցում ըրաւ կեարայրին, արտերուն, կովերուն, գրացիներուն, նոններներուն, կեսուրին, ապոնը, իր ծնողներուն, ջոյրերուն եւ ջեռայրներուն մասին, մէկ առ մէկ: Նաեւ եղբորը մասին: Հաննոն բոլոր հարցումներուն կը պատասխանէր: Թէեւ կարճ էին իր պատասխանները, բայց լեցուն էին: Միայն Աննայի Կարապետ եղբոր մասին չկրցաւ սանկ աղու որ բան մը ըսել: Եստ արազ մե ով գլաւ է՞ ըսաւ ու անցաւ: Խօսակցութեան ընթացքին՝ Աննիկ քանի մը անգամ եւս հարց տուաւ եղբոր մասին: Հաննոն ինքզինք նեղ կացութեան մէջ կը զգար: «Լաւ է՞ կ'ըսէր ու նրութե՛ր կը փոխէր: Աննային ուշադրութեան չվրիպեցան այս խոսակցողական պատասխանները: Քանի մը տարրեր մե երով փորձեց բան հասկնալ, բայց ի զուր: Նախազգացումը սկսաւ շարժարեւ զինք: Ի՞նչ ունէր իր եղբայրը, Ասաւ, ա՞ն իմ...»

Կէսօրէ ետք հասան տուն: Անակնկալը շանթի տպաւորութիւն ձգեց զիւզին վրայ: Ամբողջ գիւղը շատ շուտով խմացաւ, որ Աննա հարսը ետ գարձած էր: Կիները եկան ու համբուրուեցան հետը, համբուրեցին ազնկները: Նոյն հարցումը տասնեակ անգամներ ուղղուեցան իրեն: Ինչո՞ւ եկար...

Բոլորին ալ նոյն յանկերգը կրկնեց: Ամուսինն ու տապրը եւս շուտով պիտի վերադառնային: Թէ՛ ազարակ պիտի բանային: Արդէն իսկ կովկիթի համար դոյլ մըն ալ բերած էր հետը Իսկէնտերունէն:

Ասիկէ դուրս ուրիշ շատ հարցումներ եղան Աննային: Բոլորին ալ պատասխանեց:

Բնակաւարար, մեծ իրարանցնողները եղան Օսանն ու Գարուներ: Այս երկուքը չափազանց մեծ անակնկալի առջեւ գտան իրենք զիրենք: Զերմ էր յատկապէս Աննայի եւ Գարունի զիրկրնոյ խառնումը: Կեսուրն ու տալը երկար, շա՛տ երկար համբուրեցին ձորնինն ու ձիւմին: Մէկուկէս ամուսան բացակայութեան ընթացքին կարծէք շատ մեծցեր էին:

Երբ Աննան ժամանեց, հետուէն առաւ բոլոր պանիրով հացին: Կեսուրը հաց կը թիէր: Մինչեւ հարսին հասնելը, արդէն իսկ հաւաքած էր հացաշորը: Զրտմանն ալ պարպելէ ետք, հագիւ թոնիւրէն գուրս ելած, արդէն իսկ Աննան

փոխադրող ջորին եկամ-կեցամ էր թոնիրին ժող պտնուող ցամլիկ պատին քով, որպէսզի Աննան վար իջնէր: Օսանի գլուխէն գրեթէ վար ինկած էր պղինձ-մէ մեծ ափսէն, որուն վրայ շարած էր ցամաք հաց եւ պանիրով հաց:

Աննան համբուրում էր կետ: Բին հետ, անօթու թիւ նը յազեցնելու համար առած էր հաց մը եւ սկսած էր ուտել: Ամբողջ մէկու կէս ամիս է վեր այդպէս արտոբակով չէր կերած: Դեռ տուն չժամած, նշմարած էր թանին գոլլը: Ան այ գլու ի քաշած էր. օրա՛յ. այդպէս ըլլալու էր մարդ, ազատ-համարձակ ուտէր, բերնի համով... Այդ ի՞նչ էր իր քաշածը: Թէ՛ կերած պատասնէրը հաշ-ւած էր եւ թէ խմած ուժակերը...

Բարի եկարի համար եկած կիները մնացեալ հացը իրեն տաք հաց եւ արժազան, գրեթէ կերած էին...

Ո՛չ Աննայի հարցու մենքը վերջ ունէին, ոչ այ կեսուրին: Օսան ուրախ, շա՛տ ուրախ էր, բայց մին նոյն ատեն տարակուսանքի մէջ էր: Եթէ իր տղաքը իսկապէս պիտի գային, եւ այնքան շուտով, ինչո՞ւ. ոչ զքան շարձարեցին իր հարբար: Երկու անշափահաս մանուկներով, գիւրի՞ն քան էր մինչեւ կէս ճամ-բան երթալ եւ ետ դառնալը:

Բնակահարար, Աննա շատ բան ուներ պատմելիք: Տեսած էր մեծ քա-ղաքներ, տարբեր մարդիկ, սրերով ծովուն վրայ մնացած էր, վերջ՝ երկինք, վարը՝ ծով: Պատմեց նափուլի ճաշարանին մէջ իրենց ճաշակած մարտորոնիին մասին: Խոսեցաւ Իսկէնտերունի պղնձագործներու, ոսկերիչներու եւ կտորե-ղէնի շուկաներուն մասին: Երկար խօսեցաւ Գլխփտեկ տղոց պանդոկին մա-սին: Յայտ տուաւ իր մեծագիր նկարը: Ետա խօսեցաւ Տիրան աազրոջը մասին: Բնակահարար, նաև ուն վրայ ճաշակած դառն փորձառու թեանը մասին չէր իսկ կրնար խօսիլ: Ամէն անգամ, որ յիշէր այդ պարբ, նաև աստիկն բերնէն ելած ալբոսին կծու հոտը, կը գողար ամբողջ մարմնով...

Աննայի հարցու մենքը շատ էին. հարցուց կովերուն, պարտեղին, արտե-րուն տուած բերքին, հաւերուն, մէկ խօսքով՝ ամէն, ամէն բանի մասին: Օսան եւ Գարուն որքան որ կրնային բացատրեցին, պատմեցին իրեն: Ամէն բան լաւ էր, արտեքուն բերքը՝ շատ լաւ: Մետաքը առատ եղած էր: Կովերը լաւ կը կթէին: Հաւերուն տուած հաւ կիթը բաւ էր թէ՛ ուտելու եւ թէ՛ փերեկակ Ղա-զարէն օճառ, աղ եւ լուցկի գնելու...: Ամէն բան լաւ էր: Փա՛ռք Աստուծոյ:

Մակայն օդին մէջ առկախ բան մը կար: Աննան այ կը զգար, որ անա-խորժ բան մը պատահած էր: Փանի մը անգամ հարցուցած էր իր հարազատ-ներուն մասին, բոլորին մասին զլաւ է՞ ըսած էին, բայց իր մէկ հատիկ եզ-րօր մասին զլաւ է՞ն չիլ մը սանկ արագ մե: ով արտասանուած էր: Սեղա՛յ, Տէր, ի՞նչ կար: Նաև Աննային ակնարկէն չէր խուսարած խորհրդաւոր ակ-նարկները, զորս փոխանակած էին կեսուրն ու տալը, կար բան մը...

- Վերջին անգամ եղբայրս է՛րր եկաւ հոս...
- Կեսուրը դժուարաւ սկսաւ շնչել...: Ի՞նչ բսէր:
- Երեսակն բսելով, լաւ չեմ յիշեր, բայց բաւական եղաւ...
- Ինչո՞ւ շատ-շուտ չէր այցելիք մեզի:
- Է՛հ, քու մեկնումէն ետք, մերինները շատ այ չէին այցելիք մեզի: Հայրդ մէկ-երկու անգամ հանդիպեցաւ: Բոլորն այ շուտուած էին, չէին ուզեր այս տունը պարապ տեսնել: Իրենց համար կեանքը շատ խմսատ չուներ ատանց քեզ կամ մազու կներուդ:
- Մայրիկ, բան մը կայ, որ ինձմէ կը պահէք: Հայրիկն այ ճամբու բն-թացքին ինձմէլ բան մը կը պահէր: Ամէն անգամ, որ կորօրս խօսքը բանայի, անմիջապէս նիւթը կը փոխէր. ի՞նչ պատահած է եղբորս:
- Բան պատահած չէ, աղջիկու, բան պատահած չէ:
- Ո՛չ, նախազգացու մներս չեն խարեր գիտ:

— Հուս տա՛ս՝ որ բան պատահած չէ, աղջիկս: Եթէ կ'ուզես թող հայրիկը վաղը տանի քեզ, բայց բան չկայ:

Ասոր վրայ քիչ մը հանդարտեցաւ Աննա, բայց տակաւին հոգին կը խուզէր: Քիչ մը հանգստանալէ ետք, իջաւ պարտէզ: Սո՛ս, որքան փոխուած էր ամէն բան: Թուօք հասունցած եւ վերջանալու վրայ էր: Թուզերը խոշորնայ սկսած էին: Խաղողները սկսած էին նշան առնել: Նոնններնէն շարանը, վերէն վար, սկսած էր ճիւղերը վար թեքել: Յայտնի էր, որ նուսենքը կը լիցցաւ որու էին ու կը ծանրանային... Է՛հ, այնքան այ հետու չէր Սեպտեմբերը...: Հոգին յեցուցաւ աչքերը լիացան...: Որքա՞ն հարազատ կը զգար ինքզինք հոս...: Ամբողջ մէկու կէտ ամիս, կարծէք կտրուած էր աշխարհէն, հողէն...: Մոզը, օտարութիւնը, արկածախնդրութիւնները, եւ անորոշութիւնը խոսոված էին զինք տեսարար...:

Մոզը, մա՛նուսանց իրենց բակէն տեսնուած անոր փոքր եռանկիւնը, որ այնքան օրօրած էր զինք, կորսնցուցած էր իր հրապոյրը: Հիմա, հոս, իրենց պարտէզին մէջ, ինքզինք երջանիկ կը զգար:

Քիչ ետք յայտնուեցաւ տալը: Այս ալ մեծցած աղջիկ էր, հակառակ ասոր, հայրը նամակները պատուելիին գրել կամ կարդալ կու տար: Գեղեցիկ եւ հասակաւ որ աղջիկ էր Գարուն: Երանի՛ գինք տունդին, կը մտածէր Աննա: Հարսու տալ, հարազատ յորհրու պէս, զիրար շատ կը սիրէին: Հազիւ քիչ մը մօտեցած՝ Աննա ուզեց բան հասկնալ Գարունէն:

— Գարուն, քոյրս, անկեղծ եղիք ինձի հանգէպ, օգին մէջ գէշ բան մը կը զգամ: Գիտե՛մ, որ եղբորս բան պատահած է, սակայն մարդ բան չըսեք ինձի: Գարուն, անկեղծ եղիք, հաճի՛ս...

Գարուն, որքան ալ մեծցած կամ զարգացած աղջիկ՝ պէտք եղած խորամանկութիւնը չուներ, ասոր համար ալ, առանց թաքցնելու, պատմեց իրողութիւնը:

- Քու մեկնումէդ երեք օր ետք, անկողին ինկաւ եղբայրդ...
- Յետո՛յ, մեռա՛ւ...
- Ոչ, ոչ: Սկիզբը բան չհասկցան: Տոքթոր Սողոմոնը հոս չէր, մեկնած էր Հալեպ, գործով: Այլապէս՝ ամէն բան լաւ կ'ըլլար:
- Լաւ, ի՞նչ պատահեցաւ, Գարուն, հոգիդ սիրե՛մ:
- Ամբողջ շաբաթ մը տաքութիւն ունեցաւ...
- Ինչո՞ւ:
- Թիֆոյիտէ բռնուած էր խեղճ տղան...
- Արագ ըսէ ըսելիքդ. ե՞րբ մեռաւ եղբայրս:
- Չմեռաւ, Աննա, չմեռաւ, ողջ է ան:
- Հապա՞...
- Տեսողութիւնը կորսնցուց:
- Ի՞նչ...

Աննայի աչքին առջեւ սեւ շրջանակներ սկսան գծուիլ. պահ մը ինք այրան շտեմար...: Կարծէք ինք եւս պիտի կուրծար: Նախ՝ չկրցաւ լալ: Գծուար բան էր: Ո՞ւր էին իր արցունքները, թող զային, հոսէին, որպէսզի քիչ մը հանգչէր...

Գարուն, թեւ մտնելով, տուն առաջնորդեց կայծակնահար հարսը, որ տուն հասնելէ ետք, սկսաւ լալ: Լացին հետ քիչ մը թնթեցաւ:

— Ի՞նչ կ'ուզէիր մեկ հատիկ եղբորս աչքերէն, Աստուած: Ի՞նչ ըրած էր քեզի: Անի՛ր տեսներ, որ կիրակի չէր փախցնէր եւ կը փառարանէր քեզ իր անուշ ծայռովը...: Ի՞նչ կ'ուզէիր իր աչքի լոյսէն. կը կարծէի՛ր, որ արեւուզ լոյսը պիտի հասցնէ իր երկու աչքերովը...

Կեսուրը հանդարտեցուց զինք: Գին ամէն յոյս կորսուած չէր: Շատ

Հաւանարար վերագտնէր տեսողութեան մէկ կարեւոր տոկոսը: Աննան չէր հաւատար:

— Ո՞ր պատճառ էր տոբթոր Սողոմոնը: Այնքան անուանի բժիշկ, որուն համբաւը տարածուած էր մինչեւ Հետաւոր քաղաքները, չէ՞ր կրնար բան մը բնել, ճար մը գտնել: Ինչո՞ւ չէր օգնած իր մէկ հատիկ եղբորը:

Օտան ի գործ դրաւ իր բոլոր ձեռքերը՝ կարենայ համոզելու համար հարաւ, որ հանդարտէր թիչ մը: Ի տես իրենց մօր լացին, ժանշուկներն ալ սկսան լայ: Հաննոն առաւ ու պարտէզ տարաւ գիրենք: Քիչ ետք արդէն իսկ հանդարտած էին անոնք:

Աննան նոյն օրն իսկ եւ անպայմանօրէն ուզեց եղբորը տեսութեան երթալ: Օտան յարմար չգտաւ այդ մէկը: Վերջապէս կրցաւ համոզել հարսը, որ սպասէր: Նախ՝ յարմար պիտի ըլլար իր վերադարձին ժամին լուր զրկել ծնողներուն, որոնք արդէն իսկ խորապէս ցնցուած էին: Իր անակնկալ երեւումը նոր ցնցում կ'առաջացնէր: Էաւ էր, որ նախ լուր զրկուէր իրենց:

Հակառակ իր ասպարած տաղնապին ու ցաւին՝ համոզուեցաւ եւ նախաձեռնար համարեց սպասել մինչեւ յաջորդ օրը:

Այդ գիշեր, աչքի լոյսի համար, մինչեւ ուշ առան, մարդիկ եկան ու գացին, բոլոր զիւր զիւր զայնէնք, այս թէ կին: Ուրախ էին, որ զիւր կը վերագտնէր չէն անհաս մը: Նաեւ կը միտքարկին գինք, գոնէ կը ջանային միտքարկել, եղբորը պատահած փորձանքին համար: Յոյս կը յայտնէին, որ ան, վարպետ բժիշկներու հսկողութեան տակ, պիտի վերագտնէր աչքին լոյսը:

Հաննոն Անտիօքէն հեալ բերած էր մեծ քանակութեամբ քաղցրեղէն: Եկող-գացողները շատ պիտի ըլլային: Արժագանք կարեւոր էր:

Հակառակ Կարապետին պատահած ծանր զեպքին, զիւր զայնէնք իրենք գիրենք թիւթիցած կը զգային, անոր համար, որ Աննան ետ եկած էր եւ պիտի ապրէր իրենց կողքին: Ե՛նէն աղջիկ էր Աննա: Իր քաջակայսութիւնը զգացած էին մեծն ու փոքրը: Եւ հիմա կորսուած սիրելիի մը վերադարձը գիրենք կ'ուրախացնէր:



Գիշերը երկար, շափազանց երկար թուեցաւ Աննային: Չէր լուսնար, հակառակ անոր, որ իր հարազատներուն մէջն էր: Անկիւնը իր անկիւնն էր. անկողինը, որուն այնքա՞ն կարտոցած էր, իրն էր, բայց թուէր չէր տանէր: Եղբոր զմեռած հակատաղիրը տակնու վրայ ըրած էր գինք: Տակաւին տագրող՝ Տիրանի այն հաստատումը, որ պէտք չէր վերադառնար, եւ թէ՛ աշխարհ կրակի պիտի բռնուէր: Այս եւս կը շարժուէր գինք: Կարծէք, առաջին անգամն ըլլալու֊լու֊, զղջաց վերադառնալուն համար: Բայց այլեւս եղածը եղած էր: Բարին Աստուծո՛ւ...

Առաւօտուն, հազիւ աչքերը քացած, ուզեց մեկնել ծնողքին տունը: Կեսուրը քաջատրեց, որ հարկ էր սպասել մինչեւ յետմիջօրէ: Մարդ զրկած էին, առաւօտ կանուխ, որպէսզի իմացնէր ծնողներուն իր վերադարձը:

Աննա սպասեց զմկամութեամբ: Կէսօրին գրեթէ բան չզգրաւ բերանը: Տակաւին եկող-գացողներն ալ թիչ չէին: Մէկ անգամ եկողները դարձնալ կուր ղային:

Կէսօրը ետք, երբ զրկուած յրարէրը վերադարձաւ, իր փոքրիկներուն, կեսուրին եւ կեսուր հօրը հետ՝ Աննա գնաց եղբորը տեսութեան:

Իր հարազատ տան առջեւ գտաւ հայրը: Պարթեւաւանակ մարդը, հարստին տակ, կքած էր կարծէք: Մէկ հատիկ տղուն կուրութիւնը շատ ծանր

ազդած էր վրան: Աննային եւ թոռներուն գալուստը եւս ցնցած էր զինք: Գրեթէ բոլորին պէս կը բանաձեւէր անխուսափելի հարցուժը.— ինչո՞ւ:

Աննային եւ երկու թոռներուն յայտնութիւնը պայծառացուց զինք պահ մը: Որքա՞ն կարօտցած էր այդ զէժքերուն: Աննան ինկաւ հօրը զիրկը: Անտոն կարօտով համբուրեց աղջիկը, որ չկրցաւ արցունքները զսպել...

Իր վիշաբ մտցած՝ Անտոն կը ջանար աղջկան վիշտը ամօքել: Թոռները արդէն իսկ փաթթուած էին ոտքերուն: Ջանօնք այ գրկեց ու համբուրեց մէկ առ մէկ: Մանրացած էին, գծուար էր վերջնիկ զիրենք, բայց Անտոն շաշկեց ու գարձեալ ու գարձեալ համբուրեց մանչերը: Վերջապէս ներս առաջնորդեց աղջիկը: Գրկած-պահած էր զինք:

Աննան, տոանց իսկ բարեւելու, գնաց եղբորը մօտ: Գրկեց եղբոր զուտ-խը, համբուրեց ու գտնեօքէն յացաւ:

Սենեակը լեցուն էր: Հոն էին մայրը, քոյրերն ու ջեռայրները: Բոլորն այ կու լային: Կարապետ, որ ո՛չ միայն հօրն ու մօրը աչքի լոյսն էր, այլեւ՝ գիւղին սիրելին, շատ արագ հարուածով մը գարձած էր աշագուբկ...

Անտոնի մեծ-մեծ երազները փուլ եկած էին...

Հանդարտելէ ետք, բոլորն այ ողջագորտուեցան հետը: Հակառակ խոր վիշտին, բոլորն այ ուրախ էին, որ վերագտած էին իրենց հարազատը:

Եւ որքա՞ն յու զիջ եղաւ մօր ու աղջկան ողջագորտուժը: Անոնք կը թափէին թէ՛ վիշտի գառն եւ թէ՛ ուրախութեան արցունքներ: Շատ տարօրինակ բան էր այդ:

Քանի մը անգամ պատմել տուաւ իր եղբոր զլիտու եկած դժբախտութեան մասին: Լացաւ, լացուց: Որոշ չափով թեթեւացան կարծէք: Բայց ամէն անգամ, որ աչքերը ուզէր եղբորը կողմը, չէր կրնար զսպել արցունքները:

Ինք պատմեց իր ապրած ողբախօսանքը, քանի մը անգամ: Եղբոր պնդումին վրայ, պատմեց երկրորդ եւ երրորդ անգամ: Հիւանդանալէն եւ կուրծալէն ետք, առաջին անգամ ըլլալով, Կարապետ խնդաց, նոյնիսկ լիաթոք, իր ջեռորդիներուն կատարած մանր արկածախնայրու թեանց վրայ:

Աշագուբիկին խնդուքը, անկեղծ խնդուքը, լաւատեսութեան ալիք մը բարձրացուց: Վերկարձ զէժքերը վերագտան իրենց խաղաղութիւնը, գոնէ պահի մը համար:

Աննայի քոյրերը պատմել տուին իրեն, զատ-զատ, իր ապրած ողբախօսանքին մասին: Բոլորին պատմեց, անձանձրոյթ:

Իսկ անխուսափելի ճիշտն՝ յին, քանի մը անգամ պատասխանեց, իր անխափտն պատասխանը, թէ չուտով պիտի վերադառնան ամուսինը, Եւթեր-ծի տազբը եւ միասնաբար ազարակ մը պիտի բանան: Նոյնիսկ գնած գոյրին մասին խօսեցաւ: Մէկ անգամ պատմուածը, քանի մը անգամ պատմեց, ո՛չ իր հարազատները կը կշտանային, ոչ այլ ինք:

Կէսօրին, բոլորը միասին ճաշեցին: Այդ բնականիք չէր, այլ՝ փոքր բանակ մը: Անտոնին վեց աղջիկները, փեսաները, խնամիները արտրժակով զգալ գարկին: Կարապետին հիւանդանալէն ետք, առաջին անգամն էր, որ այդպէս կ'ուտեին: Ասոր գագառները ինք՝ Աննան էր:

Մովեզերեայ թաղէն, ուր բոլոր պտուղները շատ կանուխ կը հասունանային, բարեկամ մը զրկած էր փոքր կողով մը թուզ, առաջին բերքը, զոր ճաշէն ետք գրին սեղանին: Հիւանդ երիտասարդ կար տան մէջ: Ասոր համար էր նուէրը: Աննա կարօտով կերաւ այդ պտուղէն, քանի մը հասաւ... Բայց ամէն անգամ, որ գտնեար եղբորը կողմը՝ զնշեցիկ աչքերը կը լողային արցունքի ծովակի մը մէջ:

Երկու օր մնաց հօրենական տունը: Նոյն օրը վերադարձած էին իր կենսուն ու կեսուր հայրը: Ինք մնացած էր թէ՛ կարօտը առնելու համար ծնողներէն եւ թէ՛ եղբորը վիշտը ամօքելու:

Իր ներկայութիւնը մեծ փոփոխութիւն բերուի մէջ թաթխուած տան մէջ: Թէ՛ մայրը, թէ՛ հայրը, բայց յատկապէս եղբայրը շատ ուրախացան: Կարապետ յաճախ կը խնդար: Ամէն անգամ, որ խնդար, մայրը խաչ կը հանէր եւ թեւ երբ լայն կը բանար երկինքին դիմաց: Կը կարծէր, որ այդ տան մէջ այլեւս խնդուք բնաւ պիտի չմտնէր: Սխալած էր: Իր Աննան փոխած էր մթնոլորտը: Քրոջ եւ անոր աղեկներուն ներկայութեան, Կարապետ լման կերպարանափոխուած էր: Եւ ասիկա փոքր մխիթարութիւն չէր հօրը եւ մօրը համար:



Աննայի վերադարձէն քանի մը շաբաթ ետք, լուսու որչափանները կատարած էին խաղողորձնէջի արարողութիւնը: Սա լաւ նշան էր: Ամառը, իր բոլոր բարիքներովը, կը հասնէր իր կատարելութեան:

Պաղտօրձնէջը կը կատարուէր Ա. Աստուածածնայ տօնին առիթով, Օգոստոսին: Ինչպէս սովորութիւն էր, գիւղացիները, սօճախմբութեան համար, բարձրացան Պալլուսի, Կասիոս լեռան փոքր գաղաթը: Հոն, հոգովմէական շրջանէն մնացած ասնարին ասերակներուն մէջ, երկու օր, ժողովուրդը անցուց լաւագոյն օրեր: Ամբողջ տարուան մը աշխատանքէն ետք, հաճելի էր Պալլուսի սօճախատարութիւնը: Լեռան գաղաթէն ժայթքող աղբիւրը, որուն ջուրներուն մէջ սառի կտորներ կը լողային, կը զովացնէր եւ կը թեթեւցնէր ժողովուրդին հոգերը: Մարդիկ անհող, եւ ուրախ-զուարթ կ'ուտէին, կը խմէին: Կը պարէին, խեղկատակութիւններ կ'ընէին: Ամէն ցաւ ձգած էին վարը, առաներուն մէջ: Հող անխառն կ'ըլլար ու բախտութիւնը, երբ գիտնովութեան պատճառաւ նոյնիսկ կ'ուրա պատահէր...

Ո՛չ Անտոններ եւ ոչ ալ Հաննոյիք Պալլուսի ելան այդ տարի...



Մինչ քեանպցիք, լեռան վրայ կը կայտնէին, անդին, հետո, շատ հետո երկիրներուն մէջ, կրակի առաջին բոցերը կը ժայթքէին: Ինկիլդը, Փրանսըը, ռուսը եւ ալամանը իրար կ'անցնէին: Առաջին Համաշխարհային պատերազմը կը պայթէր...

Այս լուրը ուշ, քանի մը շաբաթ ետք պիտի տարածուէր Քեանայի գիւղերուն մէջ: Է՛հ, աշխարհի մէկ անկիւնը կորսուած շրջանին համար, որուն հոգը պատերազմը: Բայց եւ այնպէս՝ կրակէն պիտի շողատուէր նաեւ այս կորսուած անկիւնը...

(Շար. 5)

ԳԷՈՐԳ ԱՔԷԼԵԱՆ

ՄԱՐՈՒՇՊԱՏԱՐԱԳ

Երբ կը մտնեմ
 ես էու գիրկիդ դարպասէն ներս
 թակելէ ետք
 էու մատներուդ դալկութիւնը երազային
 երբ կը փակուին
 էու թեւերուդ զոյգ դուռները կոնքիս վրայ
 եւ մարմինն իմ
 կը թփրտայ էու մարմինիդ վանդակին մէջ
 դուրսի լոյսը
 կեանքի ցոլքը կամաց-կամաց կը դալկանայ
 ու կը վառի
 իմ պատրոյզով էու հոգիիդ կանթեղը հին
 եւ մեր միջեւ
 կիսամութք կը թրթռայ
 կ'ազնուանայ յանկարծօրէն
 ու երկուքով
 մենք կը դառնանք հին խնկութեան խորան մը նոր

25 Նոյեմբեր 1988

ԵՏԴԱՐՁ

Սիրոյ մէջ ետդարձ
 չի նշանակեր բնաւ չսիրել,
 այլ վերադառնալ քեզմէ դէպի ինձ,
 կամ միջոցին մէջ գտնել զիս քեզմով
 եւ քեզ ալ՝ ինձմով:

Վերադարձ քեզի չի կրնար ըլլալ,
 հեռացում չկայ, ոչ ալ բաժանում.
 կամ միայն օրեր՝ հին ու տխրալի,
 երբ կարծեր ես, թէ հեռացեր եմ ես,
 բայց հեռացեր եմ իմ հոգիիս մէջ՝
 քեզ աւելի մօտ գալու համար.
 մոռցեր եմ նայուածք, հանդիպում, համբոյր
 եւ հեռացեր եմ քու մագաղաթեայ ձեռքիդ հպումէն.
 բայց եթէ իրօք ես հեռացեր եմ կէտէն առաջին
 մօտեցեր եմ միշտ կէտի մը երկրորդ,
 գոր կարելի է նաեւ կոչել «քեզ»,
 անուանել՝ հոգի:

Սիրոյ մէջ հաշուել
 չի նշանակեր առետուր ընել,
 այլ հոգալ մտքով եւ սիրել մտքով,
 թերեւս նաեւ մտածել սրտով,
 մի՞թէ նոյնը չէ...

Աշուն է ինկեր իմ կեանքի ծառին տերեւներուն մէջ.
 գեղեցկութիւն կայ նաեւ... աշնան մէջ.
 եւ եթէ ոչ ոք բացուած վարդերու գովքը չի հիւսեր,
 չեն դադրիր անոնք կոչուելէ... վարդեր:
 Աշուն է հիմա, եւ աշնան մէջ՝ սէր,
 բայց արդէն ոսկի, բայց արդէն հարուստ
 եւ նոյնքան հասուն:
 Վերադարձ չկայ, այլ՝ հասունացում,
 մոռացում՝ բնաւ, չէ եղած բնաւ,
 որոնում՝ յանախ, ապա՝ յայտնութիւն:

Իմ աշունիս մէջ եկեր եմ քեզի,
 բայց արդէն չկաս, հեռացեր ես դուն,
 Վշտանա՞լ, երբե՛ք, չի կրնար ըլլալ,
 երբ հեռանալը բառ մըն է միայն
 եւ պայմանական:

Սիրոյ մէջ ետդարձ
 չի նշանակեր բնաւ չսիրել,
 այլ վերադառնալ սրտէդ իմ սրտիս,
 կամ միջոցին մէջ գտնել զիս քեզմով,
 իսկ քեզ ալ՝ ինձմով:

Աշուն է հիմա իմ էութեան մէջ,
 եւ աշնանային գոյներով ոսկի եկեր եմ քեզի,
 ե՛ւ գտեր եմ զիս, ե՛ւ գտեր եմ քեզ՝
 քեզմով, սիրելիս...

1988, Հալէպ

ԱՍՏՂԻԿ ԱՌ ՎԱՀԱԳՆ

Արձակէ զիս քու եմայէդ հոգեքով,
 տենչանքներէդ հրաբորբ,
 վերադարձո՛ւր, վերադարձո՛ւր զայն ինձի,
 իմ խեղճ հոգիս, որ կը մեռնի ամէն օր:

Բազմանները յիշատակիդ, օ՛ր, եւ վերցուր թեւերէս
 եւ քու ձայնիդ մանեակները պարանոցէս քակէ՛ ալ,
 ու խօսքերուդ շղարշները մետաքսեայ,
 որոնցմով զիս խնկեր ես, ա՛լ բզկտէ, այրէ՛ ալ...

Ապա քակէ ոտքերէս մաշիկները երազագոյն սէրերուն,
 որ մոլորիմ ու չգտնեմ քու նամբադ,
 եւ ա՛լ չգամ, եւ ա՛լ չգամ քու բազինիդ սիրակէզ՝
 դիցուհիի պէս խրոխտ, վրէժխնդիր, ռխակալ...

Մերկացուր զիս հանդերձներէս կեդծիքի,
 եւ արտօճէ, որ բազինիդ ես մերկ գամ,
 բուսիկ ոտքով, նման համեստ աղախնի
 եւ հոգիիս վերջին հիւլէն քեզի տամ:

Հասնիմ քեզի, որ խոնարհիմ, ո՛վ վեհ դից,
 մարմարակերտ արձանիդ խորհուրդներուն ընդառաջ,
 թո՞ղ լռութիւնըդ խմեմ, քու բարկութեամբ յագնամ,
 բէւ սիրով, բայց թող ազա՛տ քեզի գամ...

2 նոյեմբեր 1988

ՆՈՒԻՐՈՒՄ

Նամակներուդ խուրճը ամբողջ
հրդեհեցի մեծ ծէսով:

Մ'այրամուտի արեւուն տակ
բառերդ բոլոր այրեցի՝
արդէն մտոդ շողերով

Եւ մոխիրները սրտիդ ես ցանեցի արտերուն,
որ կանաչը, սիրով պարարտ,
քիչ մ'աւելի ըլլայ վառ,
ցորենները ա՛յլ աւելի լիանան
եւ տաք հացը հասնի ճանի խեղներուն:

Եւ լեռներուն դրկեցի
սիրոյ բառերդ բոլոր,
որ տունները չմտին,
փոթորիկը տաքութենէս տայ անոնց,
իսկ երբ ձիւնը բարձրանայ
եւ փակէ դուռ-պատուհան,
քամիներուն մէջ ծագկազ
երգ ու հեքիաթ միշտ լսեն
եւ տխուր, որք չմնան:

Ու ցանեցի ծովերուն,
որ մշուշոտ գիշերներուն
գիշերապահ նաւաստիին համբոյր տանին,
որ կարօտը այդպէս տխուր չկատտայ,
այլ շոյէ իր սիրելիին՝ տաք ու բարի մատներով:

Աչքերըս փակ,
մոխիրները շող տուի,
որ հովերը տանին գանձնք տունէ տուն,
փողոցներէն, քաղաքներէն, երկիրներէն
նարօտ կապեն,
աշխարհները զուգաւորութիւն սիրոյ պայծառ
նարօտով:

ՄԱՐՈՒՇ



Ն'արձկն գործարարայ խաղաղութի թեան նո յնիակ
 ձկն վարկիկանին վրայ:

Ե՛նչ է ն'արտու թեան պատու. էթլ անիկա ան-
 ձեզներուն զվերք պիտի չդառնայ:

Մարդկու թիւը, մարտիրոսներուն շարք երախ-
 տապարտ է իր ներկայացուցչական արկարծներուն:

Գու թիւ սիրոյ ձկն պարզ... Ատիկա ժխակ անան-
 գակու թիւ է, որուն պէտք ունի աշխարհ:

Բոյոր զմբախաները իննի նա առար կը նկատեմ,
 եւ կ'ընդունիմ գիրե՛ք այնպէս՝ ինչպէս որ էն:

Փ.Ա.Ն. ՓԻՄՄՍՈՒ

Համաշխարհային երկու Մեծ պատերազմներուն միջև ինկած ժամանակահատու ամին
 ձկն, Փան Փիրոսու կը նանդիանայ Փրանսական թատերգութեան ամէնէն արտական զվարկէն
 ձկնը. որուն անկզմու մները բուն իրանդազատանքով զիմաս որուն կշար ձեռնառու ն բնագործ-
 ներուն կողմէ՝ կու թու վկն միջին Փան Վէյոր ու սուպարկցին նուրայոյն ներկայացուցչները:
 Ըստ Փրանսացի ջննարկատներուն, գու արթնառու թիւը, վարկածային զու ամբները, նեյ-
 նանքն ու երկիսուս թեան փայտակու մները իրե՛նք են, որ մնայուն ն'անարգ մը օժտու ան կը
 պահեն Փիրոսու ի պարմերը, մա՛նաւ անց անոր զյու խաղաղուցները, սրունցով ձկնը կը նամարու ի
 նետազայ Վիերու թարգմանարար ներկայացուցչու ձեռնակալայի պատերազմը տեղի պիտի
 չու ճննայ խորագրակայ խաղը:

Փան Փիրոսու ննան է 1902ին, Պյաքի ձկն: Նախնական կրթութիւնը անկու ոյն գրայ
 ստանայլ ետք, ու սու մը կը շարու նակլ յաջորդարար Եւթերու ի եւ Լաբանայի յիւններուն ձկնը,
 իսկ 1909ին կը սկսի յանտիկէ կրայ նորմայ Միւ փերիտը, ու ի միջի այլոց կը ննան ի նակե զեր-
 մանական պարմեացներուն:

Համաշխարհային Առաջին Մեծ պատերազմի նախօրէին կը պորակոյն ի եւ իրեն յիսնու-
 պետ կը մասնակցի գինու որական բախտորոշ անկառամարտներուն: Կը ստանայ երկու վերք ու
 առան մը անկողնոյ կը ծառայի, իսկ պատերազմի աւարտին, գրականութեան արտնմէր՝ կը վա-
 րկ նակե գիւ անապիտական պաշտօնները:

Փամանակակից նիւթերու ներքով կատուցու ան իր թատերախաղերուն ն ջոփն ի վեր՝ Փի-
 րոսու իր գործերէն ձկն կարեւ որ մասին առուցըր ասան է Աւետարանէն, ինչպէս նակե յու նա-
 կան ու գերմանական առաջակներէն, յաջորդելով միշտ նա առարիմ մնայ թատերգութեան ոչ-
 բերդական սեր ուղլազանու թեան բնագործ, նուրը նուշակով ու մաքի ձկնու թեան մը վերանա-
 րոցան արու կառուցլտի իր նամբու ին:

Ըստ ատեական արտմադրութիւններով թատերական սուպարկ մուտք գործան Փիրո-
 սու ի ուր աստիճանարար կը սկսի ողբերգական կրակոյնի ստանայ, մա՛նաւ անց 1933ին ետք,
 կըր նիթերական փերմանիան սկսու: մա՛նայու սպասուայի մը գաւնայ ամբողջ Արուպայի նո-
 մար: Այս կապակցութեան մը բարացուցական օրինակ մըն է ձեռնակալայի պատերազմը, որ
 միամտանակ կ'անձնու որ յոյսն ու մարդկային ազատութեան ի խնդիր չգիտայակերմու ան բմ-
 րոսու թիւնը:

Փան Փիրոսու կը մեռնի 1941ին, առանց կարենայ տեսնելու Փրանսայի ազատարար-
 ութիւնը գերման գրասու ձկն:

ԺԱՆ ԺԻՐՈՏՈՒ

ՏՐՈՎԱԴԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ԶՈՒՆԵՆԱՅ

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ, ՏԷՄՈՔՈՍ

ՏԷՄՈՔՈՍ.— Այս ի՞նչ իրարանցում է: Ի՞նչ կ'ուզէ այս գիծով:

ՀԵՔՔՈՐ.— Ոչինչ: Ուզածը ունի:

ՏԷՄՈՔՈՍ.— Ի՞նչ կայ, Անարոմաք:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ոչինչ:

ՕՅԱՔՍ.— Երկու՛ն անգամ ույինչ: Յոյն մը կ'ապասկէ Հեքթորը և Հեքթոր կը լռէ:

ՏԷՄՈՔՈՍ.— Ճի՛շդ է, Հեքթոր:

ՀԵՔՔՈՐ.— Բացարձակապէս սխալ է, այնպէս չէ՛, Հելէն:

ՀԵԼԷՆ.— Յոյները մեծ ստախոսներ են: Տղամարդէ՛րը ըսելի կ'ուզեն:

ՕՅԱՔՍ.— Բնականօրէն մէկ երեսը միտէն աւելի կարժիր է:

ՀԵՔՔՈՐ.— Այո, իմ այս երեսը աւելի առողջ է:

ՏԷՄՈՔՈՍ.— Ճիշդը ըսէ, Հեքթոր: Համարձակեցաւ մե՞տք քարձարցնել վրաց:

ՀԵՔՔՈՐ.— Ատիկա իմ գիտնալիքս է:

ՏԷՄՈՔՈՍ.— Քո՛ւ գիտնալիքդ կրնայ ըլլալ միայն այն պարագային, երբ պատերազմի նարց մը կայ մէջտեղ: Ի վերջոյ դուն Տրոյադան կ'անձնաւորես:

ՀԵՔՔՈՐ.— Արդարեւ, արձանները չեն ապտակեր:

ՏԷՄՈՔՈՍ.— Ո՞վ ևս գու՛ն, վայրենի՛: Ես Տէմոքոսն եմ, Արչեթազոսի երկրորդ գաւակը:

ՕՅԱՔՍ.— Արչեթազոսի երկրորդ գաւակը: Ինչպէ՛ս ևս: Ըսէ ինձի, Արչեթազոսի երկրորդ գաւակը ապտակելը նոյնքան ծանրակշի՞ռ պիտի ըլլար, որքան Հեքթորը ապտակելը:

ՏԷՄՈՔՈՍ.— Նոյնքան ծանրակշի՞ռ, գի՛ն՛մ: Ես Մերակոյտին նախագահն եմ: Եթէ պատերազմ կ'ուզես, մա՛հու ան գնով պատերազմ, փորձէ՛:

ՕՅԱՔՍ.— Ա՛նա... կը փորձեն:

(Կ'ապտակէ Տէմոքոսը):

ՏԷՄՈՔՈՍ.— Տրոյադացիներ՛ը: Զինուորեն՛ը: Օղնու թի՛ւն:

ՀԵՔՔՈՐ.— Լո՛ւ՛, Տէմոքոս:

ՏԷՄՈՔՈՍ.— Ի զէն: Կը նախատեն Տրոյազան: Վրէ՛ժ:
ՀԵՔՔՈՐ.— Լուէ՛ կ'ըսեմ քեզի:
ՏԷՄՈՔՈՍ.— Պիտի պոտամ, զլիտու պիտի հաւաքեմ ողջ քաղաքը:
ՀԵՔՔՈՐ.— Լուէ՛...: Եթէ ոչ կ'ապտակեմ քեզ:
ՏԷՄՈՔՈՍ.— Փրիամ, անքիտեցինե՛ր, Էկէ՛ք, տեսէ՛ք Տրոյազայի ամօթը:
 Հեքթորի՛ն ղէմքով:
ՀԵՔՔՈՐ.— Ա՛ն:
 (Հեքթոր կ'ապտակէ Տէմոքոսը: Օյախ կը քրքչայ):

ՏԱՍՆԱԿԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆ ԱՂՁԵՐԸ. ՓՐԻԱՄ ԵՒ ՄԵՄԱՄԵՆՆԵՐԸ

Փրիամ եւ մեծամեծները կը խմբուին հոմ, ուրկէ մերս պիտի մտնէ Ողիսես:

ՓՐԻԱՄ.— Ինչո՞նք կը ճշայիր, Տէմոքոս:
ՏԷՄՈՔՈՍ.— Ապտակեցին զիս:
ՕՅԱԽ.— Գնա՛ Արչիքազոսին զանդատէ:
ՓՐԻԱՄ.— Ո՞վ ապտակեց քեզ:
ՏԷՄՈՔՈՍ.— Հեքթորը, Օյաքսը, Հեքթորը, Օյաքսը:
ՓՒՐԻՍ.— Ի՞նչ կը ցարտաէ: Խենթացա՞ծ է:
ՀԵՔՔՈՐ.— Չապտակեցինք զինք, այնպէս չէ՞, Հելէն:
ՀԵԼԷՆ.— Թէեւ լաւ կը նայի, բայց բան չտեսայ:
ՕՅԱԽ.— Երկու երեսներն ալ նոյն գոյնը ունին:
ՓՒՐԻՍ.— Բանաստեղծները յաճախ ատանց պատճառի կը ջղայնանան: Այդ ժկը իրենք կը կոչեն ներշնչում: Ասկէ է, որ ան պիտի յօրինէ մեր ազգային քայերգը:
ՏԷՄՈՔՈՍ.— Հաշի գ նտքը կը տեսնեմ, Հեքթոր...
ՉԱՅՆԵՐ.— Ողիսէ՛ւրը, ահա ասի՛կ Ողիսեսը...
 (Օյախ սիրալիք ձեռով մը կը մօտենայ Հեքթորին):
ՕՅԱԽ.— Պուստ, քաջակորով: Ազնիւ հակառակորդ: Հրաշայի ապտակ...
ՀԵՔՔՈՐ.— Լաւագոյնս ըրի:
ՕՅԱԽ.— Նաեւ հրաշայի մեւ մրն է: Ուժեղ արմուկ: Ճկուն բուռնցք: Ապա—
 հով՛ զաւստակն ու ափը: Գո՛ տուած ապտակդ աւելի զօրուս որ պէտք է ըլլայ, քան իմ տուածը:
ՀԵՔՔՈՐ.— Կը կասկածիմ:
ՕՅԱԽ.— Դու ն պէտք է հիանալիօրէն արձակես նետդ այս երկաթեայ բա—
 զուկով:
ՀԵՔՔՈՐ.— Եօթանասուն մէթը:
ՕՅԱԽ.— Յարզանքներս: Սիրելի Հեքթոր, ներէ ինձի: Ես ետ կ'առնեմ սպառնալիքներս: Չեմ հաշուեր տուած ապտակս: Մենք հասարակաց թշնամիներ ունինք, Արչիքազոսի զաւակները: Ես կը մերժեմ պատե—
 բազմ մզել անոնց ղէմ, որոնք ինձի պէս թշնամի են Արչիքազոսի զաւակներուն: Այլեւս չիօսինք պատերազմի մասին: Չեմ գիտեր, ի՞նչ Ողիսես ի՛նչ կ'որոճայ, բայց ինձի մզէ հարցին կարգադրութիւնը...
 (Կ'երթայ զիմաւորելու Ողիսեսը եւ ամոք հետ կը վերադառնայ քեմ):
ԱՆՏՐՈՍՄԱՔ.— Կը սիրեմ քեզ, Հեքթոր:

Հեթոթոր (երեսը ցոյց տալով)։— Այո, բայց անմիջապէս մի համբուրե՛ր զիս, կ'ըլլա՞նք։
ԱնՏրոնի։— Այո՛ ճակատամարտն այ շահեցար, վստահ եղիր։
Հեթոթոր։— Ես կը շահեմ ամէն ճակատամարտ, բայց վճարուելիք պիտը կը խուսափի իրաքանչիւր ճակատամարտի հետ։

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ՓՐԻԱՄ, ՀԵԹՈՐ, ՓԱՐԻՍ, ՀԵՔԻՒՊ, ՏՐՈՎԱԳԱՍՏԻՆԵՐԸ, ՆԱԻԱԶԸ, ՕԼՓԻՏԵՍ, ԻՐԻՍ։
ՏՐՈՎԱԳԱՍՏԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ, ՈՂԻՍԵՒՍԸ, ՕՅԱՔՍ ԵՒ ԻՐԵՆՑ ՀԵՏԵՒՈՐԻՆԵՐԸ

ՈՂԻՍԵՒՍ։— Կ'ենթադրեմ, որ զուրք Փրիամն ու Հեթորն էք։
ՓՐԻԱՄ։— Նայե՛ր իրենք։ Եւ իրենց կախն՝ Տրովագան, եւ Տրովագայի արուարձանները եւ Տրովագայի գիւղը, եւ Հելլենագոնար։ Եւ փակ բոուսեցքի նմանող այդ Լրիկորը Փոիզիան է։ Դուք Ողիսէ՛ն, ո՞ն էք։
ՈՂԻՍԵՒՍ։— Այո։
ՓՐԻԱՄ։— Եւ ահա ափիկ Անքիւր։ Եւ անոր կախն՝ Թրակիան, Պոնտոսը եւ այդ բաց ձեռքը, որ Տուրիան է։
ՈՂԻՍԵՒՍ։— Դիւ անապիտական հանդիպու մի մը համար այսքան մա՛րդ։
ՓՐԻԱՄ։— Եւ ահա ափիկ Հելլէնը։
ՈՂԻՍԵՒՍ։— Բարեւ, թող ու՛նի։
ՀԵԼԷՆ։— Ես հոս երիտասարդացայ, Ողիսէս։ Ես հիմա իշխանուհի եմ։
ՓՐԻԱՄ։— Մենք պատրաստ ենք ձեզ յանդու։
ՕՅԱՔՍ։— Ողիսէս, զո՞նք Փրիամին հետ խօսէ, իսկ ես Հեթորին հետ կը խօսեմ։
ՈՂԻՍԵՒՍ։— Փրիամ, եկած ենք Հելլէնը տանելու։
ՕՅԱՔՍ։— Կը հասկնա՞ս, այնպէս չէ՞, Հեթոր։ Այսպէս չենք կրնար զիմաստրել հարցերը։
ՈՂԻՍԵՒՍ։— Յու՛նաստանը եւ Մենեյար վրէժ կը գոռան։
ՕՅԱՔՍ։— Եթէ խարուած ամուսինները վրէժ չգոռային, ուրիշ ի՞նչ պիտի մնար իրենց ընկիւնք։
ՈՂԻՍԵՒՍ։— Վերագարձուցէք Հելլէնը մեզի մէկ մամէն, այնպէս հոչակուած համարեցէք պատերազմը։
ՕՅԱՔՍ։— Կը մնայ մնաք բարոյ ըսելի։
ՀԵԹՈՐ։— Եւ կը վերջանա՞նք։
ՈՂԻՍԵՒՍ։— Այո։
ՕՅԱՔՍ։— Երկար չեզուս, չէ՞, Հեթոր։
ՀԵԹՈՐ։— Ուրեմն եթէ մենք Հելլէնը վերագարձենք ձեզի, երաշխաստորած կ'ըլլաք մեր խաղաղութիւնը։
ՕՅԱՔՍ։— Եւ անդ որո՞ւթիւնը։
ՀԵԹՈՐ։— Եթէ այս տամուսն Հելլէնը նաւ բարձրանայ, ինդիքը փակուած կը համարուի։
ՕՅԱՔՍ։— Եւ ամէն ինչ մոռցուած։
ՀԵԹՈՐ։— Կը կարծեմ, թէ պիտի կարենանք համաձայնիլ, այնպէս չէ՞, Հելլէն։
ՀԵԼԷՆ։— Այո, կը կարծեմ։
ՈՂԻՍԵՒՍ։— Ըսե՛լ կ'ուզես, որ Հելլէնը պիտի վերագարձուի՞ մեզի։

ՀԵՔՔՈՐ— Ճիշդ այդ պէս: Ան պատրաստ է ճամբայ ելլելու:
ՕՅԱՔՍ— Ինչ կը վերաբերի իրերուն, Հելէնը բերածէն աւելի շատ բան պիտի տանի Հետը:
ՀԵՔՔՈՐ— Մենք պիտի վերադարձնենք Հելէնը, իսկ դուք պիտի ապահովէք խաղաղութիւնը: Ասկէ հտք ո՛չ Հատուցում, ոչ ալ վրէժխնդրութիւն, չէ՛:
ՕՅԱՔՍ— Կորսուած էր կին ճը, որ գտնուեցաւ: Կը նշանակէ բան չէ փութուած: Հոյակա՛պ: Այդպէս չէ՛, Ողիսես:
ՈՂԻՍԵՒՍ— Ներողութիւն, չեմ կրնար երայխաւ որեւէ: Որպէսզի ճենք Հրաձորինը բոլոր Հատուցումներէն, պէտք չէ որ պատրուակներ գոյու՝ թիւն ունենան: Անհրաժեշտ է, որ Մենեյաս գտնէ Հելէնը առհաւան՝ գուժի պահուէն ներկայացուցած վիճակով:
ՀԵՔՔՈՐ— Մենեյաս ինչէ՞ն պիտի Հասկնայ կատարուած փոփոխութիւնը:
ՈՂԻՍԵՒՍ— Աժու սին ճը զգայու ն է, երբ Համաշխարհային դայթակղութիւն ճը գինք զգուշացուցած է: Պէտք էր, որ Փարիսը յարգէր Հելէնը: Բայց չէ յարգած:
ԱՄԲՈՆԸ— Օ՛, ո՛չ: Ձէ՛ յարգած:
ՁԱՅՆՆԵՐ— Իրապէս չէ յարգած:
ՀԵՔՔՈՐ— Իսկ եթէ՞ յարգած է:
ՈՂԻՍԵՒՍ— Ինչ բռնի կ'ուզես, Հեքթոր:
ՀԵՔՔՈՐ— Փարիս չէ Հոյա՛ծ իսկ Հելէնին: Երկու քն ալ խոտտովանեցան ինծի:
ՈՂԻՍԵՒՍ— Այս ինչ անհեթեթ պատմութիւն է:
ՀԵՔՔՈՐ— Իրականութիւն է, չէ՛, Հելէն:
ՀԵԼԷՆ— Ինչո՞ւ տարօրինակ կը թուի:
ՁԱՅՆ ՄԸ— Ահա ինչ է: Մենք անպատու ըւած ենք:
ՀԵՔՔՈՐ (Ողիսեսին) — Ինչո՞ւ կը ժպտիս: Հելէնին պարտականութեան ճէջ թերացման որեւէ նշան կը տեսնե՞ս:
ՈՂԻՍԵՒՍ— Նճան բան ճը չեմ փնտրեր: Բազին վրայ ջուրը աւելի յստակ կ'ըրիւի, քան բիծ ճը՛ կ'նոջ ճը վրայ:
ՓԱՐՍՍ— Չմտնաս, որ թագուհի ճը Հես կը խօսիս:
ՈՂԻՍԵՒՍ— Բնականաբար բացատուութիւն պէտք է ըլլայ թագուհիներուն: Ուրիճն, Փարիս, դուն առհաւանգած ես այս թագուհին, եւ առհաւանգած ես գինք՛ ճօրէ՛ ճերկ, եւ կը կարծեմ, որ զբաւոնով չիջար ջուր: Ըսէ ինծի ցանկութիւն չու նեցա՛ր:
ՓԱՐՍՍ— Մերկ թագուհի ճը արժանաւորութեամբ Հանդերձուած կ'ըլլայ:
ՀԵԼԷՆ— Իր ճիակ ճտանողութիւնը այդ արժանաւորութենէն չճերկանայի ն է:
ՈՂԻՍԵՒՍ— Որքա՞ն տեսած է ճամբորդութիւնը: Ինճէ՛ երեք օր առաւ անիկա եւ իճ նաւերս ճերկնեմէն աւելի արագ են:
ՁԱՅՆՆԵՐ— Ի՞նչ են ճրովագայի նաւատորմիդին եղած այս անհանգուրճելի նախատիքները:
ՁԱՅՆ ՄԸ— Ձեր Հովի՛րը աւելի արագ են, ոչ թէ նաւերը:
ՈՂԻՍԵՒՍ— Ըսենք երեք օր՛ եթէ կ'ուզէք: Թագուհին ո՞ւր կը գտնուէր այդ երեք օրու ան ընթացքին:
ՓԱՐՍՍ— Կամըջակին վրայ երկարած էր:
ՈՂԻՍԵՒՍ— Իսկ Փարի՛սը: Ի՞նչ արարածն էր վրայ:
ՀԵԼԷՆ— Քո՞վս երկարած էր:
ՈՂԻՍԵՒՍ— Կը կարգա՛ր, ճո՛ւկ կ'որսար ճովդ:
ՀԵԼԷՆ— Երբե՛մ կը Հովի՛ր գիս:
ՈՂԻՍԵՒՍ— Առա՞նց երբեք Հպելու քեզի:
ՀԵԼԷՆ— Երկրորդ օրը ճնոքս Համբուրեցի:

ՈՂԻՍԵՒՍ— Զե՛ոքդ: Կր հասկնամ: Անտաշ մարդու բարեւրջու՞մ:

ՀԵԼԷՆ— Նախամեծար համարեցի չնշմարել ատիկա:

ՈՂԻՍԵՒՍ— Նաև ուն տատանո՞ւմն ալ իրարու գիրկ շնեակց ձեզ...: Կը կարծե՞մ, որ Տրոփագայի նաւատորմը անարգած շնեք ըլլար, եթէ ըսենք, որ նաւերը կր տատանին...:

ԶԱՅՆ ՄԸ— Աւելի նուազ կը տատանին, քան յունական նաւերը:

ՕՅԱՔՍ— Տատանի՛ր, այն այ յունական նաւերը: Եթէ այդպէս կր թուի ըլլալ, պատճառը այն է, որ բարձր են անոնց ցուռ կները, եւ յետամուսերը՝ թւթիւ...:

ԶԱՅՆ ՄԸ— Օ՛, այո՛, ճիշդ ու ճիշդ յունական, քիթը բարձր, եւ յետամուսը՝ տափակ:

ՈՂԻՍԵՒՍ— Իսկ երեք գիշերնե՛րը: Զեր վրայ ուսողերը երեք անգամ փայլեցան եւ մարեցան երեք անգամ: Այդ երեք գիշերներէն բնա՛ւ յիշատակ չմնաց քեզի, Հելէն:

ՀԵԼԷՆ— Ինչպէ՛ս թէ, թէ ճնայ կը մոռնայի: Աւելի խորացայ ասողագիտութեան մէջ:

ՈՂԻՍԵՒՍ— Պատկած պահու՞ղ, թերեւս, ան քեզ ասաս...:

ՀԵԼԷՆ— Մտե՛ղ ճը արթնցուց զիս...:

ՀԵՔՏՈՐ— Երկուքն ալ պիտի երգնուն, դիցու՛հի Աֆրոդիտի անու նով:

ՈՂԻՍԵՒՍ— Այդ շնորհը կ'ընեն իրենց: Ես լաւ կը ճանչնամ Աֆրոդիտէն: Իր սիրեցեալ երգու՞մը սուտ երգու՞մ է...: Հետաքրքրական պատմութիւն, որ պիտի ոչնչացնէ Արշիպիղադոսի մէջ որ ճը տրոփագայիներ ասպրած ըլլալու իրականութիւնը:

ՓԱՐՏՍ— Ինչո՞ւ, Արշիպիղադոսին մէջ ի՞նչ կը մտածեն տրոփագայիներու մասին:

ՈՂԻՍԵՒՍ— Կը կարծուի, որ անոնք մեզմէ նուազ օտուած են զործանաւորական մէջ, բայց աւելի զեզեցիկ են ու անգիմազրելի: Շարունակէ խոստովանութիւններդ, Փարիս: Բնախոսութեան Հետաքրքրական բաժին մըն է ատիկա: Ի՞նչ կը պատճառը, որ քեզ ձեզ յարգելու Հելէնը, երբ չու արամազրութեանց ասկ կը գտնուէր ան...:

ՓԱՐՏՍ— Ես... ես... կր... սիրի՛ր զիս:

ՀԵԼԷՆ— Ողիսիւս, եթէ դու ն չես գիտեր, թէ ինչ է սերը, նման նիւթեր մի արծարծեր:

ՈՂԻՍԵՒՍ— Խոստովանէ, Հելէն, որ դու ն պիտի չ'հետեւի՛ր Փարիսին, եթէ գիտնայիր, որ տրոփագայիները անկարող են...:

ԶԱՅՆ ՄԸ— Աժօ՛թ...:

ԶԱՅՆ ՄԸ— Բերանը կապեցէք:

ԶԱՅՆ ՄԸ— Կի՛նդ բեր եւ կը տեսնես:

ՈՒՐԻՇ ԶԱՅՆ ՄԸ— Եւ մե՛ծ մայրդ:

ՈՂԻՍԵՒՍ— Լաւ չկրցայ բացատրել ինքզինքս: Եթէ Փարիսը, միայն գեղեցիկ Փարիսն անկարող եղած ըլլար...:

ԶԱՅՆ ՄԸ— Փարիս, պիտի խօսի՛ս, թէ ոչ: Աշխարհի ծագը ու ծանա՛հ պիտի գարձնես մեզ:

ՓԱՐՏՍ— Հեքթոր, նայէ, թէ ինչ ա՛նձնէ կացութեան մէջ կը գտնուի՞մ:

ՀԵՔՏՈՐ— Մէկ վայրկեան այ համբերէ՛...: Մնաս բարով, Հելէն: Կր յուսամ, որ քու արաքիտութիւններդ նոյնքան նշանակալից զատնան, որքան կրնայ եղած ըլլալ քու գիւրա՛նաւատութիւնդ:

ՀԵԼԷՆ— Ատիկա չի մտահոգեր զիս: Դարերը մեզի մէջու կու տան այն արժէքը, որ ունինք:

ՈՂԻՍԵՒՍ— Փարիս անկարողը, լա՛ւ վերագիր... Անկամի մը համար կրնաս
համբուրել զինք, Հելլեն:

ՓԱՐԻՍ— Հեթո՛ր:

ԱՌԱՋԻՆ, ՆԱՒԱՋԸ— Զօրագար, պիտի հանդուրժե՞ս այս խեղդատակու-
թիւնը:

ՀԵՔՔՈՐ— Լու՛կ, հրամայողը է՛ս եմ հոս:

ՆԱՒԱՋԸ— Քիչ հրամայող մը: Մենք՝ Փարիսի նաւ ազնեւք, չենք կրնար այ-
լիւս հանդուրժել: Ես ինքս պիտի բռնեմ, թէ ինչ բրած է Փարիս ձեր
թապուհին հետ...

ՉԱՅՆԵՐ— Պառօ՛ւ, թո՛ղ խօսի:

ՆԱՒԱՋԸ— Եղբոր հրամանով ինքզինք կը դռնէ: Ես պաշտօնի վրայ էի:

ՀԵՔՔՈՐ— Կը սխալիս:

ՆԱՒԱՋԸ— Կը կարծէք, թէ արտագայի նաւաստի մը չի գիտե՞ր, թէ ինչ կը
տեսնէ: Երեսուն քայլէն ետ կրնամ ճշդիլ թռչուի մը էգ կամ արու
բայալը: Մտտո եկուր, Օյփիտես: Ան այդ դիտարան կը գտնուէր: Վերջն
ամէն ինչ կը տեսնուէր, մա՛նաւանդ շտեմարանի աստիճաններուն
մէջէն, որոնք ունէին գլխուս բարձրութիւնը: Հոն կանգնած էի,
ինչպէս կատու մը կը կանգնի անկողինին գիծաց: Տրտապացիներ,
պէ՛տք է այս բոլորը ըսել իրեն:

ՀԵՔՔՈՐ— Լոտո թի՛ւն:

ՉԱՅՆԵՐ— Ըսէ, բռն:

ՆԱՒԱՋԸ— Եւ երկու վայրկեան չէր Լիզա՞ն անոնց նաւ բարձրանալը: Այդ պէս
չէ՞, Օյփիտես:

ՕԼՓԻՏԵՍ— Միջոց մը, որ հազիւ թագուհին թոյլ կու տայ շորցնելու մարմի-
նը եւ յարգարկու մազերը: Կը կասկածի՞ք, որ ես վերէն կրնայի
տեսնել թագուհին խազը՝ ճակատէն մինչեւ Ծոծրակ:

ՆԱՒԱՋԸ— Բոլորը նաւուն ներքնայարկը զրկեց, ի բաց առեալ երկու քէս, որ
վրիպած էինք ու շաղրու թէնէն:

ՕԼՓԻՏԵՍ— Եւ առանց նաւապետի նաւը կը ծփար գէպէ հի սիս: Առանց հո-
գու՝ առաջատուր վքուած էր:

ՆԱՒԱՋԸ— Եւ իմ դարանէս, երբ միայն մէկ մարմին պէտք է տեսնելի, լժան
օրը մէկի տեղ տեսայ երկու մարմին, հաճարի հաց մը՝ ցորենի հացի
մը վրայ...: Հացէր, որոնք եփուելով կ'ունենին: Իրական թխուածք
մը:

ՕԼՓԻՏԵՍ— Իսկ ես, վերէն, շատ յաճախ տեսայ միայն մէկ մարմին, երբեմն
սպիտակ՝ ինչպէս նաւազր կ'ըսէ, իսկ երբեմն՝ սպիտոյն: Չորս ձեռք,
չորս սրունք...

ՆԱՒԱՋԸ— Այսքանը՝ անկարողութեան մասին: Իսկ ինչ կը վերաբերի բարո-
յական սերին, Օյփիտես, բռն ինչ որ դարանէկ կը լսէիք: Կիներու
խօսքերը կը բարձրանան երկինք, իսկ մարդոց խօսքերը կը մնան
գետնին վրայ: Պիտի բռնեմ, ինչ որ Փարիսը կ'ըսէր...

ՕԼՓԻՏԵՍ— Հելլենը գայի կոչեց իր թու թակը, իր կատուն:

ՆԱՒԱՋԸ— Իսկ Փարիսը Հելլենը կոչեց իր կատու սախի ծը, ինձք: Երջուած էին
սեռերուն գիրքերը: Ինչպէս Ծանօթ է, ատիկա գուրգուրանքի ձեւ
մըն է:

ՕԼՓԻՏԵՍ— Դուն իմ հանճարենիս ես, կ'ըսէր նաեւ Հելլենը: Ճիշդ հաճարենի
պէս կը գրկեմ քեզ: Մոզուն վրայ ծառերուն մասին կը մտածենք:

ՆԱՒԱՋԸ— Եւ դուն, իմ ցարսախս ես, կ'ըսէր Փարիս Հելլենին: Իմ գողոցուն
ցարսախս: Եստ յաւ կը լիւնեմ ցարսախս բառը, որու սակաւն Ծառ մըն է
անիկա:

ՈւփՏեմ— Ստիպուեցայ ճնայ գիտարտերն ձկն ձիւնչի պիւր: Անօթի եւ ծարաւ: Եւ ճնայեալը...

ՆԱԻԱԶԸ— Եւ երբ գրկախառնու մը կը վերջանար՝ իրար կը հոտուբուսային, որովհետեւ անոնց մարմիններու ն վրայ աղ կը կապէր:

ՆԱԻԱԶԸ— Ահա առիկ, թէ ի՞նչ կրնար ընել զու: Պէտքուպէղ այդ անկարողին հետ:

ԶԱՅՆԵՐ— Պուս օ՛, պուս օ՛:

ԿՆՈՋ ԶԱՅՆ ՄԸ— Փա՛ռք Փարիսին:

ԶՈՒԱՐԹԱԽՈՆ ՄԱՐԴ ՄԸ— Վերադարձենք Փարիսին ինչ որ Փարիսին կը պատկանի:

ՀԵՔՔՈՐ— Սուտ կը խօսին, այնպէս չէ՞, Հէյէն:

ՈՂԻՍԵՒՍ— Հէյէնը հմայուած մտիկ կ'ընէ:

ՀԵՅՆ— Մոռցայ, որ իմ մտախ կը խօսէք: Այս մարդերը համոզուած են իրենց բաժնեկրու:

ՈՂԻՍԵՒՍ (Փարիս)— Հիմա կրնա՞ս համարձակ ընել, որ կը ստեն:

ՓԱՐԻՍ— Մանրամասնութիւններուն ձկն՝ այո, զիչ մը:

ՆԱԻԱԶԸ— Ո՛չ հիմնականին, ոչ այ մանրամասնութեան ձկն, այնպէս չէ՞, Օլփիտես: Սիրոյ այդ արտայայտութիւնները կը հերքէ՞ս, գորտփոր: Կը հերքէ՞ս կատուառիծ բառը:

ՓԱՐԻՍ— Ոչ անպայման:

ՆԱԻԱԶԸ— Իսկ ցարասի՞ բառը: Կը հասկնամ: Դողդոջու ն ցարասի բառն է, որ չփոթի կը մասնէ քեզ: Որո՞ւ հողը, գործած եւ արդէն: Կերդնու՞մ, որ գործած եւ: Մի:ս կողմէ՛ ցարասի բառին ամշնայու պատճառ չկայ: Զմեռը, կասպից ծովու ափերուն, եւ տեսայ գողդոջուն ցարասիներ, իսկ միւսին վրայ, պարապութենէն բաժնուած իրենց սեւ կեղեւներուն գիմաց, մենք հարց կու աայինք, թէ ո՞վ վեր կը բռնէ բարուսակները: Եւ ամբոն կիտուն տեսած եմ անոնցմէ Ասարախանի մտիկ իրանցքին ձկն, իսկին ծառ բուսնոյ սուսկերու նման իրենց հերձակ մասանիներով, որոնք այնքան վեհ են, որքան մեղկ է ուռնիին: Եւ եթէ անոնց վրայ կը նստին մտերայոյն ու սեւ ազուսներ, ամբողջ ծառը կը ցնցուէր, կտաբելու շափ կը ծայուէր, իսկ եւ ջարեր կը նստէի, միւսին որ թոյլին անոնք: Այն ասան բոլոր տերեւները կը խօսէին եւ նշան կ'ընէին ինծի: Եւ երբ կը տեսնես ձկն երեսը ոսկեղոյն, եւ միւսը՝ արծաթազոյն տերեւներուն տարուբերու մը, սիրտը կը գգաս գործածութիւն: Կրնայի յուզու՞մէս լայ, այնպէս չէ՞, Օլփիտես: Ահա՛ թէ ինչ է ցարասին:

ԱՄԲՈՒԸ— Պուս օ՛, պուս օ՛:

ՈՂԻՍԵՒՍ ՆԱԻԱԶ ՄԸ— Եւ միայն նուաղը եւ Օլփիտեսը չէին, որ տեսան զանոնք, Փրիմա: Ետեմարանի պաշտօնակալին միւսին երկրորդական գործաւորները, ամէնքս նուսն պատուհաններէն գուրս կ'էրան, ու տախտակամանին կծկումը՝ կը գիտէինք ցանցին վրայէն: Նուր չինու անք մըն է, որ գիտելու կը ծառայէ:

ԵՐԲՈՐԴ ՆԱԻԱԶ ՄԸ— Ետեմայու սերը:

ՈՂԻՍԵՒՍ— Ահա՛ թէ ինչ, Հէքթոր:

ՀԵՔՔՈՐ— Ամէնքդ շոնցէր:

ՆԱԻԱԶԸ— Դեհ, այդ մէկն այ յուկցոր:

(Իրիս կ'երեւի երկիւմէին մէջ):

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ— Իրի՛սը, Իրի՛սը:

ՓԱՐԻՍ— Ափրոզիակ՞ն զրկեց քեզ:

ԻՐԻՍ— Այո, Ափրոզիակն: Ան պարտականութիւն տուա ինծի, մեղք բանկու:

որ սէրը աշխարհի գլխաւոր օրէնքն է: Ինչ որ կը կրկնապատկէ սէրը՝ կը սրբանայ, սուտը ըլլայ անիկա, ազատութիւնը թէ փարթաժուութիւնը: Անիկա իր հովանաւորութեան տակ կ'առնէ ամէն սխաւար, թագաւորէն մինչեւ հովիւր, անձի մը միջոցաւ: Կը կրկնեմ. անձի՛ մը միջոցաւ: Եթէ նման մէկը կայ հոս, թող որհնեայ ըլլայ: Եւ ձեզի, Հեքթոր եւ Ողիսեւս, ձեր երկուքին ալ կ'արգիլէ Փարթուր բաժնեկէնէն: Այլապէս պատերազմ տեղի պիտի ունենայ:

ՓԱՐԻՍ, ԾԵՐՈՒՆԻՆՆԵՐ.— Ենորհակալութիւն, Երբո:

ՀԵՔՏՈՐ.— Իսկ Աթենաս Պալլասէն որեւէ պատգամ չկա՞յ:

ԻՐԻՍ.— Ինչպէ՞ս չէ: Աթենաս Պալլաս պարտականութիւն տուաւ ինձի ըսելու ձեզի, որ խելքն է աշխարհի գլխաւոր օրէնքը: Ամէն սխաւար կը խենթանայ, կ'ըսէ ան: Աթենաս Պալլաս ձեզմէ կը խնդրէ անկեղծօրէն խոստովանիլ, թէ կա՞յ աւելի յիմար տեսարան, քան, աշխարհը հասնուցող, կամ ճանճ մը՝ ճանճին: Պալլաս աստածուհին չի պընդեր: Ան կը հրահանգէ ձեզի, Հեքթոր եւ Ողիսեւս, տառնց վարտածի բաժնեկէնէնը գանդրահեր Փարթուսէն: Այլապէս պատերազմ տեղի պիտի ունենայ:

ՀԵՔՏՈՐ, ԿԻՆՆԵՐԸ.— Ենորհակալութիւն՝ Երբո:

ՓԻՒԱՄ.— Օ՛, գաւազ, ո՛չ Ափրոզիանն է եւ ոչ ալ Աթենաս Պալլասն է, որ կը կատաղարէ տիկնոջը: Իսոյ այս անորոշութեան մէջ Ձե՛ւք ինչ կը թելադրէ ձեզի:

ԻՐԻՍ.— Աստուածներու հայր Ձեւք կ'ըսէ, թէ անոնք, որոնք միայն սէրը կը տեսնեն աշխարհի մէջ նոյնքան յիմար են, ո՛րքան անոնք, որ չեն տեսներ սէրը: Աստուածներու հայր Ձեւք կ'ըսէ, թէ իմաստութիւնը կը կայանայ երբեմն սիրելու եւ երբեմն չսիրելու արարքին մէջ: Մասնաւորապէս կը նարգիստով ցանուած մարգարէներէնը, իր խոսարհ եւ իշխանական կարծիքով, նոյնքան փափուկ են անոնց համար, որոնք վրայ կամ կողք կողքի կ'երկնան, կամ կը կարգան, կամ կը շնչեն մարգարէներին օգտուն միջոցառումը, կամ կը մտածեն ընթրիքին մասին եւ կամ ալ հանրապետութեան: Հեքթորին եւ Ողիսեւսին կը մնայ ուրեմն Հելէնն ու Փարթուր բաժնեկէնէնը, չբաժնեկէնէն իրարմէ: Ձեւք կը հրահանգէ, որ բոլոր միւսները հետանան եւ գէժ յանդիման ձգեն բանակցողները: Եւ բանակցողները այնպէս կը գտնուին որքան հարցերը, որ պատերազմ տեղի չունենայ: Այլապէս ան կ'երգանու, եւ գուցէ գիտէք, որ տեղը սպառնալիք չէ ըրած, ան կ'երգանու, որ պատերազմ տեղի պիտի ունենայ:

ՀԵՔՏՈՐ.— Հրամանեղ, Ողիսեւս:

ՈՂԻՍԵՒՍ.— Հրամանեղ:

(Թալարը կը փաշուի՞ն քիսէն: Երկիմեքիմ մէջ կը տեսնուի խոշոր էշարժ մը):

ՀԵՆՆԷ.— Իրբերն բնաւորութիւնն է էշարժը ձգելու համար:

(Շար. 5)

ԺԱՆ ԺԻՐՈՏՈՒ



Իմացական Հարժուճ

ՎԵՐՍՄԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Հետագայ էջերուն տրուած գրութիւնները պէտք է մաս կազմած ըլլային գոր-
բայութեան հրատարակչութեան առիթով երկու տարի առաջ կազմուած «ԲՈՒՅԻՆ»-ի
բացատրիկին, բայց տուեալ աշխատանքը աւարտած էր սրբէն, երբ մեր ձեռքը հասան
անոնց աղբիւրները:

Ճիշդ է, որ 128 էջերու իր ծաւալով «ԲՈՒՅԻՆ»-ի բացատրիկը բաւարար զաղափար
մը կրու տար համայնաժամ սակաւապետութեան տակ բացատրիկ երեւոյթ հանդիսացող
բացատրութեան մասին, այսուհանդերձ, անարդար պիտի ըլլար հայրենի մամուլէն
հետու ապրող ընթերցողը զրկել հաս մէկտեղուած գրութիւններէն, որոնք ստորա-
գրուած են ստալինեան սահմակեցուցիչ դամանութիւնները ի տղայ տիպ ճաշակած ու
բրեժնեւեան ճահիճներէն յամենայնի յազեցած գրական ծանօթ զէմբերու կողմէ:

Չհաշուած երկու շաբաթ երկու կէտ զործածելու իր խոցելի կողմերը ու բացա-
ռելով իր օրոք առաջացած տեսեսական ճղնամամբ, հրատարակչութիւնը բարե-
զէպ երեւոյթ մը հանդիսացաւ կարմիր մականին տակ հեծող ու ազդեցութեան դատ-
ներուն մէջ շնչահեղձ ժողովուրդներու, հայրենիքներու թէ անհատներու կեանքին
մէջ: Անիկա առնուազն շափով մը վերցուց երկաթէ վարադայրը ու պարզեց մարդկա-
յին կորուստներուն թիւը, ապրուած տառապանքներուն շափը, անտեսուած որժէք-
ներուն ապրումն ու ազատութեան միամուտը պապակը...

Ընծայած այս առաւելութիւններուն համար հաշտ աչքով շրիտուեցաւ անիկա
«Զօրանոցային կոմունիզմին» ծառայագրուած ստալինեան շրջանի ստրկամիտե-
րուն ու բրեժնեւեան օրերու լնամուտներուն կողմէ, որոնցմէ ոմանք, կ'ըսեն լաւատեղ-
եակները, զօրանոցային նախկին համակարգը փրկելու խորամանկութեամբ սկսան
անմիջապէս առաջատա պարզել նոր հովերուն, իսկ ուրիշներ բացայայտ պայքար մը
սկսան իրողութիւնները իրենց անուններով կողմու գորբայութեան թողլուութեան
դէմ, առանց անդրադառնալու, որ ըստ ով այսօր պայքարում է ընդդէմ հրատարա-
կչութեան, պայքարում է յանուն իր ստրկացման»:

Այս տեսակէտը առ այսօր կը մնայ ուժի մէջ, այլապէս շատոնց հրատարակ կու
զար ծանօթ խորհրդայինը, միլիոններու աշխարհում եւ ուրիշ միլիոններու ստրկաց-
ման դնով միայն իշխած այն համակարգը, որուն երկրորդ գալուստը, Աստուած մի
արասցէ, զկը յանգեցնի զիկտատուրայի եւ զիկտատորի, որք կողքին Ստալինը ման-
կապարտէզ կը թուայ»:

Գրութիւնները տրուած են իրենց գրածան թուականներուն կարգով:



Արժուկազիր, Թարգմանիչ և բեմադիր Ռուբեն Թովսփեան ծնած է 5 Մայիս 1939ին, Երևան: 1956ին կ'աւարտէ Հոկտեմբերեան ցարգաթի N°1 գոյրացի, իսկ 1962ին՝ Երևանի պետական համալսարանի Լեզուաբանական քամբը:

Երկու տարի իբրև Երկրաբան Փուրջեմետանի ձկն աշխատակց է աշխատել հար, 1965ին կը հաստատուի Երևան և ժինչև 1966 կը պաշտօնավարէ ՀԱՍԱՆ-ՊԱՐՈՅ օրամերթի ձկն իբրև արու հասի և գրականութեան քամբի ժամբչ, այսու, 1966-68 տարիներու ՎԿՅԱԿԱՆ թերթի ձկն: 1970-74 տարիներու կը առանձնէ ՎՊՈՎՏԱԿԱՆ գրականութիւնն ամսագրի արժուկ բաժնի ժամբչի պաշտօնը:

1975ին, Ռ. Թովսփեան կը ձեկնի Մուկուա և Երկու տարի կը հետևի քեմազրու թեան քարձրագոյն գաւրնաբանութեան: 1976ին, կը վերադառնայ Երևան և պաշտօն կը ստանձնէ գրական տարբեր օրգաններու ձկն, ժինչև 1979 կը պաշտօնավարէ Հայրենի պատկերաստփութի և ժայնապիտի կոմիտէի ձկն՝ ստանձնելով պատասխանատու պաշտօններ: 1980-81 տարիներու կը պաշտօնավարէ ՎՊՈՎՏԱԿԱՆ գրականութիւնն ամսագրի ձկն իբրև գրական - գեղարու հասական գրականութեան քամբի ժամբչ: 1981ին կը միանայ ՎՊՈՎՏԱԿԱՆ գրագո հրատարակչութեան խմբագրական կազմին, իսկ իբրև գեղարու հասական գրականութեան խմբագրութեան ժամբչ, այսու, Յուլիս 1982ին սկսեալ իբր գլխաւ օր խմբագրութի: 1983ին կը նշանակուի ՎՊՈՎՏԱՆ ամսագրի գլխաւ օր խմբագրութի:

Ռ. Թովսփեան ջարդ հրատարակած է շուրջ տասը հատորներ, որոնց գլխաւ որներն են՝ «Որոննու մանր», «Ամենատաւ երկիրը», «Երկու վիպակ», «Ապրիլ» և «Երկար, Իրաչաի օր» անուն պատմաանքներու և վիպակներու գիրքերը: Ռ. Թովսփեանի բեմադրութեան քամբ՝ «Հայֆիլմ»-ը նկարահանած է «Նճան», «Ամենատաւ երկիրը», «Ապրիլ» և «Երկարի այգին» անուն ժայնապիտները:

Ռ. Թովսփեանի բնարջ վիպակներն և պատմութեանքներն ոմանք թարգմանու ան են ուսներնի և այլ լեզուներու, իսկ ինք ուսներնէ հայացու քամ է Կարպիլ Կարսիս Մարտիկի շարիւր տարուայ մեծութիւն և Լեւ Քոչարիւի ՎՊՈՎՏԱԿԱՆ և ՎՊՈՎՏԱԿԱՆ արժուկ քամբի անուն վիպերը: Ան նաև արժանացած է Կրեմլի Գեղարու անուն արջանակին՝ 1980ին:

Մենք գաւակներն էինք վախեցած, նզմուած, գրնդակահարուած, ախարուած, անհետ կորած, գերի ընկած, հաշմանդամ հայրերի, ով չկար՝ անունն էր արատաւորուած, ով կար՝ գոյութիւնը:

Ազգը ազգ է դառնում, մաքրում է նաև խոստովանութեամբ: Եթէ հնարաւոր է՝ պիտի ներենք մեզանչողներին, եթէ աներբաժեշտ է դատապարտենք յանցաւորներին, բէկուգել յետմահու: Յետմահու արդարացման պահանջն է՝ յետմահու դատապարտումը:

Առաջին հերթին պիտի խորտակենք մեր հոգիներում ծանրացած վախի ծնունդ դարպասները: Ինչի՞ց ենք սարսափում, ինչպէ՞ս կարելի է սարսափել պատմութիւնից: Թող սարսափի նա, ով ոնիր է գործել, ով այսօր էլ ծանր մղձաւանջներ է ունենում, խեղդում իր իսկ ձեռքով թափած արեան մէջ: Թող սարսափի դաւաճանը, մատնիչը, հացկատակը, սողունը...

Ռ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

**— ԼՈՅՍ՝ ՀԵՌԱԻՈՐ ՈՒ ՄՕՏ, —
ԱՅՍՕՐ ՈՒ ՎԱՂԸ ՍՏԵՂՈՒՈՂ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ —**

Իմ սերունդը գանդաղ էր հասունանում: Ամէն իմաստով: Հողեւոր ասուժով՝ առանձնապէս ձեռնարկուել էր գրեթէ ամէն ինչ, որ մենք գանդաղ հասունանայինք եւ կամ մնայինք ահա: Մեզ յատկացուած հողեւոր գար- գացման կղզեակն ապրում էր առանց յիշողութեան, — յիշողութեան նաև էին խորտակել: — Եւ այդ կղզեակի ափերը ողողող ջրերի բերած բեկորներով չէր կցճցւում մեծ մեծ պատմութիւնը: Փոխարէնը ստեղծուած էր նորագոյն, շինծու մի պատմութիւն՝ մեր կղզեակի երկինքը լուսաւորող միակ փարոսի լուրջ: Նոր թուարկութիւն էր սահմանուել:

Մենք գանդաղ էինք հասունանում... Մենք գրասկներն էինք թոյլ, փոքր, անվերջ պարտութիւններ կրած մի ժողովրդի, որի զիմազրոզականու- թեան ողին ընդունակ էր սուկ կտրուել հերիսի սնել, ահա թէ ինչու՝ գերա- գասելի էր մոռանալ անցեալը ու ապաւինել նոր թուարկութեանը: Մենք զա- ւակներն էինք փախեցած, եղմուած, գեղակահարուած, արտորուած, անհեա կորած, գերի բեկած, հաշմանկամ հայրերի ու չկար՝ անունն էր արատաւոր- ւած, ու կար՝ գոյութիւնը: Եւ արատաւորուած՝ ո՛չ միայն հասարակայնութեն, այլ, որ աւելի ստեղծել է՝ սեփական գրասկներն առաջ: Մանկան շատ բնական, թերեւս ամենարեական պահանջներից մեկն էլ չորը քաղ, ու մեղ, հերոս ան- նելին է: Մեր հայրերը, շնչին բացառութեամբ, այդպիսին չէին: Եւ որպէսզի ասուել խոր գիտակցելիք մեր ողջ կամ մեռած հայրերի շողորմելիութիւնը, մեզ պարզուել էին օրինակելի, աստուածային, բնականական մի հայր, որի բարեմասնութիւնների գովքը՝ յանգ ու մեղեդիով, հնչում էր օրնիրուն, աս- զիտով, համեղ ներում, գպրոցական հասարակներում, լրագրերով, գրքերով, ինքնաբեր, նայնիսկ հողահայտ սեղանների շուրջ: Ամէն քայլափոփոխ նրա ար- ձանն էր, գասագրքերը բացուած էին նրա նկարով, նրա անունն էին կրում քաղաքների, փողոցների, գրասյուղի ու պուրակների, սահմանադրութիւն, ճակա- տամարտեր, գպրոցների, անասունների, լեռնազաղաքների, մրցանակների, տեսութիւններ... Նա ամէնուր էր, ամենազոյ: Նա մեր օղն էր: Նրա արձանի կամ զիմանկարի ասկ լուսանկարուելն արդէն սուրբ արարողութիւն էր: Նրա անձի ու անուան հետ հարազատացել էին գերազրական աստիճանով շողջո- գացող բոլոր անականները: Երբ արեգակն էլ թի՛ թուաց շերկներէ չափ նրա կրծքին՝ որպէս շքանշան, զմէջիս էլած բանաստեղծներից մեկը մեծ առաջ- նորդի գովքն անելու փորձը նմանեցրեց տիմար այն ճանգուկի ապարդիւն ջանքերին, որն ուզում էր իր թոյլ թւիկներով, կաթիլ առ կաթիլ, Խոփն այս կողմը բերել:

Քե՛զ՛ճ մեր հայրեր... Ո՛նց զիմանային այս դաժան, անհուսար մրցակցութեանը:

Ես ինք լուսանկար ու նէի օրնակելի, բնականական հար հետ եւ ոչ մէ- կը՝ հերոս հետ: Ամէն աստի, գասարանից գասարան փոխազրուելիս, կոկիկ

Հաղնուած, խնամքով սանրուած մեր շարքը, թմբու կ-շնփորով, ի տես գիւ զա-
 քաղաքի ողջ բնակչութեան, ասնու՛մ էին ՄՏԿի ակու՛մը, կանգնեցնու՛մ Ստա-
 լինի ու Մամլաբիաթի մեծաղբի կտաւի տակ ու... անմահացնու՛մ: Մամլա-
 քիաթի թանձր երջանկու թիւնը ծորու՛մ էր կտաւից, պարուրու՛մ անմեղ, միա-
 միտ մեր հոգիները երանկի այն յոյսով, թէ մեզանից նա, ով ճշտօրէն կը կա-
 տարի օրինակելի հօր պատուիրանները, կ'արժանանայ նրա կողքին նստելու,
 նրա ջերմ, բարի շունչը զգալու բախտին: Լուսանկարից լուսանկար Հաղի
 նկատելի փոխու՛մ էին մեր Հասակները, Հագու սար, բայց ոչ երբեք՝ զէժքի
 արտայայտութիւնը: Մենք զանգաղ էինք Հասու նանու՛մ... Հոգի որ ատու՛մով՝
 առանձնապէս: Մեր լեզուն թլու՛ղ էր մնում, որովհետեւ թլեկ օտանաւ որներ
 էինք անգիր անու՛մ: Մեր տեսողութիւնը թերաբժէք էր, որովհետեւ չկար բազ-
 մագուռութիւն, կար միայն սեւ, կար միայն սպիտակ: Մեր ականջներու՛մ
 ծնեղանք էին Նշու՛մ...

Տասներորդ գասարան փոխադրուելու ամառը Հայրս ինձ Մոսկուա
 տարաւ: Իմ չբջապատու՛մ ես առաջինն էի Մոսկուա գնու՛մ, եւ բնկերներս ինձ
 նախանձով էին նանապարհու՛մ: Իսկ ես իրենց էի նախանձու՛մ. անհետաքրքիր
 եր թու՛մ Հօրս հետ նամբորդելը, մա'նաւանդ՝ իրտնել էի վաղօրօք ճշկան
 նրա ծրարից՝ այսինչ օրը գամբարան ենք գնալու, այսինչ օրը՝ Լենինի թան-
 գարան ու Կրեմլ, այսինչ օրը՝ գիւղատնտեսական ցուցահանդէս... Նա նոյ-
 նիսկ ինքնահոս գրել էր զնիչ ինձ Համար, յատուկ տեսք առանձնացրել, ուր ես
 պիտի գրի առնելի ապաւ որութիւններս: Մանրակրկիտ ճշակուած այդ ծրագրի-
 րը Հայրս գրել էր իր ծոցատետրու՛մ, որի միջից, հերթական անգամ էջերը թեր-
 թելիս, մի այլ ծոցատետրի խուսոցած էջ գուրս պրծաւ: Գնացքի ճոճման տակ
 ես կուսցայ վերջնելու էջը եւ մինչեւ կը բարձրացնէի՝ չնայրեցի կարդալ ան-
 ծանօթ ձեռագիրը: Ե՛րու պէտք է աշխատես լինել ո'չ միայն առջիւս՛մ, ո'չ
 միայն առաջին շարքու՛մ, այլ լինես այդ շարքի զրօշակիրը: Եւ ստորագրուած
 էր՝ Նահապետ Կուրդինեան: «Ո՞վ էր», — երեւի Հարցրեց Հայնացքս: «Շօ-
 բաբրըղ ամուսինը»: «Նա», որին...»: «Այո, նա»:

Մեր ասնը, երբեմն, մէկ-երկու անուան շուրջ, կրտաձայն, Հեռագրի
 ոճով, խօսք ու զրոյց էր գնու՛մ: Առաջի՛ ճանուան շուրջ, բայց յիշեցի, որ
 անուանները չէին տրու՛մ, թէեւ Հասկացու՛մ էր՝ ու՛մ մասին է խօսքը: Եթէ
 շղեղակահարութիւնս բառն էր օգտագործու՛մ, Նահապետ Կուրդինեանին ի
 նկատի ունէին, եթէ չինքնասպանութիւնս՝ պապիւ եզրօրը՝ վաճան Յովսէփ-
 եանին: Երկուսն էլ՝ ժողովրդի թշնամի. մէկը պատժուած, միւսը՝ Վերակա-
 ցութից վարեցած՝ ինքնասպան եղած: Եւ, ահա, այդ թշնամիներից մէկի՛
 գնդակահարուածի ձեռագրով ժողթանք էի կարդու՛մ Հօրս ծոցատետրու՛մ:
 Ի՞նչ բարեբախտութիւն, որ ի հեճուկս մեր Հոգեւոր կղզեակի պլանտատորնե-
 րի, իմ Հոգու՛մ ծիլ չէր տուել Պալիկ Մորոզովի գցած սերմը...

Այդ օրը, Երեւան-Մոսկուա գնացքի նկղիկ մի կուպու՛մ, ակտուից
 Հօրս ու իմ մեծ մտերմութիւնը: Մինչ այդ մենք գրեթէ չէինք շփու՛մ. վաղ
 տուա օտան աշխատանքի էր գնու՛մ, երբ ես գեո քնած էի լինու՛մ, վերադառ-
 նու՛մ էր տուն ուշ ժամի, երբ արդէն քնած էր լինու՛մ: Աշխատա'նքն էր այդ-
 պիսին, թէ՛ պարզապէս ջանու՛մ էր կաշուից գուրս գալ, միայն թէ աւելորդ
 անգամ շիջեցնէին՝ ջիջ է, թշնամեաց տոճից է, դեռ Համարմակուել է գերի
 ընկնել ու կուսակցական տոճը կորցնել: Եւ ոչ մէկը չէր ու գու՛մ լսել, թէ ինչ-
 պէս է գերի ընկել, թէ ինչպէս են գերմանացիները ոտքերից Հանել սապոյնե-
 րը, որոնց մէջ պաճուած էին փաստաթղթերը: Եթէ լսէին էլ, հաւատային էլ՝
 պիտի ասէին. իսկ ինչո՞, կիր թաքցնու՛մ, կուսակցական տոճը Հպարտանայրու
 Համար է եւ ոչ թէ թաքցնելու: Եւ ոչ մի կերպ չէիր կարող բացատրել, որ մար-
 գու արաբքը գնահատու՛մ է մղու՛մով ու արգիւնքով: Կոճուելուտներին

զնդակահարում էին տեղն ու տեղը, և հորս մահով զուհերի բանակն էր մեծանալու: Իսկ ապրիլով՝ կուռոզներինը: Երեք օրուայ գերութիւնից, համակենարոնացման ճամբար քարէ կեղզ շարսանան միջից փախած հայրս շարունակել է իր բաժին պատերազմը, մինչև վերջին՝ ծանր վերջ ստանալը:

Վազոնի կիտարաց լուսամուտից նա ցոյց էր տալիս սեւծովեան այն ափերը, որտեղով նահանջել էր, բնիկ շրջապատման մէջ, վերաւորուել, հրաշքով փրկուել էր մահից... Անհաւ առնորի պատին խաչ քաշած հայրս, որպէս վերջին մի նիզ ու փորձ, խոստովանանայ էր բնարիկ իր միւս որդու: Նա իր մեղքն էր խոստովանուի: Նրան համոզել էին, որ հիշար սպանուել էր... Եւ առաջին անգամ էի տեսնում նրա յուզմու նըր, արտասու ջըր, մպիտը, առաջին անգամ էի հասկանում, թէ ինչ բան է պատերազմը՝ անհաս մարդու մատչարով: Եւ առաջին անգամ տեսայ նրա փորի ստեղծի սպին և, իբր ոչինչ չտեսած, իբր անտարբեր-անհոգ, դուրս խոկոյն դուրս հանեցի վազոնի լուսամուտից, կուշտ լաց կայ՝ կուշ տալով շողեքարչի կծու ծուխը: Լացի հետ թեթևանում էր հոգին և ևս զգում էի, թէ ինչպէս է ներսուծու արտփում գեղեսև անբացատրելի, անասուն մի հրճուանք. ևս հորս էի գտել...

Ստալինն արդէն չկար: Բայց նրա զմտած մարմինը գեղեսև Լենինի դամբարանում էր, ուր, ըստ հորս կայծած նրազրի, ներս մտանք՝ մի ամբողջ կէտօր հերթ կանգնելուց յետոյ: Մամլաբիթով ու առանց Մամլաբիթի, ինձ ծանօթ գիմանկարներէց, արձաններից և ոչ մէկին նման չէր նա, բայց միևնոյն է, ազդեցիկ էր, տիրական: Կարծես՝ ինքն էր կողքին տեղ առել Լենինին: Ուղեորս ծանրացել էին՝ հազիւ էի շարժուի, ժամանակը դամբարանում աւելի գանդազ էր առաջանում, քան գրտուի՝ հերթի մէջ, Լենինի կողքից անցնելիս էլ, մարդիկ, նրան էին նայում: Նա գեղեսև առանցք էր...

Ի՞նչ մեծ շարիք է անտեղեկութիւնը... Մարդիկ գեո չգիտէին, որ շուշնիկը պահած անցնում էին աշխարհի ամենամեծ բռնակալի կենդանի դիակի կողքով: Նա շարունակում էր սպրիկ՝ որպէս բոլոր յաղթանակների ողջնչող, ժողովրդի կարիքը հողացող, արդարամտութեան խաղաղ: Ա՛հ՝ որ նա էր մի քանի ատրում հեկայածաւալ երկիրը կողեկիւացրել, յետոյ նաև՝ ինդուստրիացրել, յաղթել ամենամեծ ու ամենազաման պատերազմում: Նա այնքան էր արդարամիտ, որ յանուս ժողովրդի չէր խնայել նոյնիսկ գանցանք-յանցանք գործած գիմակից-ընկերներին, գիմակիցների կանանց ու երեխաներին... Յանուս ժողովրդի... Մենք բոլորս միասին ժողովուրդ էինք, իսկ նրանք՝ ժողովրդի թշնամիները՝ ընդամենը անհասներ: Մարդիկ գեո չգիտէին, կամ չէին կարող երեւակայել, որ այդ անհասների թէ՛ քանակական և թէ՛ յատկապէս որակական դուժարը նոյնպէս ժողովուրդ էր...

Հենց այդ նոյն ամբանը ևս կայ Երևանում, հորաբրոն տանը ևս որովհետև տանու տղայ էի, ասնու տղայի համարձակութեամբ քրքրեցի հին-հին թղթերն ու լուսանկարները, գտայ հրաշքով պահպանուած, խուզարկութեան ամենատեսալից փրկուած մի խմբանկար՝ Ստալինի հետ: Տասնեօթներորդ համազում մարի հայ պատգամաւորներն էին, որոնց թուի նաև՝ Նա հասկան կուրդիներն: Հորաբրոն շուկով ասաց, որ պատգամաւորներից ոչ մէկը ողջ չէ: Երեւի ու գում էր ստել՝ բոլորը գնդակահարուած են: Բայց ասաց՝ ոչ մէկը ողջ չէ: Եւ շատ վստահ ասացի՝ «Նա էլ չ, որովհետև քառասորէն օրեր առաջ էի տեսել նրա զմուտած մարմինը, իսկ հորաբրոն մատը սեղմեց շրթներին՝ սուս...»

Տուս վերադառնալուս պէս, մեր բակում ճանաչող օջախը գցեցի Ստալինի ու Մամլաբիթի մեծազրի կտասով մեր ինչ խմբանկարները ևս խոր

չունի քաշեցի. ինձ այնպէս թուաց, թէ ես ու իմ գաւարնեակները փրկուեցինք
անխուսափելի ոչնչացումից... Մենք զանգաղ էինք հասու նանուս՝...

Մեր հոգիները կզգեալի երկինքը լուսաւորող միակ փարոսը մի օր առ-
պալուեց, այնպէս յիշողութեան նաւը կուշ տուած ուղիքանոսը: Զրեւն ափ
Հաննցին ոչ թէ բեկորներ, այլ գանձերով լեցուն արկղեր. Բաֆֆին ափ ելաւ,
Չարենցը, Բակուցը, որք մնացած աքորեայները առն գարձան, յետմահու
արդարացան Հաղարաւ որ գեղակահարուածներ, աշխարհի տարրեր վայրե-
րում գլարութիւն առանձ անհա կորածները: Հայ ժողովրդի պատմութեան
գաւազէք չկար՝ ուսուցիչները գաւարաններ տարան իրենց ուսանողական
կոնսպեկանները: Մեր գիւղաքաղաքի շուկայում «Մայր Հայաստան» անուր
կառուի Հետ վանառքի հանուց նաեւ Անդրանիկի դիմանկարը: Այլեւս ժո-
ղովրդի թշնամի չէին վաճան Յովսէփեանը, Նահապետ Կուրդինեանը, շատե-
րում Հայր Մուկուս մեկնեց, վերականգնուելու կուսակցութեան շարքերում:
Յուպանից վերադարձող ու սանողական մեր խմբին Մուկուսայում դիմաւ որեց
կուսակցական տարբ վերադարձ Հայր եւ «Սուրայ» հիւրանոցի իր համարում
սեղան բացեց: Մտերու էր միշտ վերջին կուպէլը: Նա իր յաղթանակին էր սօ-
նում: Նա անսահման ուրախ էր, որ չէր խարել ինձ: Ես անսահման ուրախ էի,
որ չէի խարուել: Մեր ստիճով հիմա կարելի էր, նոյնիսկ, հպարտանայ եւ
առանց անյարժար զգալու յիշել նաեւ քանակից կոմիտարներէջ՝ Սուրեն Յով-
սէփեանին, որի անու անը մերձեանքը, մինչ այդ, սրբապղծութիւն էր: Հօրաք-
րոջ թուակ նշանակեցին, ամուսնու անձնական որոշ իրերը վերադարձրին:
Բնակարանի երկու սենեակը՝ ոչ: Մէկ սենեակում էլ կարելի է ապրել: Այսօր
առիկ ապրեցիք, չէ՞: Հօրաքրոջ որդին երկար ժամանակ չփոթուած էր. ինքը
չէ՞ որ Հօր մեղքը մարքելու համար էր պատանդ-պատանդ, կամաւոր պատան-
դած գնացել: Այդ չփոթուեցը, կարծում եմ, միշտեւ օրը էլ յաղթանակում
է: Համարում եմ՝ շատերի մէջ: Որովհետեւ... Հրաշալի այն օրերին, թուսմ էր,
այնպէս մը կը շարունակուի այնքան, որքան անհրաժեշտ է եւ մէկ-երկու
տասնամեակում կը վերականգնուի յիշողութիւնը, մեծ պատմութիւնը: Բայց
Չրեւը հանդարտուեցին, խաղաղուեցին ու մայր տուա լնացման ժամանակը:
Առուց ընդամենը կէս ճամբարութիւնը, վերականգնուեցին անունները
միայն եւ ոչ թէ կենսագրութիւնները, անուններից էլ՝ ոչ բոլորը: Ստալինեան
հողեղարձի հենց առաջին փորձը, չգիտես ինչ արամարանութեամբ, պատկ-
ւեց յաղթանակով: Յիշողութեան վերադարձը կանգ առաւ արտօրի կէս ճանա-
պարհին...

Անցած աշնանը Հօրաքրոջ որդու եւ գուստրերի Հետ եղանք Արթի-
կում, բարձրացանք նախկին Պաշտիխա, այժմ՝ Նահապետու ան գիւղը, Ծա-
ղիկներ գրեցինք Նահապետ Կուրդինեանի կիսանդրի-յուշարձանին, պիտենք
օծեցինք գիւղի մեծացած Հովսէփեանների, գիտեցինք զպրոցի թանգարա-
նը, իսկ երեկոյան շրջանարտի մշակութի պալատում, հարիւրաւոր արթիկ-
ցիների ու հրեաների առաջ, Նահապետ Կուրդինեանի աւագ դուստրը խոստո-
վանեց, որ ինքը գրեթէ ոչինչ չէ յիշում Հօրից: Գրեթէ ոչինչ չգիտէ: Կարծես վե-
րադարձել է, մեզ հետ է, բայց... մեզ հետ չէ, առայժմ փակուած է ինչ-ինչ
Քղթապանակներում: Դահլիճը գուցէ եւ չընկալեց ասուածը, որովհետեւ
հակում էր որդիական յուզմունքն ընկալելու եւ... Ծափահարեց, երբ Նահա-
պետ Կուրդինեանի աւագ դուստրը շնորհակալութիւն յայտնեց շրջանի զեկա-
վարութեանը՝ կիսանդրու, Պաշտիխան վերանուանելու եւ այդ հաւաքին մեզ
հրաւիրելու համար: Դահլիճում շատերն էին արտասուում, իսկ ես մտածում էի,
որ դահլիճը պարզապէս կը չենկեկայ եւ դա աւելի ճիշտ կը լինէր, եթէ լուր
Կուրդինեանի միւս գուստր խօսքը այնտեղ՝ Պաշտիխայում, Հօր կիսանդրու
դիմաց. «Եւ սա է, հա՞, Հօր գերեզմանը»:

Մեզ չէ՞ որ հօր արձան չէ պետք, այլ՝ ողջ հայր եւ կամ՝ նրա մատուցած ներքն ամփոփոց չի բիժ: Մենեայները մեզ հետ են, երբ տերն ենք նրանց կենսապրութեան, պատմութեան: Արձանը մտած է սոսկ արձան, էթլ... ոչինչ չուրեք: Եւ չոր մե՛զը մաքրելու ք պատրաստ որդու այն օրերի եւ արգարացուած նոյն հօր նոյն որդու այսօրու այ հողեփեհեհերի միջեւ մեծ չէ տարբերութիւնը, որովհետեւ երկու զէպրում էլ իշխում է ամենամեծ շարիքը՝ անտեղեակութիւնը: Ասում են երեսանեան հերթական մի ջրհեղեղ ողորդել է այն օրերի սարսափազգու հիմնարկի նկուզները եւ քշել-տարել հազարաւոր փաստաթղթեր՝ շատուած, բնդ հատուած կենսագրութիւններ: Այդպէ՞ս է: Ո՞վ գիտէ: Բայց էթլ նոյնիսկ այդպէս է, հօ չե՞ն ողորդել նաեւ գործող վիաների յիշողութիւնները: Ո՞ւր են նրանք: Նրանց խօսքն է այսօր անհրաժեշտ, նրանց վկայութիւնը, խոստովանութիւնը: Յատկապէս խոստովանութիւնը: Այդը ազգ է գտնում, մաքրում է նաեւ խոստովանութեամբ: Եթէ հնարաւոր է՝ պիտի ներքեւք մեղաւորներին, էթլ անհրաժեշտ է՝ դատապարտեք յանցաւորներին, թէկուզե՛մ յետմահու: Յետմահու արդարացման պահանջն է՝ յետմահու գատապարտումը:


Կարճ ժամանակամիջոցում մենք պէտք է վերականգնենք այդ դժուար տարիների պատմութիւնը, վերացնենք այն անդունդը, որ ցայսօր գոյութիւն ունի մեր եւ անդունդից այն կողմ փոռած մեծ պատմութեան միջեւ: Այլ կերպ հնարաւոր չէ: պատմութիւնը բնդ հատուածներով չի շնչում, չի ապրում, պատմութիւնը շարունակական է, որքան էլ նրա այս կամ այն հատուածը լինի գոտր, արիւնտ:

Հասանարար մեր երեխաների, թոռների սերունդն էլ մեզ նման դանդաղ կը հասունանայ, էթլ մենք, չենք մենք, չենք այսօրուտնից շխորտակներ յիշողութիւնը փակի տակ պահող բոլոր դարպասները, էթլ չգտնենք, իրար հետ չկկապ շանենք ըջրհեղեղի տարած փաստաթղթերը: Եւ մեզ այլեւս պիտի չվախեցնեն ու շուտահասուն են այդ դարպասները՝ ինչ նիւթից էլ որ պատրաստուած լինեն: Իսկ առաջին հերթին պիտի խորտակենք մեր հողիներում ծանրացած վախի ծնունդ դարպասները: Ինչի՞ց ենք սարսափում: Ինչպէ՞ս կարելի է սարսափել պատմութիւնից: Թող սարսափի նա, ով սօճի է գործել, ով այսօր էլ ծածր մղձաւանջներ է ունենում, խեղդում էր իսկ մեռած թափած արեան մէջ: Թող սարսափի դատանքը, մատնիչը, հացկատակը, սողունը... Մե՞նք ինչու ենք տրուում նրանց սարսափին: Չբացայայտու են նրանց սերտագործութիւնները, չեն վերագործուի հազարաւոր գունդի թանկ կենսագրութիւնները: Բաս տեղան չէ՞ մի ամբողջ հրաշալի սերնդի կեանքը մատուցելը անմահական թերթիկի տուեալներով, զվախանալ է 37 թուականին վերաւորական նախագատութեամբ: Չբացայայտուի 37 թուականը՝ ամէն պահ հնարաւոր է ստալինեան հողեղարմի նոր փորձ, ինչը, ի դէպ, կատարուել վերջերս, մի երեք շարաթ կաթուածահար անելով թուրքիս, մի վերջին անգամ, աստու ասպետից յոյժ, որ կեանքի գեմոհրատացումը, հրապարակայնութիւնը փերին հրամանով արուած շնորհ է: Ով-ով, բայց մենք՝ հայերս, դալուս պիտի վերին հրամանով արուած շնորհ չէ: Ով-ով, բայց մենք՝ հայերս, դալուս պիտի իմանայինք, որովհետեւ իրօք յատանալով վերից ոչինչ, մենք ամէն ինչ սկսել ենք ներքեւից: Քաղաքական ի՞նչ ետու են կեանք ապրից մեր հանրապետութիւնը վերջերս, առանձնապէս՝ վերջին մի քանի ամսում: Թշնամու աչքով դէտեղիս էլ շատերը դատապարտելու ոչինչ չգտան: Մեր հրաշալի ժողովուրդը տեղիս էլ շատերը դատապարտելու հասու է աղբիւրու ոչ թէ կիցոյց տուեց ամէնքին, որ քաղաքականապէս հասու է աղբիւրու ոչ թէ կիցոյց տուաւ, այլ՝ անսահման հրապարակայնութեան պայմաններում: Մարտաւարտուաւ, այլ՝ անսահման հրապարակայնութեան պայմաններում: Սարսափելի ոչինչ չի պատահի այլեւս, էթլ առանց սեւացնելու կամ որ նոյնն է՝ սափելի ոչինչ չի պատահի այլեւս, էթլ առանց սեւացնելու կամ որ նոյնն է՝ առանց գուճապարգիւրու, բացայայտելու քանակական թուականների բարդ

Հանգույցները, ազատորէն խօսենք ազգային կուսակցութիւններէց, նրանց ձեռքբերումներէց ու ձախողումներէց, այդ կուսակցութիւններէ ղեկավարներին ճիշտ նկարագիրը տանք, գրականութիւն ներմուծենք նրանց ոչ թէ սխեմատիկ, այլ՝ մարդկային, շատ զէպրերում ողբերգական կերպարները: Յօրինել՝ թէ նրանք բոլորը օժտուած էին միայն բացասական յատկանիշներով, ե՛ւ Հակազգայնահատական է, ե՛ւ Հակադիմադրական, ե՛ւ Հակաբնական: Իսկ բողբոջները... Մի՞թէ չեն սխալուել նաև: Բողբոջները: Ու մի՞ց ենք վախենում տակ ողջ ճշմարտութիւնը: Մի՞թէ մենք ակրջենք այս երկրի: Եթէ ակրենք, ակրեն ենք նաև: նրա պատմութեան («Գրական քերք», 1988, թիւ 22):

ԹՈՒՐԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Հատուած)



ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Բանաստեղծ և արձակագիր Արմեն Մարտիրոսեան ծնած է 1 Յունիս 1943ին, Գուգարքի լեռների Մեղրուտ գիւղը: 1964ին կ'աւարտէ Երեւանի Յ. Արսլանի անուան հայկական մանկավարժական ինստիտուտի բաժինը:

1964-66 տարիներուն, իբրև լեզուի և գրականութեան ուսուցիչ՝ Ա. Մարտիրոսեան կը պաշտօնավարէ կրթական No 8 դպրոցին, իսկ 1966-67 տարիներուն՝ Երեւանի սփանսագործ թագմաւոր-պաշտակ թերթին մէջ՝ իբր պատասխանատու քարտուզար: 1968ին ի վեր ան կը պաշտօնավարէ հայրենի պատկերասփիւռի և ձայնագրութիւնի կոմիտէին մէջ՝ իբրև խմբագիր:

Արմեն Մարտիրոսեան ցարգ հրատարակած է չորս չերթողագիրքեր, որոնց նշանաւորերն են՝ «Բանաստեղծութիւններ», «Թռչուններ» և «Մի սիրոյ երկիրը» անուն գործերը, ինչպէս նաև՝ «Մազէ կամուրջ» վեպը:

Ա. Մարտիրոսեանի բնորոշ բանաստեղծութիւններն ունեն թարգմանուած են ուսանելի և այլ լեզուներու: Ան նաև արժանացած է մէկէ աւելի զգալի մրցանակներու՝ իր շափածոյ և արձակ գործերուն համար:

Գիտէ՞ք, թէ ինչու կործանուեց Աճի քաղաքը. «Երկրաշարժից, թուրք-սելջուկների, նաև ուրիշ նուանողների յանախակի ասպատակութիւնների, հայերի համատարած գաղթից», — կ'աւէք: Բայց չմոռանա՞նք, յիշե՞նք, որ Աճին հոգեբանօրէն արդէն կործանուած էր՝ հաւատի կորստի ու ծաւալուող անբարոյականութեան պատճառով:

Եթէ այսօրուայ շինարարին խնդրեմ ապրելու ուրիշի համար իր կառուցած բնակարանում, թէ չհրածարուի էլ, ապա միւսների մեան, դեռ բնակարան ոտք չդրած, կը մտածի հիմնովին նորոգելու մասին:

Մարդուն բարոյական շրջանակում պահող հաւատի կորուստ է սառանց յանցանքի զգացողութեան թերանում եմք մեր գործերում, ես՝ իմ, դու՝ քո, եւ արդիւնքում ստացում է թերութիւնների մի լիագումար, որից կառուցում է հասարակական կեանքը:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

**ԻՆԻՑԻԱՃԱՆԱԶՄԱՆ
ԲԱՐԴՈՒԹԻՒՆԵՐ**

Քչ Նոյեան ջրհեղեղի եւ ոչ էլ Սողոմ-Գոմորի կործանման օրը մարդիկ չգիտէին կամ չէին պատկերացնում իրենց գլխին գալիքը: Մինչ այդ տասը արդար ու հաւատացեալ մարդ որոնեցին հրեշտակները, որովհետեւ յայտնի էր՝ տասը արգարի գէպքու մ՝ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ծծուժք, Աստուած ոգորձելու էր մնացեալ ամբարիշտներին: Տուէն առ տուէն որոնեցին, չգտան. եղած-չեղած մի Ղովտ էր՝ կնոջ ու երկու դստերի հետ, բայց նրանցով որոշուած թիւը չըրացաւ, եւ արեգակի բացուելուն պէս՝ երկնքից հուր ու ծծուժք թափուեց ամենակուլ:

Սողոմ եւ Գոմոր քաղաքները կործանուեցին անբարոյականութիւնից, սրբապղծութիւնից, ընչաքաղցութիւնից, խարէութիւնից, սպանութիւնից ու թալանից, մի խօսքով՝ մարդու հուժեղ մեղքուն գրած սանձազերծ զազանի առկայութիւնից, որը, արհամարհելով խղճի, արդարամտութեան ու բանականութեան ձայնը, մեղքի գետի պէս տարածուել էր բոլորեքեան: Աստուածաշնչեան այս՝ առաքակէ՛ղք-ասեմ, թէ՛ փրական պատմութիւնը գալիս, խստորէն նախազգուշացնում է հեռու մնալ մեղք ու մեղսազորութիւնից, հաւատով ապրել ու հաւատով ընթանալ, որովհետեւ, եթէ Սողոմն ու Գոմորն առաքակէ են, անբարոյականութիւնից կործանուած իրական քաղաքի՝ Հոմոթի պատկերը կայ մեր յիշողութեան մէջ:

Ճիշտ ժամանակին յետ քաշուել-զգաստանալը ապաշխարելով մաքրուելու պէս բան է, որն այսօր, քանի դեռ ուշ չէ, պարտաւոր ենք անելու իւրաքանչիւրս: Թէ չէ՝ մեղքի գետը շատ է հրապուրիչ՝ հոգով թոյլ ու մարմնական արատներին գերի մարդիկ գործելու ապարէզ են դառնում այնտեղ:

Գիտէ՞ք, թէ ինչու կործանուեց Անի քաղաքը. «Ներկրաշարժից, թուրք-սելջուկների, նաեւ ուրիշ նուաճողների յաճախակի ասպատակութիւններից, հայերի համատարած վաղթից», — կ'սէք: Բայց չմտանանք, յիշենք, որ Անին հոգեբանօրէն արդէն կործանուած էր՝ հաւատի կորստի ու ծաւալուող անբարոյականութեան պատճառով: Մտաբերենք թէկուզ միջնադարի նշանաւոր բանաստեղծ ու գիտնական Յովհաննէս Պլուզ Երզնկացու՝ անեցիներին զգաստութեան մղելու կոչը, որը, աւա՛ղ, արձագանգ չգտաւ քաղաքի բազմազգ բնակիչների շրջանում, եւ եպիսկոպոսն ստիպուած եղաւ անիծելու իր հօտի՝ հաւատից զրկուած այդ շողջողուն ու աղնուական գանգուածին: Թող այն սպաւորութիւնը շատեղծուի, թէ այս բոլորի հետ տրամաբանօրէն աղերսը-սը-ող Երեւանը նոյնպէս կործանման եզրին է: Մեր քաղաքը, փառք Աստծոյ,

իրենց ուսերին պահող երեւելիներն ու արդարները զեռ բազում են՝ տասը չեն, Հարիւր են, բիւր են, բայց էլի, այնուամենայնիւ, մասհոգուելու առիթը չուրջ է ու ծանրացող:

Մատենագրական այս կամ այն գիրքը բացելուն պէս, սող ու բառերի մէջ խորամուխ լինելու հետ, ժամանակը վարագուրող ձեռքերն ինքնին յետ են գնում, եւ մենք արգէն հետու կամ մօտիկ անցնալում ենք՝ զեղազիտական ճաշակ, հանոյք, փորձ ու գիտելիք ստանալուց բացի, վերապրելով այն միամիտ զարմանքի զգացումը, ըստ որի մարդկային հոգեբանութիւնը շատ չի փոխուել անցնող դարերի հոլովոյթում: Անցեալն ինչ-որ տեղ ներկայում շարունակուում է, եւ թւում է, ասենք, Անի քաղաքում ամէն օր կատարուել է նոյնը, ինչ այսօր՝ Երեւանում, եւ թուականը յայտնի չէ՝ 988ն է, թէ՞ 1988ը, օր է բացուել, եւ, ինչպէս ասել է սաղմոսերգուն, ամէն մարդ առաւօտից իրիկուն զնում է իր բանին: Ինքնաթիւով կամ կառքով, ատոմէքենայով կամ սլացիկ նժոյզին հեծած, նաեւ հետիոտն իր բանու գործին շտապող տնեցի՞ն, թէ՞ երեւանցին գրեթէ նոյնն են մտածում՝ «Տէր Աստուած, ասում են, օրը յաջողակ արա, անփորձանք ու շահաբեր: Մի քիչ գրամ, փառք ու համբաւ գուրս զան գործ ու գործաւորի այս ձանձրալի առօրեայից»:

Մարդը... գլխի վրայով անցնող բազմաթիւ յեղափոխութիւնները, դիտատեսիլներով կան առաջընթացը, որոնք էլի ինքն է արարել, թւում է, հետք չեն թողել նրա վրայ, նա էլի մնացել է նոյն մեղսագործն ու ապաշխարողը, ճշգրտակեանցն ու մի կտոր հացով բաւարարուող դպիրը, ծաղկողն ու գրիչը, եւ, ընդհակառակը, ոչնչով չյազեցող ընչաքաղցն ու դրամաշորթը, փառասէրն ու պաշտօնամոլը: Նա տիեզերական թռիչքներ է իրագործել, եւ պատահել է՝ կծկուել, մի բուռ է դարձել անյայտի, անորոշի վախից, բնածին սնոտիապաշտութիւնից: Եւ ակամայ մտաբերում եմ Յ. Թումանեանի հանրայայտ քառեանկը.

Բերանն արնոտ Մարդակերը էմ անբան
Հազար տարում հազիւ դարձաւ մարդասպան,
Ձեռններն արնոտ զնում է նա դեռ կամկար,—
Ու հեռու է միջիւ Մարդը իր ցամբան:

Քրիստոնէական հուսան առաջ ստիպում էր ապաշխարելով մաքրուել գործած մեղքերից, Աստուծոյ պատժի, անեղ դատաստանի սարսափից զսպել շար հակումները: Այդ հուսառը մենք աստիճանաբար զուրս քաշեցինք սեբուսներին յիշողութիւնից եւ մարդուն կերակրեցինք լոգունգների՝ Հազ ու խեղդուկ առաջացնող բառափոշով: Սովորական երեւոյթ դարձան մեծաղբը-ղորդ ու ճոճոտան լոգունգի տակ աշխատանքային ամենատարրական նորմերի խախտումն ու անորակ արտադրանքի թողարկումը: Եթէ այսօրուայ շինարարին խնդրենք ապրելու ուրիշի համար իր կառուցած բնակարանում, թէ՛ չհրաժարուի էլ, ապա միւսների նման, դեռ բնակարան ոտք չգրած, կը մտածի հիմնովին նորոգելու մասին: Կամ էլ պահանջենք, որ փականագործը խանութից գնի իր պատրաստած փականքը, ինչպէ՞ս թէ, կը դարձանայ, անորակ է, կ'աւելացնի, ա՛յ, ուրիշ է արտասահմանանը...

Այնինչ Հազար տարուայ յուշարձանը, որ նոյն շինարարի ձեռագործն է, կանգուն է մնացել, եւ թէ՛ երբեմն ճաք է տուել, փլուել-աւերակուել, ապա՝ օտար նուաճողի ասպատակու մից կամ էլ երկրաշարժի յաճախակի ու ուժգին ցնցումներից: Ո՛ւր զնացին արար աշխարհում անուր հանած Հայ քարագործ վարպետները կամ ոսկի ձեռքերով միւս արհեստաւորները: Մարդուն բարո-

յական շրջանակում պահող հաւատի կորուստ է սա. առանց յանցանքի զգացողութեան թերանում ենք մեր դորձում, ես՝ իմ, դու՝ քու, եւ արդիւնքում ստացուած է թերութիւնների մի լիազուժար, որից կառուցուած է հասարակական կեանքը: Իսկ այն ձեռքը, որ մէկ-երկու անգամ ցածրորակ արտադրանք տուեց, վերջ, հսկար դարբին հաւաքուի, շտկել չի կարողանայ: «Այդպէս էլ լինելու է», — մտածում ենք եւ շտապում խնայած կամ պարտքի առած դուժմարով մի կերպ կարգի բերելու մեր՝ դեռեւս ոտք չգրած բնակարանը, չբացուող եւ չփակուող կողպէքները: Այսպէս՝ վարժուելով մասնակցում ենք հաւատի կատարեալ կորստին, ինչպէս արեւ են առաջ Անի քաղաքի բնակիչները: Մասուէլ Անեցու վկայութեամբ, նրանք թուրք-անլուկներէ տիրապետութեան ժամանակ վարժուել-յարմարուել էին, երբ մայր տաճարի գործիքի խաչը իշխողների պարտադրանքով փոխարինուել էր պայտով: Նոյն աղէտն է՝ երէկ անեցիների գլխին թափուող, այսօր մեր կեանքի բոլոր ոլորտները ներխուժած: Յարմարուել, ապրում ենք, երբ մեզ խաբում են. խանութում՝ վաճառողը, դորձարանում՝ արտադրողը, հրատարակչութիւնում՝ տպագրողը: «Կեանք է, կը պատահի», ի վերջոյ, հանգստանում, խաբում ենք ինքներս մեզ՝ շմտածելով, որ այդ ամէնին վարժուելով ակամայ մասնակից ենք դառնում մեր հոգեկան կործանման: Իսկ դա իր հետ բերում է բարոյականութեան, արդարամտութեան ու ազնուութեան մղող հաւատի կորուստ: Եւ ես առում եմ՝ առանց հաւատի անհնար է ապրել, անհնար է թէկուզ արգելակող ու պահպան մեխ խփել հասարակական կեանքի լծացող-քարացող պատին, որից կախ տանք երկաթէ ձեռքերով արգելուած թեմաների, իրար հետ շտուկով խօսելու պարտադրած վախի տեղատարափ անձրեւից թրջուած մեր հազուատները: Իսկ հաւատը, ասում են, սարեր կը շարժի: Թողովրդի պատմութիւնը վաղուց ապացուցել է այս ասացուածքի ճշմարտութիւնը:

Կիրակոս Գանձակեցին, վկայակոչելով Գրիգոր վարդապետին, գրում է. «Մի անգամ այնպէս պատահեց, որ նա գնաց քարայրը, որտեղ գրքերն էին, եւ ուրիշները նրա հետ: Նրա հետ եղածները դուրս եկան, փակեցին դուռը, նա մնաց ներսում: Նրանք կարծեցին, թէ վարդապետն իրենցից առաջ դուրս եկաւ: Երբ դուրս վրայ շատ օրեր անցան, դարձեալ գնացին քարայրը ինչ-որ բանի համար. տեսան նրան ու զարմացան. հարցրին նրան, թէ՛ «Ինչպէ՞ս ապրեցիր առանց կերակրի ու խմելու»: Նա նրանց ցոյց տուեց գրքերը, որ կարդացել էր, եւ ասաց. «Այդ է իմ ուսելիքն ու խմելիքը, որ կերայ ու խմելի այս օրերին»:

Որտե՞ղ է այսօրուայ մեր բարոյականութիւնը, հին ու քաղաքակիրթ ազգ լինելու առաւելութիւնը, որի մասին սիրում ենք ճամարտակել ճառերում: Ընտրելիքներ, կ'աւարտենք, յետոյ, ընդամէնը մի ակնթարթ անց, այք փակելու շափ կը մոռանանք կեանքի ամէն քայլափոխում տեղ գտած թերութիւնները, որոնք այսօր ազետարեր ու վարակիչ հիւանդութեան պէս առաջացող են: Որովհետեւ ինքներս, կամայ թէ ակամայ, վարակուած ենք նոյն հիւանդութեամբ, որովհետեւ ամէնքի պէս լողում ենք նոյն մեղսագործութեան գետում: «Մեղք ենք գործել», — արդարանում ենք՝ գեախց, իբր, լողացած, մաքրուած դուրս գալով: Այդ նոյնն է, թէ մեռեալ դեա Դերեգի ջրով ջրում ենք ո՛չ միայն կողեկախու ու պետական տնտեսութիւնների, այլեւ՝ մեր հոգիներէ այդիներն ու բանջարանոցները եւ ուզում ենք, որ նախապէս թունաւորութիւն անպայման համեղ լինի ու կենարար: Չենք մտածում թէկուզ ամբ պտուղն անպայման համեղ լինի ու կենարար: Չենք մտածում թէկուզ փոքրիկ ու չնչին զանցանքի դիմաց՝ զոնէ ինքներս մեր առաջ ապաշխարելի: Այդ բառը, որը հնում մարդկանց ինքնաճանաչման ու ինքնամաքման կաբեւոր խթաններից էր, առհասարակ մոռացուել, դուրս է ընկել բառապաշարից:

Ինքնամաքրում... ահա թէ ո՛րն է լինելու վերակառուցման, հրապարակայնութեան կանխորոշող ճանապարհը: Մարդու բարոյական ինքնամաքրումի հիմքը ինքնաճանաչումն է՝ սեփական «եա»ի տեղ ու դերի իմացութիւնը ընտանիքում եւ հասարակութեան մէջ: «Ճանաչիր ինքդ քեզ», — իբրեւ պատգամ աւանդել են նախնիները: Նրանք զփտակցում էին, որ հենց դա է ազգային պատկանելութեան ու ճանաչելութեան ծաւալուն ու տարողունակ շղթայի բանալին, որը կուռւմ — կոփոււմ է ժողովրդի սովորութիւններին, վարքուբարքին, մշակոյթի աւանդների բովում՝ համաշխարհային քաղաքակրթութեան ընդհանուր համայնապատկերի մէջ: Այս ամէնի կորուստը երբեմն ստիպում է Դիոգենեսի նման լապտերը ձեռքներիս օրը ցերեկով մարդ փնտռել շրջակայքում՝ ասենք, Գրիգոր վարդապետի նման մէկին՝ առանց հաց ու ջրի, միայն դիր ու զբքի սնունդով ապրելիս: Սա՛ այս Գրիգոր վարդապետ նուիրենալը, որը մեր մատենագրութեան մեծերից էլ չի, իրեն զբոյժ սովորական մշակ անուանելով՝ գրել է բազմաթիւ ճառեր ու մեկնութիւններ, եղել է երեւելի մտաւորական ու մանկավարժ, գիտելիքների հարուստ պաշարով եւ, որ կադերու է, օրինապահ վարքով կրթել է հարիւրուոր սաների: Որովհետեւ կանգ չի առել ձեռք բերածի վրայ: Որովհետեւ իրեն շարունակ համարել է թերութ, եւ գիր ու ընթերցանութեան վրայ մաշել իր աստնուոր կենքի ժամանակը:

Իսկ այժմ ենթադենք, թէ հրաշք է կատարուել, եւ այս երեւելի այրը ծնուել է ոչ թէ հեռուոր միջնադարում, այլ մեր օրերում՝ քսաներորդ դարավերջի արագընթաց երթի, ազմուկի, թմբուկի, մամուլի ու հեռուստատեսութեան առաջադած հոգեկան թմբիկի պայմաններում: Կը պահպանէ՞ր, արդեօք, բարոյական նկարագրի անազարտութիւնն ու խաղաղութիւնը, հոգով ապրելու ու հոգով ընթանալու հաւատի կառարեակ դրսեւորումը: Նախ՝ նա ամէնի պէս գնալու էր մանկապարտէզ, ուր բոլորի հետ սովորեցնելու էին կեզծ հայրենասիրութեան ճոճոցով համեմուած պարերի, երգերի ու ոտանաւորների՝ չգիտես ո՞ւմ յօրինած ու հաստատած ծրագիրը: Եւ դեռեւս մանկապարտէզում, ապա նաեւ դպրոցում ու բուհում նրա հոգում արհեստականօրէն պատրաստուելու էին ամէն տեսակ անհատականութիւն ու նախաիրութիւն ստանալու կոյեկախւ մտածողութեան շարժումը՝ միաժամանակ անցնող ժողովների, բուռն ու երկարատեւ ծափահարութիւնների թմբուկի տակ: Այդպէս՝ միաշարք քայլելով, միանման մտածելով՝ արհեստականօրէն խտրարուելու էր ինքնաճանաչման բնական ընթացքը, եւ, ուրեմն, ինքնամաքրումի ու հաւատի դռները մէկընդմիջա փակուելու էին Գրիգոր վարդապետի առջ, էլ ո՛ւր մնաց քարայրում դուռ հոգեկան սնունդով ապրելը: Միաժամանակ, միաշարք, միահամուռ: Մանկապարտէզի սաները միաշարք դուրս եկան դրօսանքի: Ժողովը միաժամանակ որոշեց... Միահամուռ ջանքերով նուաճեցին առաջին բնագիծը... Ո՛ւր կորան, ասացէք, կենքի շարժումն ու զարգացումը խորհրդանշող հակադրութիւններն ու հակասութիւնները, եթէ ամէն ինչ սովորածի համաձայն այսքան հասկանալի ու վարդազոյն է: Որտե՞ղ են մշակոյթի ու գիտութեան նուիրելիները, որոնց տեսնելն անգամ մոզական պատկառանքով էր լցնում սերունդների սրտերը: Նրանց ի զուր մի փնտռէք անունների ու անհատների ժամանակակից հեղեղում, չէ՞ք գտնելու: Մանրիկ հաշիւների, տալիք-առնելիքի շրջանակներով իրար հետ կապուած շատ մտաւորականներ, աւելի ճիշտ՝ մտաւորական խմբակցութիւններ իրենց ունեցած — շունեցած շնորհքը մի բանի վրայ են միայն գործադրում՝ հնարաւորին չափ խլացնել, պատնէշել շնորհալի երիտասարդների մուտքը գրականութիւն ու գիտութիւն: Անտեսելով, յաճախ նաեւ քարկոծելով տաղանդի ծաղկման հնարաւորութիւնը՝ նրան ձերայնութեամբ են ժամանակակից շուա, եւ այդ համատարած շոր ու արեւախանձ գազոնի վրայ իրենց հանդիսու ու երկարակեաց

զգում: Բայց եկէք շտապենք մեղադրել, որ գիտնականը իսկական գիտնական չէ, գրողը՝ գրող, արհեստաւորը՝ կատարեալ արհեստաւոր, որ նրանք զբաղուած են իրենց մանրիկ հաշիւների նախապատուութեամբ: Պարզապէս զբուսածքն է այդպիսին, զբուսածքն է հնարաւորութիւն տալիս բարոյական այս անկմանը: Պատկերացրէք, իր աշխատանքը գրել-աւարտելուց յետոյ ինչքան ճիշդ ու ջանք է ներգնում երիտասարդ գիտնականը, որպէսզի այն ներկայացնի պաշտպանութեան: Աէ՞ որ անցնելու է լինել - չլինելու մագէ կամրջով՝ այդ ճանապարհին հազար ղեկավարի ու ընդդիմաբանի դուռ է ծեծելու, նրանց կարծիքների տաքուհովին համապատասխան յարմարեցնելու, փոփոխելու իր գրուածքը: Եւ այս քաշքշուկում, պատահում է, մարդիկ կեանք են մաշում գիտական այս կամ այն թեզը հաստատելու վրայ եւ այդպէս էլ չեն հասցնում: Նոյնն է նաեւ գրականութեան մէջ: Ինչպէս Դեմիքստրանն էր ասում՝ լաւ գործ գրելու համար տազանդ է պէտք, տպագրելու համար՝ հանձար: Ահա թէ ինչու մի կերպ պաշտպանեցին թեկնածուական, ապա՝ դոկտորական գիտեստացիաները, վերջ, անեղբն աւարտուած է, գիտական հետազոտութիւնների նիւթը՝ սպառուած: Սիէ սրանք են գիտնականները, ովքե՞ր են ասները: Ի գուր չէ, որ ժամանակին Ալբերտ էյնշտայնը, զժգոհելով համայնաբանական շրջանաւարտների շփագանց ցածր մակարդակից, գրում էր. «Համայնարանները նման են աղբակոյտերի, որոնց վրայ երբեմն գեղեցիկ ծաղիկներ են աճում»:

Միջակութեան այս գորշ համայնապատկերի վրայ նախանձով ենք յիշում նախկին գիմնագիտներն ու ճեմարանները: Ճեմարան աւարտելը համարուում էր միջնակարգ կրթութեան վկայագիր, բայց դա երաշխաւորում էր մի մակարդակ, երբ աւարտողը պարտադիր տիրապետում էր երկու կամ երեք օտար լեզուի, էլ չեմ խօսում գրաբարի ու ժամանակակից հայերէնի մասին, որոնց ուսումնասիրման հիմքը զբուսում էր հենց սկզբից: Աւարտել, ասենք, Գէորգեան ճեմարանը, ամենից առաջ նշանակում էր ունենալ բարձր բարոյականութիւն, խոր ու համակողմանի գիտելիք, լինել արդէն պատրաստի մտաւորական, որի առաջ բաց էին Մոսկուայի, Պետերբուրգի, Բեռլինի, Սորբոնի եւ այլնայլ շքանշանային հանրայայտ համալսարանների դռները: Աւարտել ժամանակակից դպրոցի լրիւ գասընթացը՝ դեռեւս ոչինչ չի նշանակում, եւ պատկերը չի փոխուում նաեւ հետագայում, երբ սրան գումարուում է բուհի գիպլոմը:

Նորը մի՞թէ այսքան արատաւոր է, որ անցեալին փառք տալու ու նախանձելու շփ դատարկածեռն ենք մնացել: Արատաւոր չի, չէ, պակասաւոր է, եւ պակասողն անմնացորդ նուիրումն ու հաւասն է, որ այս յիսուն - վաթսուն տարուած աստիճանաբար փչրուեց մեր հոգիներում: Ձփչրուեց՝ փչրեցին անդրթօրէն:

Մեր աչքի առաջ դեռ երէկ կենտրոնական հեռուստատեսութեամբ ու մամուլով, նաեւ ամէն ժողովի ու հաւաքի հնչող փետուն ճառերում ու յօդուածներում «Հաւատարիմ լինի՛նեան», «Մեծ գրող ու քաղաքացի» յորջորջուող կուսակցական ղեկավարն այսօր, դատելով նոյն հեռուստատեսութեան ու մամուլի մեկնաբանումներից, պարզուում է, երկիրը տարել է անտեսանելի արտաքին ու վատնումի ուռուցիկ ու կեղծ փաստազրութեան, բիւրոկրատական թեւաւարտի ու ոճացման: Նրա կրծքին՝ մեզ հրամցուած նկարներում չէին տեսապարտի ու ոճացման: Մոզեսովեան Միութեան հերոսի քառակի՞, թէ՞ հնգակի մեզալ-ղաւորում Սովետական Միութեան հերոսի քառակի՞, թէ՞ հնգակի մեզալ-ներն ու այլեւայլ շքանշանները: Դէ արի ու նման պայմաններում մի կորցնի հաւատը, մանաւանդ նոյն մարդիկ, ովքեր երէկ, փոփոքր բերաններին, իրենց ճառերում մէջբերում էին բրեժնեւեան ասոյթներն ու խնկարկում նրան, այսօր դարձեալ ղեկավար պաշտօններ են զբաղեցնում՝ այս անգամ

Չանասիրութեամբ գովերգելով վերակառուցումն ու Հրապարակայնութիւնը: Չգիտեմ: Չե՛մ հասկանում: Պարզապէս չեմ կարողանում հասկանալ:

Ես, ի հարկէ, ամբողջ Հոգով կողմ եմ վերակառուցմանը, ուզում եմ, այդ ծրագիրն իրագործուի, բայց փշրուած Հաւատը գալիս – ստիպում է թէպէտ վերաբերմունք ունենալ այս երկիրը, որ ամէն ինչ տեսել է, էլ 1937ի եւ 49ի անմեղ զոհեր ու բանտարկեալներ, էլ, ըստ խրուչովեան կոնսորցի թուերի, 1980ին արդէն (պատկերացնո՞ւմ էք, 8 տարի առաջ) Հիմնականում կառուցւած կոմունիստական հասարակարգ, որը կառուցողի բարոյական նկարագիրը (կողեքս), աստուածաշնչեան պատուիրանների պէս տասը կէտից բաղկացած, մեզ ստիպում էին անգիր ասել քննութիւնների ժամանակ, էլ բրեժնեւեան քիւրդերտիզմ, յայտնի չէ, թէ էլի ինչեր է անսկելու:

Հաւատի կորուստն աւելի սարսփելի է, քան պատերազմի արհաւիրքը: Որովհետեւ պատերազմում թշնամին տեսանելի է ու որոշակի, իսկ սա՛ այս անտեսանելի Հակոտակորդը, պարզապէս նախնիք է կատարում միամիտ ու աղքատ Հոգիների վրայ, նրանց ժամանակից շուտ դարձնում ստերջ ու անհեռանկար:

Ահա թէ ինչու հարկաւոր է լրջօրէն մտածել, թէ ինչ ենք սովորեցնում մատաղ սերնդին, ինչպէս ենք կառուցում նրա դաստիարակութեան գործը: Հապա մի թերթէք տարրական դասարանների մայրենի եւ ռուսաց լեզուների դասադրքերը: Ի՞նչ անհեթեթութիւնների, գեղարուեստօրէն անկատար, նաեւ անելիքի տեսակէտից խեղճ ու ողորմելի ոտանաւոր ու պատմուածք կոչուած ինչպիսի՛ խզրանքների շնք հանդիպի: Գասազբերի Հեղինակները կարծես դիտմամբ են տեղադրել այդ ամէնը, որ երեխաների մէջ Հենց սկզբից փշացնեն գեղեցիկի բնածին զգացողութիւնը, մարդու ու բնութեան նկատմամբ մասնկան անմիջական հաւատն ու սէրը: Ահա այդ կարգի «չլուխ-գործոցներից» մէկը: Եստ թեղ չզբաղեցնելու համար բաւարարուենք միայն վերջին երկու տողի ընթերցումով: Ասենք նաեւ, որ ոտանաւորը Լենինի մասին է, եւ ահա առաջնորդը, իբրեւ պատգամ, աւանդում է երեխաներին.

Միծաղեցէք, երեխաներ,
Միծաղը լաւ է մարդուն:

Հետաքրքիր է իմանալ, ի՞նչն են Հայուի առել, որ այդ հակազեղագիտական, անելիքի առումով խեղճուկրակ թխուածքը դասադրքի Հեղինակները ո՛չ միայն անդադրել են գրքում, այլեւ՝ մտցրել պարտադիր ուսուցման ծրագիրը: Հայ եւ համալխարհային գրականութեան մէջ մի՛ թէ Լենինի մասին ուրիշ լաւ բանաստեղծութիւններ չկան: Եւ ապա՛ այս կարգի ոտանաւորներով փշացնում ենք երեխայի սերը բանաստեղծութեան ու բանաստեղծների նկատմամբ, այսպէս՝ կաթիլ առ կաթիլ Հաւատի կորստի, Հետագայում նաեւ նրա բարոյական անկման Հիմնաքարը դնում: Սա է պատճառը, որ երեխան ինքնուրոյնաբար չի գանազանում թացը չորից, նրա համար նոյնն են դառնում ե՛ւ գեղարուեստական խոր ու մնայուն երկը, ե՛ւ անճաշկութիւնը: Իսկ Հետագայում, մինչեւ այդ ամէնը շտկի, տեղը բերի, ինչպէս ասում են, մի կեանք է մաշելու: Այնինչ միջնադարում, գեոնեւ տարրական դասարաններից գրականութիւնն ու պատմութիւնն ուսանում էին Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեամբ» ու «Աստուածաշնչի» ասոյթներով: Գպրատան սանը կարգում, հատուածաբար անգիր էր անում Հայկի ու Բելի, Տիգրանի ու Աժ-դահակի, Արա Գեղեցիկի ու Ծամիրամի, Աղամի ու Եւայի, Ղրհեղեղի ու Նոյեան տապանի, նաեւ Հայոց թագաւորների մասին հրաշագործ աւանդապատ-

տուժները, որոնք զեղարուեստական ճաշակ տալուց բացի, նրան ժողով էին հայրենասիրութեան, բարոյականութեան ու ինքնաճանաչման: Դպրատուն կամ ձեռարան աւարտածը, ընտիր գրականութիւն, պատմութիւն, ճարտասանութիւն, փիլիսոփայութիւն իմանալուց բացի, իրեն ժողովրդի առաջ պատասխանատու էր զգուժ, որովհետեւ կրթութեան հիմքը ճշմարիտ ու խոր արմատներ ունէր: Փամանակը չէ՞ արդեօք, թէկուզ յիսուն-վաթսուն տարուայ ուշացումով, նորից ձեռնամուխ լինել անցեալի այդ առողջ ու կենսունակ աւանդների վերականգնմանն ու արմատակալմանը մեր դպրոցներում: «Աւտ-ւածաշնչի» ուսումնասիրութիւնից ոչ ոք Գրիտատի նուիրեալը չի դատնայ, հաւատացնում էմ, բայց փոխարէնը ձեռք կը բերի արգարութեան ու ազնը-ւութեան դրահով ապրելու բարոյական նկարագիր, նաեւ գրական շատ երկեր խորապէս ընկալելու ու հասկանալու ունակութիւն, որովհետեւ այնպիսի գրականութիւնների հիմքը մեր նախնեաց պատմութիւններն են, առապելն ու առապելարանութիւնը: Հակազիտական եւ հակապատմական արժէք համարելով՝ մենք «Աւտուածաշունչ»ը արհեստականորէն դուրս ենք մղել մեր դպրոցներից ու բուհերից, եւ համոզուած էմ՝ դրանով նպաստում ենք կրօնական շատ ազանդների գոյութեանը, որին կուլ են գնում մեր երիտասարդներից շարքերը, որովհետեւ արգելուած պտուղը, Ադամի ու Եւայի օրինակով ասած, քաղցր է ու ցանկալի:

Ահա թէ ինչու, հարկաւոր է նախ եւ առաջ վերափոխել կրթութեան ամբողջ համակարգը՝ սկսած մանկապարտէզից, ուր մենք՝ ՀՅԿ-ական թուականների երեխաներս, կարկատած շորերով, ցրտից դողալով ու կիսաբազկ կանչանում էինք բեմում ու արտասանում՝ «Այսքան ուրախ կեանքը մեր, ընկեր Ստալինն է տուել», մինչեւ բուհն ու ասպիրանտուրան, ուր մեզ սովորեցնում էին, որ մարքսիզմը գոգմա չի, բայց վա՛յ նրան, ով կը փորձէ այդ ոչ-գոգմատիկ ասոյթներից որեւէ մէկին ծուռ աչքով նայել:

Վերակառուցման, դեմոկրատացման ու հրապարակայնութեան համապարփակ ծրագիրն ինչքան շուտ իրագործուի կեանքի բոլոր ոլորտներում, սկսած տնտեսականից մինչեւ հոգեկանը, այնքան արագ կը բողբոջի, առողջ ծիւեր կը տայ հիւանդութիւնից հիւծուած մեր օրգանիզմը: Որովհետեւ այդ ծրագրի իրագործումը, պատկերաւոր ասած, շտտ է նման Նոյեան տապանի, որը մեր տառապած, հազար ու մի ցաւ ու զրկանք, պատերազմ ու արհաւիրք տեսած հոգիները կարող է տանել-հասցնել ապագայի լիբան զազաթը: «Հազէք արդարութեան գրահները», — սեւլ են հետում: Նոյեան տապանում ապագայի լիռը որոնող մարդիկ, որոնք հետագայ մարդկութեան առողջ սերժացուններն էին, ուրիշ հազուստ չուներին, եւ, բնական է, որ հազնելու էին իրենց մերկութիւնը ծածկող այդ միակ զգեստը: Եւ մենք էլ, ուրեմն, մեր բարոյական ինքնամաքրումի ճանապարհին ուրիշ զգեստ չունենք, քան այն, ինչ սպասում ենք վերակառուցումից՝ մեր հազնելիք արդարութեան գրահները, որոնց վրայ սարդը ոստայն չի հիւսում երբեւէ, եւ ամէն տեսակ ցուրտուհովին ժանդ չի շոքում ամենակուլ («Գրական թերթ», 1988, թիւ 24):

ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Արձույթի, թաղմանի և քեմադի Եսփան-
նես Մելքոնեան ծնած է 27 Փետրուար 1937ին, Ար-
թիկի չրֆանի Անդրեճզա գիւղը: 1955ին կ'աւարտ
Լենինականի Հագարոս Ազգայնական տնտես գործ-
քը, իսկ 1960ին՝ Երևանի պետական Վարձարա-
նի բանասիրական ֆակուլթէի նայոց լիգուի և
գրականութեան բաժնիը:

1960-ին տարիներուն Յ. Մելքոնեան կը պաշտո-
նավարէ Վեհապարտ թերթին ձեռք բերելու բաժնի
գործը, 1965-68՝ «Հայրենի» ծայր շարժումներ-
ին ձեռք բերելու բաժնի գործը, ապա՝ պատաս-
խանատու ցարտուցար, 1968-80՝ «Պարունճի»,
«Գրէրի աշխարհի», «Գրական թերթի», «Մովե-
տական գրող» նրատարակչութեան և պատկերաս-
տի ապին ժապատէններու «Երևան» սփիւտիւնի
ձեռք բերելու պատասխանատու պաշտօններ:
1980-88 տարիներուն, սակայն պաշտօնավարէ Հայ-
րենի պատկերաստիւտի և ձայնաստիւտի կոմի-
տէին ձեռք բերելու պատասխանատու խմբագրի:
1988ին կ'ընտրուի Հայաստանի գրողներու միու-
թեան վարչութեան անդամ և կը ստանձնէ առա-
ին ցարտուցարի պատասխանատու պաշտօնը:

Յ. Մելքոնեան ցարդ նրատարակած է շինջ Հա-
տարներ, որոնց գլխաւորներն են՝ «Քարտան»,
«Հեռուոր հոգի ձայնը», «Հարցախնայութիւն և
«Մոր ձայնը» տնտես գործերը: Յ. Մելքոնեանի քե-
մադրութեանը՝ քեմադրուած են «Հայր Տոնապե-
տի մենաստուրի» նրք, «Հրամարակալ» և «Նու-
նարիտ» իր վազուայ օրուան տնտես նրք թատերա-
խաղերու երկմաս ժապատէնը:

Յ. Մելքոնեանի բնորոշ պատմուածքներն են «Քի-
պակներն ուսանք թաղմանու ան նր ուսանքներ և
այլ լիգուներու, իսկ ուսանքները Հայացու ցած է Տրի-
ֆու իւրի սուրիշ կեանք և «Ներկարատե» բաժա-
նու մէջ «Քիպակները»:

... ի սէր Աստուծոյ, ի սէր
ճշմարտութեան, ինչ որ
անցեալինն է՝ մի խլէք անց-
եալից եւ խցկէք մեր ներ-
կայի մէջ, անհեթեթութիւն
է, օրապակասի արած գործ
է, դա նոյնն է, թէ մարդ իր
տան հիմքերի եւ ներքին
շարքերի քարերը քանդի
հանի եւ դրանցով քարձ-
րացնի իր տան պատերը:

Ովքեր տեսել են ստալին-
եան եւ լճացման անհեթե-
թօրէն շարք, անստեղծա-
գործ, բիրտկրատեան տա-
րիները, ամբողջովին, հո-
գով-սրտով վերակառուց-
ման եւ հրապարակայնու-
թեան կողմնակից են: հա-
մոզուած եմ՝ կեանքները
չեն խնայի, որ այն, ինչ
դեռես որոշում է, նախա-
տեսութիւն է, խոստանում
է, խօսք է, դառնայ՝ շուտով
դառնայ առկայ գործ, առ-
կայ իրականութիւն:

Միւս ժողովուրդների
համար չգիտեմ ինչպէս, իմ
ժողովրդի համար վերա-
կառուցումը, հրապարա-
կայնութիւնը, դեմոկրա-
տացումը փոքրական եւ
բարոյական գոյապայման
է՝ հոգեւոր հաց ու ջուր...

բուժիչներ, փոխանակ խորամուխ լինելու և խորատեսորէն կուսակցու, որ մեր ազգային բնաւորութեան մէջ բնաւ որուած յոռի գծերի գրան սրու մներից շատերը սոցիալական, բարոյական, կենսական սխալ, խոտոր, վատ պայմաններէ թելադրանք ու արդիւնք են և ոչ թէ իրեն բնաւորութիւն են, իրեն արեան մէջ սեզմնաւորուած բան են: Մենք՝ զրոգներս, արի խոստովանեմ, աննորապէսութիւն և որոշ շարժում էլ անհետատեսութիւն ցուցաբերելով՝ մեր ժողովրդի հասարական կերպարը մեր շատ երկերու մ, պիտաներու մ, կիներակարներու մ, հրապարակախոսական յոգուածներու մ յաճախ ծուռ հայելու մէջ ենք ներկայացրել, նրա վեհ, բարի, այլապէս, արժանապատիւ, ազնիւ, ազգասէր, քաղաքակիրթ բուն-բնաւորութեանը արհեստակածորէն վերնագրելով գծեր, որոնք բարոյական, սոցիալական, կենսական խորշակ քամիներէ բերած-կրօնցրած են՝ մեծաւ մասամբ: Բարոյա-քաղաքական պայմանները փոխուելու բնթացքի մէջ են, սպասենք և յոյս ու նենտք, որ լիովին ու լիարժէքօրէն կը փոխուեն, և կըր այդ ամէնը գլուխը զայ՝ կուսակցութեան հոշակած վերակառուցում - հրապարակայնութիւն - զեմոկրատացումը սրբուած-խօսքից գառնայ որոշակի-դործ, այսինքն՝ ստեղծու են բարոյական, սոցիալական, կենսական բարի ու բնական պայմաններ, այն ժամանակ կը տեսնենք, որ մեր ժողովրդի ազգային բնաւորութիւնը կը մաքրուի զանազան կպու կներից՝ բնյա-սիրութեան, ընչաքաղցութեան, կաշառակերութեան, ևսասիրութեան և այլ յոռի գծերի տեղ ու ցիւրից:

Սա հաստատու մ եմ՝ վստահօրէն հաստատու մ եմ իմ ժողովրդի ողու ու մին և աշխուրթեանը, կենսական և հոգեւոր իր գոյութիւնը պահել-պահպանելու նրա զարմանալի հիգիենիկ յատկութիւններին, այլապէս նա չէր կարողանայ անցնել հազարամեակներէ բարոյական և ֆիզիկական աղաւ ու աղարտի միջով՝ բունութեան միջով, խաւարի միջով, արիւն-արցունքի միջով, քոչուոր վայրենիների միջով, ասարաւու գրկիցների արիւնտ նենդութեան միջով... Ս՝ իմ ժողովրդի հազարամեակների անցած ծանր ու դժուար ճանապարհն ու իրեն բաժին հասած աղաւոր բախտն ու դժման ճակատագիրը՝ Ըզ նակեաց ժամանակագիրների և պատմիչների ձեռքով աւելու էլ են մազազաթմներին, սեպագրու էլ են քարերին, արժանագրու էլ են կոթող-յուշարձաններին, — և այս ամէնի գուժաբը մեր պատմութիւնն է՝ հայոց պատմութիւնը, հայերիս պատմութիւնը: Սակայն վերակառուցման և հրապարակայնութեան բնձնաժամ ազատ խօսելու հնարաւորութիւնից ազատուելով՝ շքալու ենք, բաց ասկէք, որ և՛ ստայինեան, և՛ բրեժնեւեան տարիներին, ինչպէս միւս ազգերին, այնպէս էլ մեզ՝ հայերիս, անջրպետել են մեր պատմութիւնից և՛ գպրոցներու մ, և՛ համալսարաններու մ: Այս պատճառով էլ տարիների ընթացքու մ մեր սերունդներէ մէջ գնալով բարակեց՝ մազի շարի բարակեց մեր պատմական յիշողութիւնը: Անհեթեթ ու վնասակար մի կրթով մեր գազափարական վերին և ստորին զեկավարները, մեր գազափարական տետղոսակիր և անտիտղոս քաղաքիչները, գասախօսները, պրոպագանդիստները, նաև գրողները, սկսած երեսնական թուականներից, մինչև հիմա էլ, փորձու մ են ամէն լաւ բանի սկիզբը, մեծ մասամբ, համարել 1920 թուականը կամ, գլուխը քարը, հետագայ թուականները: Ինչպէ՞ս են արել ի հարկ էլ, պատմական փաստերը կեղծելով, և այն էլ՝ ինչպէ՞ս կեղծելով: Սե բանը հասցրել են այնպիսի ծիծաղելի ծայրայնութեան, յիշեցէք երեսնական թուականները, որ մեր գրագիտութեան, գրականութեան, արու ևստի, մշակոյթի շատ ու շատ ճիւղերի սկիզբն էլ են բերել 1920 թուականից այս կողմ՝ ամայացնելով մեր պատմութեան այնկողմնային զարերն ու հազարամեակները: Փառք Հայաստանի սովետականացմամբ հիմք ու սկիզբ գրուածին, սկզբնաւորուածին, գրանք շատ են, հրաշալի են, ևս հպարտանում եմ, մենք հպարտանում ենք: Սակայն, ի սեր Ասածոյ, ի

սեր հիմարտութեան, ինչ որ անցեալինն է՝ մի խլիք անցեալից եւ ինչպէք մեր ներկայի մէջ, անհնթեթութիւն է, օրտպակատի արած գործ է, դա նոյնն է, թէ մարդ իր տան հիմքերի եւ ներքին շարքերի քարերք քանդի հանի եւ գրանցոյժ բարձրացնի իր տան պատերը: Ինչպէս Պարոյր Սեւակը կ'ասէր, օգտուելով վերականգնման եւ հրապարակայնութեան բարեկարգ եղանակից, այսօրուանից, Հենց ա՛յս պահից մենք՝ գրողներով, պատմաբաններով, հնագէտներով, աշխարհագրագէտներով, նարտուրապետներով պէտք է գրազու ենք թուրք թշնամու կողմից, մեր հարեւան ազգերի ազգայնամոլ վայ-գիտնականների կողմից եւ նաեւ, ցաւօք, մեր իսկ կողմից աւերակուած, կեղծուած, նենգափոխուած ԱՆՅՅԱԼԼ նորոգելու՝ վերականգնելու գործով: Ինչպէս մեր հազարաւոր յուշարձաններն են քանդուքարով արիչ, այրիչ, հողին հաւատարեցրիչ դերեայ Արեւմտեան Հայաստանում, Նախիջևանում, Արցախում, այնպէս էլ շատ ու շատ դարերի եւ հազարամիակների պատմութիւնն են նենդիչ, կեղծիչ, աւերակիչ՝ ենիշխարար գրիչները բրիչների եւ հաթաղանների նման գործածող վայ-պատմաբանները: Ինչպէս Մովսէս Կապանցի Հայաստանի տարածքում դառնուող պատմական յուշարձաններն ենք վերականգնում, ժամանակն է յո՛ւյժ ժամանակը, որ մեր պատմական անցալը, ինչպէս որ է, վերականգնենք, ժամանակն է՝ խոտանենք եւ մակուշատուքայի համար օգտակար գործնենք հայ ժողովրդի ծագու մարանութեանը, պատմութեան հանդուցային հարցերի վերաբերող կեղծ ու պատիւ, ծուռ հայեիքների նման ամէն ինչ ծուռ ու ծիծաղելի անդրազարժող գրքերը: Ժամանակն է անհատի պաշտամուտքի եւ լնացման տարիների դիտութեան կեղծարարներին՝ դիտու որեւէ կեղծողներին եւ անդիտութեամբ կեղծողներին, բարոյական, եւ ո՛չ միայն բարոյական, պատասխանատուութեան ենթարկել եւ արզելք դնել նրանց գրքերի վրայ, այդպիսի գրքերի վրայ արզելք գնելը հիմարտութեան եւ դիտութեան բարոյականութեան օգուան է, ի տարբերութիւն այն հազարաւոր հիմարտաբան գրքերի, որոնք փակի ու արզելքի մէջ էին անհատի պաշտամուտքի եւ լնացման տարիներին: Եւ ժամանակն է, որ մեր գլխուցական եւ բուհական գասադրքերում մեր Հեռու եւ մօտիկ անցեալի պատմութիւնը լինի ոչ թէ տնւոր՝ ծուռ-բաւժ մի քանի նեղիկ էջերում, այլ լինի տալուտը՝ իր տան տէ՛րը եւ մեր այդ լայն պատմութիւն-տասնութիւնը դո՛ւները լայն բացուած լինեն մեր գլխուցականներին, ուսանողներին, բոլորի առաջ: Իմ սիրունդն, օրինակ, գլխուցական տասը երկար ու միջ տարիների ընթացքում, ին՛դն իմ սերունդ, ի՛նչ հայժողպատմութիւն է անցել, — այդ մեծ պատմութեան յապատու մն ենք անցել, երեւի յապատու մն էլ չէ, շուտասուտեկն ենք անցել:

Ինչպէս անհատարակ իւրաքանչիւր աշխարհագրական քարտէջ բազմապատիկ, բիւրապատիկ փոքր է լինում իրական տարածութիւններից, այնպէս էլ մեր ժողովրդի պատմութիւնը բազմապատիկ փոքր մասշտաբներով էր արտայայտուած մեր գլխուցական գասադրքերում: Մակայն իմ բախուր բերել էր՝ Մուշից քանդուած եկած իմ Ձոհրայ պապը, իրական կեանքի ու իր հակա-տաղբի դառնութիւնները մոռանալու համար, լիչում էր, լիչում ու պատմութեմ էր 1915 թուականին իր գլխով անցած պատմութիւնը, Վարդան Մամիկոնեանի ու Վարդանանց պատմութիւնը, Սուրբ Մեսրոպի գրքերի երկնուց իջնեալու պատմութիւնը, Անգրանիկ փաշի պատմութիւնը՝ «գլուխ չէր առնում էնոր», ու բիչ-ուրիչ պատմութիւններ... Առ զի պատմութեան գասադրքը՝ իմ պապի բանաւոր պատմածներն էին, առ զի պատմութեան ուսուցիչ՝ կիսատ կրթութիւնով իմ պապն էր: Մակայն Հիմիկուայ թոռները այնպիսի պապեր չուրեւ, ինչպիսին մեր պապերն էին՝ 15 թուական տեսած, Անգրանիկ տեսած... Եւ բացի այդ, ժամանակակից պապերը ժամանակ ունեն՝ նստեն իրենց թոռների հետ գրուցեն՝ պատմութիւններ անեն, Հեռուստացոյցը չի թողնում:

Պապերն այնպէս, բայց եւ ժամանակակից թոռներն էլ, իրենց Հերթին, ժամանակ ունենալով պապերի հետ նստել գրուցելու, Հետո ստացոյց են նայում:

Աւրեմ, պարոցական դասագրքերը պէտք է նորոգուեն՝ մեր ժողովրդի պատմութիւնը պիտի հարկաւ որ բաւ արարութեամբ իմանայ մատաղ սերունդը, իմանայ՝ ո՞վ է ինքը, որտեղի՞ց է գալիս, հազարամեակներ ի՞նչ ճանապարհներով է եկել, ո՞ւր է գնում, ինչպէ՞ս է գնալու ապագային բնդատալ: Ժողովրդի պատմութիւնը հարկ է լաւ իմանալ, որպէսզի ո՛չ միայն արթուն, աշխուրջ, գոյն ու զգաստ լինեն մեր ազգային դիտակցութիւնն ու ոգին, այլեւ անհրաժեշտ է այդ պատմութիւնը լաւ իմանալ նենգութից, կեղծութից, աւարտութից պաշտպանելու: Համար: Ժողովրդի պատմութիւնն էլ, ինչպէս հայրենի հողը, ինչպէս մայրենի լեզուն, պաշտպանութեան կարիք ունի: Հողի աւարտունների հին սովորութիւնն է՝ խննդարէն յարձակուած են նաեւ ուրիշ ժողովուրդների պատմութեան վրայ՝ իրացնելու, իրենցով անելու, իրենցը դարձնելու: Նրանք՝ ուշ դարերում պատմութեան թատերարժեք մտած այդ քնուր ձեւաները (ինչպիսին որ են, սրինակի համար, սելուկ թուրքերը) քաղաքակրթութեան ներկայ դարում փորձում են իրենց համար խոր անցնալ ԵՄԻՆԵՆԸ, իրենց պատմութիւնը դարերի խորքերը հասցնել... Ի՞նչ միջոցներով՝ հայ ժողովրդի պատմութիւնը յափշտակելով, աւարտելով, յափշտակելով եւ աւարտելով այնպէս, ինչպէս հողը:

Գրողների մեր սերնդի՝ վաթսուեակներին կեանքի ժամանակը, ով կարող է ծխակ, շատ խայտարղէտ ու տարափոխիկ եղաւ: Ասեմ՝ Համոյեմ. մեր վաղ ժանկութիւնը հոգեկալստ պայնուց, վիրաւ որուց, հաշմանդամուց, խնթիքութեանց պատերազմի Հետո գաշտերում պայթող ուռմբերից ու արկերից, սուրացող գնդակներից ու թունաւորող դաղերից: Մեր ժանկութիւնը հայ շուներ, հայր շուներ: Մեր թլուստ լեզու-բերանը հայրիկ ասելուն գնու մի կարգին շփարժուած՝ մեր հայրերը գնացին, եւ մենք անզամ բախտ շունեցանք, որ շարութիւն անելու համար մեր ականջները քաշէին եւ տեղն եկած տեղը, ապտակ հասցնէին... Առանց հայրական ապտակի եւ ականջ քաշելու, — հայրական դատարարական թեան կարօտ մեծացանք, — եւ եթէ ականջ քաշել էր, մերան սոււնամանիքն էր կամիթով քաշում գարդի ճամբին եւ եթէ ապտակ հասցնել էր, սեւ բախտն էր հասցնում՝ ուղմանակատից եկած սեւ թղթերով: «Հայկիսիներ» եւ «կեցցելընկերատային» վանկարկելու ժամանակներ էին: Այստեղ՝ մեկ ծօտ այրութեան տառերը վանկարկելուց առաջ մեր ուսուցիչները, խեղճները ի՞նչ անէին, սովորեցնում էին նախ «կեցցելընկերատային» վանկարկել, իսկ այնտեղ՝ մեր թշնամի Գերմանիայում, մեր հասակակից գերմանացիները, նախեւ առաջ, սովորում էին վանկարկել «Հայկիսիներ»: Մենք դարոցական՝ առաջին դասարանի աշակերտ, այրութեան տալիս տառեր՝ «կեցցելընկերատային...», մեր անդիր արած առաջին բանաստեղծութիւնը՝ «կեցցելընկերատային...»: Մենք դարոցական՝ մեր սովորած պատմութեան տալիս դասը՝ «կեցցելընկերատային», մեր բուսարանութեան առաջին դասը՝ «կեցցելընկերատային», նոյնիսկ... նոյնիսկ մեր լուծած թուարանութեան առաջին խնդիրը՝ «կեցցելընկերատային»: Իսկ այդ նոյն ժամանակ մեր պապերը՝ «կեցցելընկերատային» հրամանով ու հովանաւ որում ժող կամ վազորօք գնդակահարուած էին, որ մի պատերազմը շտեմնէին, — դահճային ի՞նչ բարի գրտաւ որութիւն, — կամ աքսորուած էին սիրբիներ՝ ճակատներին ժողովրդի թշնամի» սեւ խարանդ:

Ո՞վ է ժողովուրդը, ո՞վ՝ ժողովուրդի թշնամիները, — մի հարցու, դաքս գրտեմալու բանը չէ, այդ բանը գիտի ինքը՝ «կեցցելընկերատայինը» եւ գրտեմ նրա պատժաւճող ճեւեակները» եւ «եռեակիկները»: Եւ ահա մենք՝ մեր սերունդը, մեր սերնդակիցներից հազարաւորներ, ինչո՞ւ հազարաւորներ, մի-

լիոնաւ որներ... Միլիոնաւ որներ իրենց ժօրից ծնուած կին ճօղովորդի թշնամու թոռ խարանդակատներին: Այսօր թմծիծաղ կր տաք, կր թքեք, կ'աւէք՝ անհեթեթութիւն, վարդ թմծիծաղ կր տան, թուքուքուք կր թափեն ճկեցցիկներստայիննան՝ հիւանդ-իւնչազար ոնրագործութեան ձեւի ու կերպի վրայ, բայց ինչ անկա, այդ պէս է՝ բոլոր ժամանակներու ժբունակայութեան ողորձելի ու սնամէջ կոթիւնը եղել է արտօրդ-անհեթեթութիւնը:

Արտօրդ-անհեթեթութիւնը չէ՞, տաք, իմ պապին՝ Զոհրայ Մելքոնի Մշեցեանին, ճօղովորդի թշնամիս կարն ու կարուկ պատժովնով բանտարկել էին 37ին, իսկ նրա շորտ որդիները ճկեցցիկներստայիննէ՛ք գերագոյն-գործաւոր հրամանատարութեան ներքոյ 13ին կու ու լին ոսպմանակատային աւաղաւոր դիրքերում: Կու ու լին զբաւում Հայրենիքի, գերում ճողովորդի եւ իրենց բանտարկում Հօր ազատութեան Համար: Ահա եկաւ 45 թուականը, տուն եկան ճօղովորդի թշնամիս իմ պապի շորտ որդիներէջ երեքը, եկան Փաշխտաների կողմից գրաւում Հայրենիքն ազատագրած, եկան՝ ճողովորդ-գերումաներին ազատութեան Հասցրած, բայց, այ ճիշ արտօրդ-անհեթեթութիւն, ի զօրու չեղան իրենց Հարազատ Հօրը աջարից ազատել:

Այնպէս որ, ո՛չ ժիայն Հայր, այլև՝ գրողների մեր սերնդից՝ վաթսու նահանգից շատերը պապ էլ չտեսան կամ տեսան, երբ արդէն պապերը անկտրոյ էին պապութիւն անել՝ սիրիներէջ եկել էին ձեռու ոտից բնկած, հիւանդ ու կեանքերը Հատած... Եկան ու զնային:

Պատերազմ-եռուստերագմի տարիներն անցան՝ մեր մարմնաւոր-երկրային-աստնուոր կեանքը մի գրկանքից միսին տալով... զիմանալ էր պէտք՝ զիմացանք... իսկ մեր Հոգեւորը նուաստացման էր ենթարկուել՝ տխրահամար 37 թուականից մինչև: 50ական թուականները: Եւ ահա եկաւ 1953 թուականը՝ վրայ Հասաւ ճկեցցիկներստայիննէ՛ք մահ ու վախճանը, ապա ճօղովորդեան գատի ու գատատանի առաջ կանգնեց, աւա՛ղ, ետմահու, իսկապէս ճողովորդների ստոյգ թշնամիս՝ Ստալինն ինքը: Գողովորդեան գատ ու գատատանի առաջ կանգնեցին վարի ու վերելի մեծ ու փոքր ստալինիկները:

Հասարակական, բարոյական, արդարական, մարդկային բարոյականութեան մէջ 60ական թուականներին բարեխոյս նորութիւններ եղան, առ ի բարին, ճշմարիտը, արդարացին տանող զոններ բացուեցին, լենինի դամբարանից Հանուեց բունակայի զմոսեայ զին, պատուանդաններէջ վար բերուեցին եւ ձուլարանների արդար ու բոլոր կրակներին արուեցին Հազարու որ պղնձեայ արձանները ճայր-առաջնորդի, որը՝ եթէ Հայր էր, ապա Հայրն էր մահապատիժները ի կատար ածողներ, իսկ եթէ առաջնորդ էր, ապա առաջնորդն էր միլիոնաւոր անմեղների սիրիները աջարի առաջնորդը պահակախմբերի: Մենք՝ վաթսու նահանգի թուականներին սկսած գրողներ, որ մայրենի այբուբանը սովորել էինք նրա անունը տալով, տասներորդն աւարտել էինք՝ չեզու, գրականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բուսաբանութիւն, աստղագրութիւն նրա անունն հետ կապելով՝ ականատես եղանք նրա՝ Ստալին կոչուածի ծայր ի ծայր անկմանը, ինչպէս Բիբլիայում էլ ասուած՝ կար եւ ահա չկայ... Բայց այդ կարը՝ նրա լինելը, մեզից խել էր մեր կեանքի 16-17 տարին եւ, եթէ իսկապէս ճշմարիտ լինենք, մենք մեր մանկութիւնն ու պատանակութիւնն անհատի պաշտամունքի, կեղծութեան, բունակայութեան տարիներէ՛ք ջնջելով անհատի պաշտամունքի, կեղծութեան, բունակայութեան տարիներին ձեռք բերած այն ամէն կեղծ ու պատիճը, փուշն ու փուտը, որ, ի վերջոյ, իր ամբողջութեան մէջ զարձեւալ ոչինչ էր՝ զրօ, կամ էր եթէ որեւէ բան էր,

ապա շատ շնչին էր: Եւ ահա կրթական, գաստրոսոցիական, հոգեւոր, բարոյական այս շնչինով, որ կորզել էինք դպրոցական տարիներից, մենք մտանք համայնարան, մենք մտանք կեանք, մենք մտանք գրականութիւն... Վատ եւ չար ժամանակները կհրատապառտութեան գրողմ էին թողել մեր հոգեւոր էութեան վրայ, մանկութեան, պատանեկութեան հրաշք տարիների մեր կորցրածը, ինչ գնով էլ լինէր, մենք պիտի ետ բերէինք՝ վերաստիճակներ մեր լիզուն, մեր գրականութիւնը, մեր պատմութիւնը... Այս՝ այսպէս, մենք պիտի նսեմ մեր սրտից, հոգուց եւ հոգեբանութիւնից հանէինք ահա ու վախը, խեղճութիւնը, քծնանքը եւ այն բոլոր բարոյական բորբոսներն ու ախտերը, որոնք ժառանգութիւն էին մնացել 37 եւ 49 թուականներից, լճացման տարիներից: Այդ թուականները, այդ տարիների անցածն ու դարձածը եւ իմ սերնդի կեանքը ողբերգական շերտեր եւ աւելի մոռայլ գոյներ են ստանում, երբ համեմատում եմ վերակառուցման եւ հրապարակայնութեան այս ժամանակի յոստատու պատկերների հետ: Ովքեր տեսել են ստալինեան եւ լճացման անհիմնութիւնը չար, անստեղծագործ, բիւրոկրատեան տարիները, ամբողջովին, հոգով-սրտով վերակառուցման եւ հրապարակայնութեան կողմնակից են: Համոզուած եմ՝ կեանքներն չեն խնայի, որ այն, ինչ գեղեւս որդու մէջ, նախատեսութիւն է, խոստում է, խօսք է, գառնայ՝ շուտով գառնայ առկայ գործ, առկայ իրականութիւն: Այս առումով իմ սրտին շատ դուր եկաւ 19րդ կուսկոնֆերանսում գրող Գ. Բակլանովի ճշմարտախօս ելոյթը, ըմբռնեց երկրագնդում, — ասաց նա, — առաջին ապրողները չենք եւ մարդկութիւնը փորձ է կուտակել եւ այդ փորձի մի մասը ահա թէ ինչ է վկայում: Թարգիլ իրենց պատմութեան ընթացքում բազմիցս պայքարել են յանուն իրենց արկիւցման՝ նոյնպիսի ետանդով ու ջանասիրութեամբ, որոնցով թոյլատրելի է պայքարել միայն յանուն ազատութեան: Երբ սինազարդ գահինում երեսունեօթ թուականի դատաւարութիւններն էին տեղի ունենում եւ մարդիկ քայլում էին պակասանորով, մահապատիժ պահանջելով, նրանք չէին կասկածում, որ շուտով իրենց հետ նոյն կերպ կը վարուեն:

Ճշտ, ով այսօր պայքարում է ընդդէմ հրապարակայնութեան, պայքարում է յանուն իր արկիւցման: Երբ նրան հարկ կը լինի խօսք ասել, նրան էլ կը մերժեն այդ խօսքը տալ: Եւ դա ի՞նչ սոցիալիզմ կը լինի առանց հրապարակայնութեան: Իսկ ի՞նչ է սա, ընկերներ, միթէ միայն մի շունչ ազատութիւն շնչելուց յետոյ արդէն պապանձուե՞լ ենք: Անհրաժեշտ է օրէնք մամուլի մասին: Մամուլը չի կարող գոյութիւն ունենալ բոլոր այս կամ այն մարդու կամքի այսօր յանուն հրապարակայնութեան, իսկ վաղը՝ ընդդէմ հրապարակայնութեան: Հաստատուն իրաւաբանական հիմք է պէտք: Եւ եկէք ազնիւ լինենք: Մեզ ժօա դեմոկրատիա դեռ չկայ, մենք նոր ենք սկսում սովորել այն, վերին շնչուններում մինչեւ հիմա շատերը չեն հաստատում, որ օրէնքները նսեմ իրենց համար են գրուած, իսկ ներքեւում գտնում են, որ եթէ դեմոկրատիա է, ուրեմն ամէն ինչ թոյլատրուած է: Իսկ ազատութիւն առանց պատասխանատուութեան գոյութիւն չունի եւ չի կարող լինել:

Անհատի պաշտամունքի եւ լճացման տարիներին արժատ գցած, սաղարթ կապած, փարթածօրէն ճիշտ որում հակաբարոյական, յոռի երեւոյթները որդնոտած, ցեց բնկած ծառեր չեն, որ սղոցով կտրես, կապի բերան ստա՞ վերացնես, որպէսզի անտառի մէջ վարակը շտարածուի: Այդ երեւոյթները ինքնիշխան գործողութեան ասպարէզներ կը գտնեն նսեմ վերակառուցման եւ հրապարակայնութեան ժամանակներում՝ երևի երկար տարիներ: Ուստի եւ՝ միամտութիւն է կարծել, որ այս տարի իսկ, այսօր իսկ մենք արդէն անհատի պաշտամունքի եւ լճացման օրից անցում ենք արել վերակառուցման եւ հրապարակայնութեան բարեյուսոյ ափ: Հազար անգամ

ճիշտ է Գ. Բակլանովը. «Մեզ ժողովրդական դեմոկրատիա դեռ չկայ...»: Եւ այդ դեռեւս չկա՞մ արդէն եղած համարելով՝ իմ ժողովուրդը, վերակառուցման, հրապարակայնութեան, դեմոկրատիայի սկզբունքներէջ նշեցով, պահանջում է մեր կեանքում բռնութեամբ եւ քմահաճութեամբ թոյլ տրուած սխալները ու զորութիւնը: Միանգամայն ազնիւ, ճշմարիտ եւ արդարացի, կարեւոր պահանջ է նաեւ, որ ուղղութիւնը Ստալինի բռնակալի յանցանոր սխալներէջ մէկը, որը 20ական թուականներէջ առ այսօր մեր ժողովրդի հոգու վրայ մրձուռ ու վէրք է գարձել: Լենինային Արցախի Լենինի եւ իսկական լենինականներէ արդարացի կամքով արդէն Հաստատուած վճիռ-որոշում էր, Սովետական Հայաստանի անբաժանելի մասն էր լինելու, եթէ այստեղ չհասներ Ստալինի գաւազիք ու խառնակիչ ձեռքը:

Վերակառուցման եւ հրապարակայնութեան բարի ու լաւ ժամանակի գայտեան շնորհները չնչիւն են: Բայց՝ ինչպէս ամէն բացուող առաւօտի մէջ անցնող դիշերու այ խաւարամածութիւններ ու մշուշներ են լինում՝ յետոյ կամայ-կամայ մաքրուելու են, այնպէս էլ նոր բացուող մեր այս ժամանակի մէջ գոհեալ բարոյական-գեմոկրատական խաւարամածութիւններ ու մշուշներ կան, խաւարամածութիւններ ու մշուշներ ստեղծող-պահպանողներ կան... Ինչ մի գաղտնիք է՝ վերին եւ ներքին պաշտօնատեղակներում գոհեալ ստալինաւորներ եւ բրեժնեւապաշտներ կան, նրանց արժապարհի կարուկ, գոհեալ ու ռեճուտ: Եւ բարդ էնու պէս անպատու ըրի բոկրատիայի ծառի ճիւղերը փարթաւոր են փարթում են՝ մերձեւոր սոցիալիզմը գոհեալ այդ ճիւղերին, ինչպէս Հարկին է, չեն մտակցել: Ահա, ահա, այս բոլորը քորերի պէս ընկնում են մեր պահանջներէ ատու: Մենք պէտք է ինքներս մեզ տանք-տոնենք, պատրաստենք ինքի ու գոհեալարդեալ պատկերացումներէ մէջ շրջաններ, իրականորէն-աւարտելու ընդունենք, որ ստալինեան եւ բրեժնեան Հաստ պատեր կան գոհեալ, գոյշ լինենք՝ բաց ճակատով ի գուր տեղը չհարուածենք Հաստ պատերին: Տեղը եկած տեղը, որոշ Հարցերում, համբերանք ու նենանք՝ սպասենք, որ վերակառուցման, հրապարակայնութեան, դեմոկրատացման գոհ-գարգապաները լայն բացուեն եւ բռնակալական ու չնայման փառք գոհերը խորտակուեն: Դեռեւս չեն խորտակուել, ցուօք, եւ մեր արդարացի պահանջները դէժ մնաւեալ մայր անարդարութեան գոհերին:

Միս ժողովուրդներէ համար չգիտեմ ինչպէս, իմ ժողովրդի Համար վերակառուցումը, հրապարակայնութիւնը, դեմոկրատացումը ֆիզիքական եւ բարոյական գոյապայման է՝ հողեւոր հաց ու ջուր, որովհետեւ այս դարը՝ այս 20րդ քաղաքակիրթ հոշակուած դարը, իր բարբարոտական ամենամեծ ժանդարներէջ մէկը կորուկ է իմ ժողովրդի երկու միլիոնի միս ու սկիւրը յօշոտելով: Այդ մարդակեր ժանդարի ազգանուր թուրք է, անուր՝ երիտթուրք: Երիտթուրք թուրք ժանդար՝ երկու միլիոն հայ ցեղասպանելու ի դահաւարք, քաղաքակիրթ տիկին Եւրոպայի բարեհամբուր կամեցողութեամբ իրենն է արել Արեւմտեան Հայաստանը՝ հայի ձեռքերով հաղարամեակներ կառուցած քաղաքներով, փանք-եկեղեցիներով, հրաշքներով... Եւ այսքան համախարհահային անարդարութիւններ, ծայրագոյն անարդարութիւններ տեսած իմ ժողովուրդը՝ իմ հոգր ու խեղճ ժողովուրդը, ի՞նչ հողու մոխիր տայ իր գլխին՝ ինչպէ՞ս գիմանայ, երբ դարի սկզբին՝ 15 թուականին ծայր առած ցեղային արիւնահեղութիւններն ու ազգային անարդարութիւնները, փոխանակ Հաստ ցուժ ստանալու, նոր արիւնտ չի եր են տալիս՝ սուժ գայիթեան արիւնտ օրերը ձեզ օրինակ:

Ճշմարիտ եւ գործնական վերակառուցման, հրապարակայնութեան, դեմոկրատացման ճանապարհը, ուրիշ ժողովուրդներէ համար չգիտեմ ինչ է, իմ ժողովրդի Համար փրկութեան արիւն է, էլքի գուռ է, մեր՝ անիրաւուածներին

արդար իզմերի ու պահանջների կատարման յոյս ու հաստ է: Մեզ համար, առանց չափազանցութեան, այսպիսի գերազույն նշանակութիւն ունի վերահաստատումն եւ հրապարակայնութեան ժամանակը, որս համար էլ իմ ժողովուրդը ծայրայեղ խանդավառութեամբ, քունն գործողութիւններով բորբոք սրտով ու հաստով նետուեց վերակառուցման եւ հրապարակայնութեան համար պայքարի կրակային առաջին զմերը՝ իրեն ժողացած, անձն ու կեանքը ժողացած, ինչ-որ շարժում գլուխը կորցրած, շափեց աւելի գունդութեան պատրաստ, գունկը տալով... Ամէն գնով, ամէն ինչի գնով՝ վերակառուցում, հրապարակայնութիւն, գեներալապետ, ուրիշ էջ ու հնար չկայ... Ինչ արած, ուրիշ հնար չկայ՝ աշխարհի բնականօրէն բնօրէնքից եւ ժարակային քաղաքակրթութեան պարտադիր սխալները մենք ինչպէ՞ս եւս մեանք եւ ինչո՞ւ, եւս մեանք, չէ որ հոգի ունենք տալու, չէ որ ապագայ սերունդներին նորովի յետոյ կը ծանրանայ մեր բոլորին յիշատակին՝ կը նորովի մեր անունը: Առանց այն էլ մենք ուշացած ենք՝ ժամանակ, արիւն ու խիղճ կորցրածներ, ստի՛ն, կեղծիքի՛ն, դաւին սպասաւորութիւն արածներ, անփառունակին փառք տուածներ, խարուած-դադուածներ, սխալուածներ, խտրուածներ, շեղուածներ... Ստալինեան բռնակալութեան եւ շնացման տարիները կտարել ու կորստի են տուել մեր ժարկային, հասարակական, ազգային, ժողովրդական բարոյականութիւնը՝ մեր միւս ու ժարմերը ծածուել է, արիւնք քամուել, — յիշենք 37 թուականը, 49 թուականը, — մեր հոգին գահճորդ-ստալինիստի սապոյների տակ արոր-ու էլ, մեզից շատերի հոգուց հանուել են հազարամեակներով ժառանգուած խիղճն ու հասարակ, ժարկային ու ազգային արժանապատուութիւնը, սեփական տան, սեփական հոգուլի, մայր երկրի, մոր կաթի՝ մայրենի լեզուի հանդէպ ունեցած մեր սէր անմարելին... Ինչե՞ր են հանուել մեր հոգուց սապոյ-գաւոր Ստալինին բռնիքի դառած տարիներին եւ ինչե՞ր են փյուել մեր հոգու՞մ, երբ փյուել են կեկեղեցիներ, վանքեր, պատմական կոթողներ, եւ ինչե՞ր են այրուել մեր հոգու՞մ, երբ այրուել են գրքեր, ինչ լոյսեր են մուխուխու արել, բանաստեղծուել ու գնդակահարուել մեր հոգիներում, երբ բանաստեղծուել է Զորենցը, երբ գնդակահարուել են Բակուցն ու Թոթովենցը... Բանաստեղծութիւններով, գնդակահարութիւններով, կրակի այրումներով, փյու գուժ-քանդուածներով դատարկուած են եղել մեր հոգիները՝ մեր պապերի հոգիները, մեր հայրերի հոգիները, այն 37 թուականից մինչեւ 50ական թուականները: Հարցրէ՛ք ինչո՞վ են լցրել, չէ որ դատարկուածը հարկաւոր էր ինչ որ բանով լցնել, լցրել են բարոյականութեան քեփով եւ ոսկրային ալիւրով՝ ստալինական ստոյթներով եւ ստալինեան լոգունդներով: Յիշում եմ 49ի բռնկումն ժամանակ տարիքաւորները իրար ականջի փսփոցով ասում էին, թէ իր բանատարկուած շարժումներէ սնունդը ազացած ոսկոր է՝ ոսկրի ալիւրից թխած հաց են տալիս, ոսկրի ալիւրից եփած ապուր: Զգիտե՛մ եւ կարեւոր էլ չէ՛ այդպէ՛ս էր, թէ՛ այդպէս չէր, բայց հաստատ էր եւ զարհուրելին այդ էր՝ մեր հոգու՞ր սնունդը գլխաւորապէս համազգեկանաւոր ստալինիստի անկենդան, մեռած, ոսկոր կտրած սեռութիւնների, ստոյթների եւ լոգունդների թեփն ու ալիւրն էր, որոնցով դպրոցական եւ համալսարանական տարիներին մեր միամիտ ու ջանադիր ուսուցիչները եւ ոչ պակաս միամիտ ու ջանադիր գաստիսոսները լցնում էին մեր միտքն ու հոգին:

Ստալինեան բռնակալութեան տարիներին չեմ ստուժ, արտաքինից կարծես հուժանխտական ու բարի բռնեւեւան տարիներին մեր՝ գրողներու, բարոյա-ստեղծագործական գիճակն այդպիսին էր՝ լիարեքան, նոյնիսկ ոչ լիարեքան նշմարութիւն անկու համար գլուխը կարող է՝ տուրք տալիս: Ի հարկ է, փա՞ռք Աստուծոյ, հի՛մա արդէն գլուխը տուրք կարող է տալիս ոչ ուզակի իմաստով, ինչպէս բռնութեան 37երին եւ 49երին, այլ այնպիսի գիճակ-

ներքի էին հասցնում, որ գլուխը կորցնէիր: Ահա մեզ Պարոյր Անտի օրինակը, որի հանճարաչու նշ պոկիան՝ մեր հազարամիայ բանաստեղծութեան մէջ իր նմանը չունեցող նոր ու նորոգիչ գեղարուեստով, լնացման տարիներին յանուն ճշմարտութեան և արգարի, հասա պատերին էր դարկոււմ՝ կեղծիքի, խարկու թեան, ստի, ազգութեան, ու մայցման հասա պատերին: Իր բառերով ասած, Պարոյր Անտի այն մեծերից էր, որ ուշ-ուշ են գալիս, բայց նա, իբր որ, ծնուի էր ճիշտ ժամանակին և, իբր որ, ժամանակից առաջ էր անցել, զրա համար էլ չէին ներում նրան: Ես այս ամէնը ասում եմ շեշտով և ընդգրծումով, որովհետեւ գրողները՝ իսկապէս գրողները, իսկական գրողները պետք է ժամանակից առաջ անցնեն, պարտադիր է՝ առաջ անցնեն, ինչպէս որ արեց ինքը՝ «Ենդիգի լոյս, եզնցի ճշմարտութիւն, եզնցի արդարութիւն» աղապակող, աղարարող և առաքող բանաստեղծը: Թէ չէ ինչի՞ նման է, երբ գրողը ծայրէծայր էր ստեղծագործութիւնը կազմապարտ է իր ժամանակի բանաստեղծ և կեղծ կազմապարտներով, յարժարոււմ է իր ժամանակի կեղծիքի ու ստի իշխանութեանը, ինչպէս ասում են, աւելի նման ում է ժամանակին, քան իր շօրը, և աւելորդ ժամանակ ու տեղ է գրադիցնում մեր հողի որ կհանքում: Վերակառուցման և հրապարակայնութեան ժամանակի այս գիւրի ներքից նայէք և տեսէք՝ ինչքան շատ են ո՛չ միայն ժամանակից առաջ չանցած, այլև՝ սուսիներն և բունակայնութեան և բնական ևան լնացման տարիներ յոռի բարձրի տուրք տուած և մարմնաւոր կեանքով առօր-փառօր սպրած բանաստեղծները, արձակագիրները, գրաբնագատները, ժուռնալիստները... Նրանցից շատերը, իբր Հերթ շալով, հիմա մեքեները գցում են վերակառուցման և հրապարակայնութեան գանդերի պարտներին, շրթու նքներին ևն առում վերակառուցման և հրապարակայնութեան շեփորներն ու փոփոքր, վերակառուցման և հրապարակայնութեան թմբուկներ են գարկում՝ տեւել՝, տեւել՝, մենք այս նոր ժամանակի մուսիկներն ու առաջնորդներն ենք, մենք երգուհայ հակառակորդներն ենք անցեալ՝ բունակայնութեան և լնացման ժամանակի և երգու հայ նուիրեալը վերակառուցման և հրապարակայնութեան: Նրանք՝ այդպիսիները, ամբողջներն են մեծում, գրում են, գրում են, և ի՞նչ համարձակութեամբ են գրում, հետև ու մտ անցեալներում սխալներ գործողների՝ մուսուներ չերն անվախօրէն անիծում են, նրանց գերեզմանի հողից հանում և նորից գերեզման են գնում, մոտանալով (մեզ չեն կարող մոտացնել սույ), որ իր ժամանակին նրանց մասին պոնմ են գրել և ինչքան փառաբանական յագուածներ, զանց առնելով, որ այդ բունակալ և ճահիճ տարիներին իրենք՝ նորոգ վերակառուցում այդ գրողները, աւելի շատ Յման են եզել իրենց ժամանակին, քան իրենց հարազատ շօրը: Իմ կարծիքով, ժամանակի հետ միանգամից՝ մի օրում փոխուող (ևս կ'ստէի հողփոխուող) մարդիկ, առաւել ևս՝ եթէ նրանք գրող են, ո՛չ միայն ի գորտ չեն օգտակար լինել, այլև՝ ընդհակառակը, իրենց ցուցածով ակախութեամբ կարող են բարոյազրկել երևոյթը՝ վերակառուցման և հրապարակայնութեան սկզբու նքներն ու խորհուրդները օգտագործելով անձնական հարցեր լուծելու, անձնական հաշիւներ մաքրելու, նոր ժամանակի բարոյական սանդուղքներով վեր բարձարանայու և տեղ ունենայու համար:

Սոս միայն իմ տալ նուր չէ, շատերի տալ նուր է, որ հնչից նաև: 19րդ կու սկունքերանի ամբողջից: Ամէն մարդ, առաւել ևս՝ ամէն գրող, նախ, պետք է հատուցի և պատասխանատու լինի իր անցած կեանքի սխալների, կեղծ, սու ու անարդարացի քաղաքացիական պաշտօնների, անցեալում լոյս կեղծ, սու ու անարդարացի յագուածներ, գրքերի համար, ապա նոր ընկնել ընծայած կեղծ, սու ու անարդարացի յագուածներ, թմբուկ գարկի և յագուածներ, բանաստեղծութիւններ, վեպեր լոյս աշխարհ բերի՝ փան վերակառուցման և հրա-

պարակայնութեան: Ես գտնում եմ, որ ամէն մարդ, առաւել էս գրողը, եթէ նա ապրել, գործել ևս անցել է ստալինեան և լճացման տարիներէ տարու պաղերով, նախ, պէտք է հրապարակայնորէն իրեն քարոյշակամ ինքնաւարման ենթարկի, ապա նոր միայն վերակառուցման ու հրապարակայնութեան բարի ժամանակի անուկից խօսելու իրաւունքը վերապահ իրեն: Այս ասածս, որ շատերն են ասում ևս շատերի կարծիքն է՝ երևի վերակառուցման և հրապարակայնութեան ժամանակի քարոյշական կարեւոր պայմաններից մէկն է և պէտք է արժանի լինի մեծ ու շագրտութեան: Մեր հասարակական կեանքի վերակառուցման գործը համընդհանուրիս պայքարով ու ջանքով է գլուխ գալու, ճիշտ է, բայց այդ վե՛հ գործը ասով է զեւարձ՝ յենուած լինելով վե՛հ ու քարոյշակամ մարդկանց ուսերին, վե՛հութեան ու քարոյշականութեան ճանապարհով, վե՛հ ու քարոյշական սկզբունքներով, միջոցներով, մեթոտներով... Հասարակականորէն կարեւոր և յիրաւի պատճառն այս գործի մէջ շպէտք է լինեն սոցոսկոլոգներ, էրեսպոլիտներ, ցուցամոլներ և նմանօրինակ մակարոյծներ, որոնք, ինչպէս գիտնէք, սեկի նման անէ ու առկայացնել են յեղաբեկիչ ժամանակների յատկապէս աստիճաններու:

Իմ ժողովրդի արեւոր՝ այս աշխարհի հազարամեակները տեսած, այս աշխարհի հազարամեակներով անցած, ինչե՛ր է տեսել, ի՞նչ աշխահակործան ջրհեղեղներ և աշխարհափրկիչ ի՞նչ Նոյեան տապաններ: Ժամանակներ է տեսել՝ յաւ ու վատ ժամանակներ՝ ժամանակ գերութեան, ժամանակ սրի, ժամանակ արեան, ժամանակ մահուան... Դիմադրել է, դիմացել է, հասել է այսօրու այ օրու ան, որ մենք ու մեր սերունդներն ենք, որ հիմա ապրում ենք, կանք: Մենք ժողովրդի գոյութեան և գոյի այսօրու այ հերթական կամուրջն ենք, այս գիտակցութիւնն ու բնազդն ու նենալով՝ պիտի ապրենք ու գործենք, մեր վրայով է քայլ գցելով անցնելու յաւերժի ճամբորդ հայ ազգը, ուրեմն յիմենք անասան, աներեր ու հաստատուն կամուրջ՝ յաւերժութիւն քայլող ժողովրդի քայլի տակ: Մենք տեսել ենք շարի, ահի, մահի ժամանակներ: Մեռնելու էր՝ շենք մեռել, ստոյգ մահուան պայմանների մէջ ընկնելով՝ ստուգապէս ապրել ենք: Վատ ու չարի ժամանակներին դիմացել ենք՝ ապրել ենք, հիմա հասկնաւ վերակառուցման ու հրապարակայնութեան յաւ ու բարի ժամանակը՝ դիմամանք նախ յաւ ժամանակին՝ ապրենք: Ասում եմ՝ դիմանանք ևս ապրենք, որովհետեւ դժուար է նախ դիմանալ յաւ ու բարի ժամանակին, առաւել էս մեզ համար՝ հայերիս, որ քիչ ենք տեսել յաւ ու բարի ժամանակներ ևս սովոր չենք: Սովոր գառնանք ու դիմանանք: Իմ ժողովրդից հաստուտ է մարդկային խօսքին, որովհետեւ խօսքը բերանից է գուրս գայիս՝ մարդկային սուրբ բերանից: Այսպիսին է եղել նա է՛ն գլխից՝ աստիճան հաստացողներից մէկն է եղել Գրիգորիս բերանից գուրս եկած խօսքի, աստիճան հաստացողներից մէկն է եղել Լենինի բերանից գուրս եկած խօսքի... Եւ հիմա էլ վերակառուցման և հրապարակայնութեան խօսքի աստիճան հաստացողը եղաւ:

Այսպիսին ենք մենք եղել ու կանք («Փրակամ թերթ», 1988, թիւ 31):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԻ՝ ԽԱՆՈՒՒՔ

Ինչպէս յայտնի է՝ մարդ աշխարհ է գալիս ապրելու համար: Յետո՛ւ մե՛նք աշխարհ եկանք պայտարելու համար: Ստալինն ուզում էր ստեղծել հարուստ պետութիւն՝ աղքատ բնակիչներով (որքան աղքատ, այնքան... կախուածութիւնը շատ): Առցիւղի գմը դարձաւ «աղքատների քաղաքակութիւն»: Ստեղծուեց «աղքատների հաւասարութիւն»: Ով փորձում էր լաւ ապրել, համարում էր կուլակ եւ ճգնում բռնակցի (*կուլակի*) տակ: Լաւ ապրելը համարում էր վատ բան: Նոյնիսկ... հակախորհրդային (հակասովետական): Երբանիկ էր համարում նա, ով աղքատ էր: Ուստի՝ խորհրդային ժողովուրդն ամենաբարձրին էր աշխարհում: Ստեղծուեց աղքատ ու դաժան երկիր: Եթէ մէկը իր տանն ուներ բազմիք, քրպէս բուրձուայի ախարում էին:

Ստալինին պէտք էր դատապարտել, որ չըկրկնուէր: Ես կարծում եմ՝ Ստալինը ոչ մի սխալ չի ունեցել (սխալուել կարող է անմեղ մարդը): Նա համաշխարհային յանցագործ է, ի՞նչ սխալ: Ֆաշիստ չի լինել, այնքան կոմունիստ չի կոտորել, որքան... կոմունիստ Ստալինը: Ապշում են, թէ ինչո՞ւ էր չիթլերն ուզում կոտորել մեզ, չէ՞ որ Ստալինն արդէն կոտորում էր: Ամենահանճարեղ մարդն անգամ եթէ մի անմեղ մարդ է սպաննել, յանցագործ է, որում պէտք է դատել: Նա ոչ թէ մի անմեղ մարդ է սպաննել, այլ... եարիւր միլիոն: Ըստ որում՝ ամենալաւերին եւ նուիրեայներին: Նոյնիսկ իր զինակիցների կանանց ու ետրազատներին ախարեց (մի՞թէ զինակիցներից ոչ մէկը տղամարդ չգտնուեց՝ բռնելու նրա ձեռքը): Իսկ յետպատերազմեան տարիները: Հայրենադարձներին ախարե՞լը: Այդքան զոհերի չծնուած սերունդները: Սպաննուած հոգիները: Սպաննուած մշակո՞յթը: Միայն լարաբազը եւ Նախիչեւանը իրենց մօրից գօռով անխտուելը՝ արդէն պատմական ամեներեւի յանցամէք է: Իսկ ոմանք դեռ երկըրպագոււմ են գազանին: Որովհետեւ մէկն էր ստրուկի հոգի կայ:

Կանանց պէս ուժ ու բռնակցի են սիրում, խարուած են: Ստալինեան շրջանի անպատմելի դաժանութիւնից է գալիս այսօրուայ որոշ մարդկանց մէջ եղած դաժանութիւնը: Իսկ ինչու դաժան չլինել: Եկեղեցիները քանդեցին, վանքերն աւերեցին, Աստուածաշունչը վնասակար համարեցին, ժողովրդի բարեկամներին «ժողովրդի թշնամիներ» կոչեցին: Իրաւապահ մարմինները ջարդեցին ո՛չ միայն հոգիները, այլև՝ մարմինները, որ քրտնազոյց աղքատ դաժանութիւն: Գիտնականները պարզել են, որ բարձր մարդասպանները մանկութեան ժամանակ տանջել են կենդանիներին: Գթասրտութիւնը համարուել է բուլուրիւն: «Կոմունիստը պէտք է անխնայ լինի ժողովրդի թշնամիների հանդէպ», իսկ թշնամիները, պարզում է, ժողովրդի իսկական բարեկամներն են եղել...

Տարիներ շարունակ երեշտակների տեղ ենք դրել երէշներին: Կե՛նտրոնական մամուլում ճիշտ է գրում մի ընթերցող. «Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս պատահեց, որ Բերիան, Եժովը, Ռաշիտովը, Կուսնելը, Ալիևը դարձան երկրի ղեկավարներ, բարձրագույն սնդակներ, լե՛նինի շխմուհիներ, աշխատանքի երեսներ...»: Իսկապէս՝ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ պատահեց: Ետքային կամուրջներին ինչպէ՞ս հաւատանք գեղեցկար կոմունիստի արդարութեանը, եթէ վերջինս վաճառում է կուսակցական տոմսեր (և կուսակցութեան հանդէպ կը մնա՞յ սէր...):

Յեղափոխութիւնն սկսուում է այն ժամանակ, երբ իշխանութիւններին այլեւս չեն հաւատում (Հոսմը կործանուեց հասարակ կործանումից...): Մարդկանց խաբելուց...

Այնպիսի ժամանակներում ենք ապրում, որ ազնիւ մարդ տեսնելիս՝ չենք հաւատում (սո՞նց կարող է ազնիւ մարդ լինել եւ տեղում մնայ: Եթէ ինքը չվերցնի, վերեւերին ո՞նց պիտի կերցնի):

Եթէ արդարութիւնը չյաղթի, վերականոնուումը կը պարտուի... (*«Ողբեր», 1989*)

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱԱԿԵԱՆ



ԿԱՐԷՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Արձակագիր, ժառանգորդ, թարգմանիչ և հրատարակչի Կարեն Սիմոնյանը ծնած է 17 Մարտ 1936ին, Երևան: 1957ին կուսարտ է. Մարտի տնտեսան արհեստագիտության ինստիտուտի ժրճարագիտության ֆակուլտետ:

 Ի՞նչ իմաստ ունի առակը տպել...

ՔԱՐՏՈՒՂԱՐ.

Ինձ համար մի բան անյայտ է մնում,
 Թէ քաղաքացի Բրդուտ ապերը
 Որտե՞ղ է բնում.
 Եւ ո՞վ է, արդեօք,
 Տնային գրքում նրան գրանցել:
 Առակագիրը այդ հարցի կողքով
 Հապնեպ է անցել:

Առաջարկում եմ՝ արջին տուգանել
 Եւ իսկոյն եւեթ ֆաղափից հանել...

ԳԼԽ. ԽՄԲԱԳԻՐ.

Ճիշտ է՞ք անարկում...
 Սխալներ շատ կան տուեալ անարկում...
 Ինչո՞ւ, օրինակ,
 Արջին պատկերել փնթի, այսպէս,
 Նրանք այդպէս չեն Գուրով ֆեռու մօտ:
 Եթէ մի անգամ լինէ՞ք կրկէսում,
 Կը տեսնէ՞ք, որ ես շատ նիշտ եմ ասում...

ՁԱՅՆԵՐ.

Ինչո՞ւ համար է՞ք անակից կպել...
 — Պարզ է՞ չըտպել...

ԳԼԽ. ԽՄԲԱԳԻՐ.

Լաւ, նետենք կողով
 (Եւ ձեռագիրը նետում է հանգիստ):

Այո, բնթերցող,
 Մէկ-մէկ լինում է եւ այս տեսակ նիստ:

ԱՐՇԱԻԻՐ ԳԱՐԲՆԻ

Բ. ԵՂԻԱՅԵԱՆ

ԱՌԱԿ

ԱՌԱԿԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Ձ.- ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

Հայ մատենագրութեան մէջ եւս կանուխն տեղ զամ ու արածուած է առակագրութիւնը: Ոսկեղարուն արդէն, Հայերուն ծանօթ են Եղերոսի առակները: Է. դարուն, Հայեր թարգմանած են նաև Ողիմպիանոսի առակները, 25 հատ: Մեր Հնագոյն մատենագիրներուն իսկ — Ազաթանգեղոսի, Եղեիկ Կողբացիի եւ ուրիշներու — ծանօթ է «ֆիլիոլոգ» կոչուած գիրքը, որ կը խօսի կենդանիներու «բարոյքի», այսինքն՝ բարքի ու բնութեան մասին:

Թէև Միջին դարերուն, գրականութիւնը գլխաւորապէս կրօնական նկարագիր ունենալով, առակագրութիւնը ընդհանրապէս արհամարհուած է իբրև «սոսկալի» ու հասարակ — «դոկտրինայ»՝ ինչպէս զայն կը կոչէր Գրեգոր Մագիստրոս — սակայն ՓԱ. դարն սկսեալ՝ ժողովրդային հակացողութեամբ գրականութիւն ու երգ զարգանալով՝ նոր թափ կը ստանայ նաև առակագրութիւնը Հայոց մէջ:

Օրինակ, Ներսէս Ենորհալի, իր հոգևոր գմայիկի բանաստեղծութիւններէն զատ, և զամ է նաև նորամիտ առակագիր, որուն մասին կիրակոս Գանձակեցի կը վկայէ, թէ՛ «Արար առակս խորհրդաբար ի Գրոց, զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասացեմ ի գինարբուս եւ ի հարսանիս»:

Ուրեմն՝ Ենորհալիի ժամանակներուն, ՓԱ. դարուն, տակաւին կը վերադրին և զեր չին հեթանոսական ժամանակներէ և կամ առասպելներ ու Լըզեր, որոնց զէմ արդէն զանգատեր էր՝ Ենորհալիէն 7-8 դար առաջ՝ Փաւստոս Բիւզանդացի, Ներսէս Մեծ Պարթև, ի ժամանակներուն: Եւ ինչպէս Գ. դարուն, Ներսէս Մեծ քրիստոնէական դաստիարակութիւնը տարածեց, հակազգեղութեամբ հեթանոսական առասպելներու մնացուկներուն, նոյնպէս իր անուա-

նակիցը՝ Ներսէս Ենորճալին՝ հակազդելու համար տակաւին վերապրող Հե-
 թանոսական բարքերուն, կը յարինէ քրիստոնէական ըմբռնու մով առակներ ու
 երգեր: Իր նպատակն այլ, ուրեմն, դաստիարակչական է եւ ազնուացու ցիչ:
 Այսպէս, Ենորճալի անու նով մեզի հասած կան 120ի շափ «Առակի» վասն ու-
 ռախութեան մարդկանց» կոչուած կարճ ոտանաւորներ, որոնք, սակայն,
 պէտք էր կոչուէին հանելուկ կամ առած, ինչպէս մենք կ'ըմբռնենք այժմ այդ
 բառերը, քան «առակ» արգի իմաստով:

Անուանի առակագիր եղած է Մխիթար Գօշ (վախճանած 1213ին), որ
 իր նշանաւոր օրէնսդիտական մատենագրութենէն զատ, մշակած է նաեւ
 Փայլ եւ առակ, որոնցմէ կը յիշատակուին 190ի շափ: Յատկանշելի է, որ Մխի-
 Թար Գօշ չբժնեցանքով կը ներկայացնէ իր առակագրութիւնը, որ իր ժամանա-
 կի մարդոց համար անակ մը «չեղում» է ընդհանրացած կրօնագիտական
 դրսեկանութենէ: Առակներ պահու իր համարմակութիւնը արգարացնելու
 համար կը պատճառարանէ:

«Թէպէտ անըմբռն ասացեալիդ կարծի, ասկայն քանձրամտաց
 առանկ ախորժիլի երեւին, որոյ ազագաւ՝ սակաւ յօծարեցաք գրիչ»:

Կարճ առակներ են Մխիթար Գօշի տուածները, եւ յանախ հասարակ
 նիւթերէ քաղուած: Բայց ասորքինակ սովորութիւն մը ունի Գօշ. կ'ուզէ միշտ
 իր առակին բարոյական դասը ինք տալ իրը կցրակացութիւն: Մինչդեռ
 առակի մը բարոյական ուսուցումը — եթէ առակը ինք չու պատմուած է —
 արդէն իր մէջն է ծրարուած, եւ ուստի՝ երբեք պէտք չկայ զայն մեկնարանելու
 ցուցանէ առակն կամ «խրատ առակն» վերջարանով մը: Կը թուի, թէ Մխի-
 Թար Գօշ այդպէս իր ամէն մէկ առակին բարոյական դաս» կցելով, չափով մը
 գոհացում տալ ուզած է իր ժամանակի կրօնական մտայնութեան: Հետեւեալ
 մէկ—երկու Փայլները պաշտօնաբար մը կու տան Մխիթար Գօշի առակագրու-
 թեան մասին, աշխարհաբար վերածած եւ զեղշած «ցուցանէ առակն» բարո-
 յախօտական տողերը.

ԳԱՀԷՆ ԻՆՎԱՄ ԱՌԻԻՒՄ

Առիւմ մը, ոտքը կոտրած ըլլալով, պատկած տեղը կը տրտնջար բո-
 յոր կենդանիներուն, թէ դուք իմ եպատակներս էք, քանզի ես իշխանն եմ
 գազազաններու. ինչո՞ւ այժմ ինծի չէք ծառայեր ու բաժին չէք բերեր...

Ու կենդանիները ըսին.

— Քանզի քեզմէ որեւէ պաշտպանութիւն չգտանք մենք՝ ո՛չ արքին,
 ո՛չ գայիւն, ո՛չ ուրիշ գազանի դէմ: Եւ ո՛չ այլ դուն մեզի խնայեցիր երբեք...
 Այլ հիմա մեզի արժան է՝ Աստուծո՛յ բաժին ու պատարագ տալ, որ քեզի
 այսպիսի չարիք պատահել տուաւ ու մեզ ազատեց քու բարէդ...

ԱՅՈՒՅՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐՈՒ

Այծերը հաւաքուեցան ու թուրք գրեցին գայիներուն՝ սէր ու խաղա-
 դութիւն հաստատելու համար:

Ու գայիներ մեծ հրճուանքով պատասխանեցին այծերուն.

— Ձեր բարի սիրտին փափաք մեր հայրերու ժամանակէն արդէն
 ծանօթ է մեզի: Մենք եւս երբեք թշնամութիւն չենք ունեցած ձեզի դէմ:
 Բայց ձեռք եւ մեր միջեւ խաղաղութիւնը խանգարողները հովիւն ու շու-
 ան'րն են ձեր շուրջը...

Եւ այծերը, հաւատալով գայիներու երդումին, իրենցմէ մերժեցին
 հովիւին ու շուաներու պահպանութիւնը եւ ցրուեցան ելան լեռները,
 ...

Ու գայլերը, երբ վստահ եղան, թէ այծերը գուրկ էին հովիւի ու գամբռի պաշտպանութենէն, յարձակեցան ու փնռեկտեցին բոլորը:

Մի քիթաբ Գօշ իր առակաները դրած է իբրև ժիջոց ժողովուրդի կենցաղու վարքի բարեկարգ կրթութեան, ախորժելի ու զի բահահնայի խրատ եւ ուսուցում: Ու երբեմն այնքան աւելի կարեւորութիւն տուած է ան իր առակի շիմաստի ժեկեարանութեան, որ բուն առակէն աւելի երկար առողիւր կը գրուէ խրատական վերջամասը:

ԺԳ. դարու նշանաւոր առակագիրն է Վարդան Այգեկցի, կիլիկեան շրջանի Սեւ շիրան վանքէն: Ունի ծաւալ եւ տաակ խառն, բոլորն ալ սքամտութեամբ ու երգիծանքով լի, թէև հագիւ 35-40 հաս կը հալուր ին իր գրածնեբբը: Հեանհալը գրեթէ նոյնն է իրմէ քանի մը դար ետք եկած Լաֆոնթէնի առակին հետ:

ԱՂՈՒԷՄՆ ՈՒ ԿԱՔԱԻԸ

Ազուէնը կաճաւ մը բոնեց-առաւ իր բերանը, եւ կ'ուզէ ուտել: Բայց կաճաւը ըսաւ.

— Օրհնեա՛լ է Աստուած, որ զիս կը կանչէ իր արքայութեան, որպէսզի ազատուի՛մ այս չար աշխարհէն... Եւ ուտի՛ դո՛ւն եւս, ազուէ՛ս եղբայր, գոհացի՛ր Աստուծոյ ու յետո՛յ կեր զիս. զի մեծ է Բու վարձեղ, որ պատճառ կ'ըլլաս արքայութեան:

Եւ ազուէնը ծտտաւ ու երկիմք մայելով գոչեց.

— Գոհանամ Բեզմէ, Աստուած բարի, որ ինծի պատրաստեցիր սեզան իրախճանքի...

Բայց խօսած վայրկեանիմ՝ կաճաւը ազատեցաւ անոր բերէն ու թռաւ-փախաւ...

Եւ ազուէնը ինքզինք յանդիմանեց.

— Ո՛վ անմիտս եւ յիմարս, ինձ պարտ էր ճախ ուտել եւ ապա գոհանալ Աստուծովէ:

Կարդանք քանի մը առակներ եւս Այգեկցիէն:

ԱՅՄՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Այծ մը բարձր պատի մը վրայ կեցած՝ կը դիտէր աշխարհը: Ու գայլ մը եկաւ-կեցաւ մոյն պատին տակը: Եւ այծը գայլին մայելով ըսաւ.

— Ա՛հ, սիրտս կ'ուզէ, որ իջնեմ վար ու եզգիւրնեքովս փա՛րը պատանեմ սա գայլին...

Թայնծամ ըսաւ գայլը.

— Երանի՛ր էր աչեքուս, որ տեսնէի, թէ այծը վար գար եզգիւրնեքով իմ փոքս պատանելու...

ԷՂՆ ՈՒ ԹՈՌՆԻԿԸ

Էշին աւետիս տուին՝ թէ ցնծա՛ եւ ուրախ եղիր ու պարգեւնե՛քս պատրաստէ, որովհետեւ Բեզի թոռնիկ մը ծնաւ:

Եւ էշը ըսաւ՝ սկանչները թափափելով.

— Վա՛յ ինձ, բարեկամներ, եթէ հարիւր թոռ ալ ծնի, իմ կոնակէս բեր չի՞ թեքելուար...

ԲԱՄԲԱՍՈՂ ԱՐՁԱԸ

Առիւծը հիւսնեղացաւ: ու բոլոր կենդանիները եկան անոր տեսու-
քեան: Միայն ազուէնը ուշացաւ: Եւ արջը չարախօսեց ազուէնի մասին...:
Բայց ազուէնը դուռի մեզէն լսեց արջին բամբասանքը, եւ իսկոյն մերս
վազելով թաւայեցաւ առիւծի առջեւ, բարեւի կեցաւ:

Առիւծը գոչեց ազուէնին.

— Բարի ծամուն չեկար. գարշելի՛. բսէ՛ ինծի՛ ինչո՞ւ ուշացար:

Ազուէնը երդմեցաւ.

— Մի՛ գայրանար, բարի թագաւոր, գլխուս վրայ կ'երդնում, որ ին-
տոնոգնութեանդ համար շրջեցայ բծիշկէ բծիշկ, ու թէեւ մեծ չարչարանք
հաշեցի, բայց իմացայ դեղ-դարմանը:

Եւ առիւծը մեղմացաւ.

— Բարո՛վ եկար, իմաստուն ծառայ. եւ ի՞նչ է այդ դեղ-դարմանը
իմ բժշկութեան համար:

Եւ ազուէնը բտաւ՝ խէփու արջը գիտելով.

— Խիստ պիտանի գեղ է եւ դիւրին դարման: Բժշկապետները բսին,
թէ հարկ է ողջ-ողջ հանել արջին մորթը եւ տաք-տաք ձգել առիւծին վրայ.
Եւ այն տաք-թարմ մորթը իսկոյն կը հանէ ցաւը հիւանդէն...

Այն ստե՛ն, առիւծը հրամայեց, ու բռնեցին արջը, սկսան ողջ-ողջ
հանել մորթը, մինչ ան կ'ոտնար ու կ'աւաղէր, թէ՛

— Վա՛յ ինձ, որ բռնաւորի առջեւ բամբասանքի իմ բախտակիցս...

ԱՅՐԻ ԿԻՆ ՈՒ ՈՐԳԻ

Այրի կին մը ունէր որդեակ մը ու տասը այծ: Որդին ամէն օր այծերը
կը տանէր-կ'արածէր, ու մայրը ամէն օր այծերը կ'թելում՝ կաթին մէջ շե-
րեփ մը ջուր կը խառնէր:

Օր մը, որդին բտաւ մօրը.

— Մա՛յր, ինչո՞ւ կը գործես այդ մեղքը. ջուր կը խառնես կաթին:

Ու մայրը բտաւ.

— Որդի՛, մեր այծերուն տուած կաթը քիչ է. ջուր կը խառնեմ, որ-
պէսզի աւելիով ծախեմ ու ձմրան պաշար հաւաքեմ:

Ու պատահեցաւ, որ օր մը, երբ պատանին այծերը կ'արածէր, ամ-
պեր բարձրացան, անձրեւներ իջան. հեղեղ ելաւ ու քշեց-տարաւ բոլոր
այծերը:

Երբ որդին ձեռնունայն տուն գարձաւ, մայրը հարցուց.

— Որդի, ո՞ւր են այծերը:

Եւ որդին բտաւ.

— Մա՛յր իմ, այն շերեփ-շերեփ ջուրերը, որ կաթին կը խառնէիր՝
ժողովուրդեացան, հեղեղ դարձան ու մեր այծերը տարին գետը լեցուցին:

*Այգեկցին Հայկուկան առակագրութիւնը բարձրացուց գրական ար-
ւեստի՝ իր սեղծ ոճով ու նուրբ դարձուածքներով: Երբեմն «Ազուէն ազիբ»
այ կոչուած է Այգեկցի առակագիրը, ա՛յն իմաստով, որ անոր մէջ գլխաւ որ
գերակատարը ազուէնն է ընդհանրապէս:*

Է.— ՀԵՔԻԱԹԸ՝ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԻ

Արդի առակագրութեան մէջ, Ֆապլի ճիւղին վրայ աւելցած է հեքիաթը,

որուն ստեղծագործ աղբյուրը դարձեալ ժողովրդային բանահի սուրբինն է: Անցեալ մէկ դարու ընթացքին հայ գրականութիւնը լայնօրէն հարստացած է Հեքիաթագրութեամբ, որ, բանաստեղծութեան մակարդակի բարձրանալով՝ երբեմն վերածուած է պոեմայի ալ: Ուստի՝ Հեքիաթագրութիւնը պէտք է համարուի գրական ասանձին հիւղ:

Երբևէ դաստիարակչական միջոց՝ Հեքիաթը արդէն լայն տեղ գրաւած է հայ դպրոցական դասագիրքերու մէջ, ու միշտ կը հիւրընկալուի գրական հանդէսներու մէջ, ուստի եւ՝ հարկ է ուշադրութեամբ ժշակուի իրրեւ գրական սնունդ: Անցեալ սերունդի Հեքիաթահասար գրադէտները եզան Գարեգին Եպիսկոպոս: Սրու անձուական, Ղազարոս Աղայան, Աթարէկ Խնկոյեան, Յովհաննէս Թումանեան, Վրթանէս Փափաղեան, Թլկատիչի, Զարդարեան, Թաւահեան եւ ուրիշներ: Արդի սերունդի մէջ ալ, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ, կան ժողովրդային Հեքիաթները դիրք վերածող գրադէտներ, որոնք այդ Հեքիաթները վերամշակելով արուեստի ճաշակով ու բանաստեղծական ոճով՝ տուած կ'ըլլան ստեղծագործական աշխատանք:

Արդի հայ գրականութեան մէջ, ուրեմն, կարելի է ըսել, թէ առակագրութիւնը հետզհետէ չքելու վրայ է ստորին խաւի սետը՝ Փայլը, եւ բարձրանալու վրայ է գէպի Հեքիաթ եւ ժարգիային կեանքէ առնուած առակներ: Բոլոր այդ Հեքիաթներու եւ առակներու մէջ կը յայտնուի ժողովուրդի կեանքի փիլիսոփայութիւնը՝ աշխատանքի ու բարտի ու երջանկութեան եւ բնութեան մասին: Յիշենք, արինակ, Քաջ Նազարի Հեքիաթը, կամ «Երջանկութեան շապիկը», կամ «Քէլիք ընդ իմ քէլիք չի պակսիր» Հեքիաթը, «Քէօթողի զաղացպանը», «Ոսկու կարասը», «Անխիւք մարդը», «Զախորդ Փանոս», եւ այլն, եւ այլն:

Դարերով ժողովուրդի բերնին մէջ չըջան ըրած, միբան գիշերներու ցուրան ու երկարութիւնը տաքցուցած ու հանելի դարձուցած դրոյցներ են այդ առակ ու Հեքիաթները: Ու վերապրած հին սերունդի յիշողութիւնը անսպասու հանք մըն է՝ կործանած հայ դաստներու մէջ սերունդ սերունդ պատմուած այդ առակներու եւ Հեքիաթներու: Եթէ խումբ առ խումբ հասարակին անոնք, ինչպէս հասարուած են «Սասունցի Դաւիթ» գիցեցողնապատու մի գրուողները եւ հայ գեղջուկ երգի բեկորները, կրեային շատ զիրար կազմել «Հազարամէկ գիշերներ»ու շարքով իրարու ընդհուպուած պատմութեանքներու սայլիներ, հատորներ լեցնելով: Ու երբեմն ժարգիային ինչ խոր յուզումներ կ'արտացոլան այդ Հեքիաթներին: Օրինակ, Աթարէկ Խնկոյեանի «Փայտահատն ու մահը».

Մեր փայտահատը, անտառէն, կազկազայով, բոյլ ծուկներուն գօտ տալով, մէջքէն բեռը վար դրաւ, քարին մտտաւ սուգ քրաւ:

— Այս ի՞նչ կեանք է, ես տուն ունիմ՝ քուռ չունի, քանիք ունիմ այլիք չկայ: Ձիւնը ծածկեր է տնակս, փայտը մաշեր՝ կոնակս: Ես ծեր, կիւտ, տունով քաղցած, հա՛ մերկ հա՛ գորկ, տալիք ու տուրք ուսիս ճնշած: վայ-վա՛յ, վայ-վա՛յ, այս ի՞նչ ապրուստ, ո՞ւր ես սեւ մա՛ն...

Մէջ մ'այ ահա քաւուտէն մահը ցատկեց դէմը կանգնեցաւ, թէ՛ — Հա՛, ծերուկ, ի՞նչ կոյ, ի՞նչ կոյ...

Բայց ծերուկն է — Արե՛ւդ վկայ ոչինչ չկայ...

Ու լեզուի փրքած, կիկմալով, լեզուի խումբ, թէ՛ — Մէկը չկար, որ այս փայտը շալակս տար, ապրի՛ս, ի՛նչ շուտ հասար...

Բան չկարծես, սա փայտի խուրճը կոնակս տուր, դուն ետ դարձիր...

Ծարզ հասարուած են տասնեակներով հատորներ առակ ու Հեքիաթ, բայց առկա ինչպէս կան մեր ժողովուրդի յիշողութեան մէջ այսպիսի դրոյց-

ներ: Պետք է այդ բոլորը հասարակին, դաստարակին, հրատարակության: Անոնք նաև: Հետո մ'նիթ կը ներկայացնեն գայիք սերունդներու ժշակու մներուն, բանաստեղծութեան, պոեմայի եւ թատերգութեան համար:

Գծրախոտարար մեր ժողովուրդի մէջ տակաւին խուլ արհամարհանք մը կայ Հեքիաթի եւ ատակի կամ գրոյցի հանդէպ, իբրև թէ ատոնք քրարքր դասէ գրականութիւն չներկայացնէին եւ միայն «ժամանցը» արժէ ու նենային:

1957ին, Պէյրուսի մէջ հրատարակուեցաւ «Գիթիք առակաց» ախտոսով գրոյցներու հասարածոյ մը, Հեղինակը՝ Ամերիկայէն, Եղեմի Հովիտ՝ Տ. Կարպետ քհնյ. Գայֆայիան: Եւ այդ գիրքի յատաշարանին մէջ կը պատմուի, թէ ինչպէս արժանապատիւ Հեղինակը տարիներու համբերատար ջանքով հասարած էր Կեսարիոյ Հայ ժողովուրդին մէջ լրջամ գրոյցները եւ զանոնք հրատարակած «Հայկական գրոյցներ» ախտոսով գիրքի մը մէջ, 1944ին: Սակայն այդ գիրքը «արգելքի» տակ անուսած էր անգլոյն (Գայիֆորիոյ) Հայ համայնքի իշխանաւորներուն կողմէ, առարկելով, թէ անոնց մէջ «անպատշաճ» գրուածքներ կային, եւ ամբողջ ապեայ գիրքերը յանձնած էին խարոյկի...: Հեղինակը, սակայն, իր գործը քննութեան ենթարկած է Գերգ. Հոգեւոր Թորոնթոյի, որ այդ հասարածոյին մէջ ոչինչ գտած է «գայթակղեցուցիչ», բնդ-հակառակն, վկայագրած է, թէ՛ «Այս գիրքը ո՛չ թէ դատապարտուած քեան, այլ գնահատանքի արժանի է: Հայ ժողովուրդի անցեալէն եկող ամէն գրոյց ու եւրոպայի եւ ատակ պէտք է գրի առնուի»: Եւ Հեղինակը, առաջին տպագրութեան փճացումէն 13 տարիներ ետք, գիրքը վերստին հրատարակած է, այս անգամ նոր ախտոսով մը՝ «Գիթիք առակաց»: Ահա մէկ-երկու նմոյշ անկէ.

ԱՌԻԻԹՔ ԵՄՈՂՈՂ ԷՇԸ

Առիւծին մէկը կը հիւանդանայ ու ծառի մը շուֆին կ'ընկողմանայ անշարժ: Եւ անա շուրջը կը հաւաքուին իր երէկուան հլու-հպատակները. կը սկսին ծաղրել:

Արջը կու գայ առիւծի կողմէ կը մշտէ-կ'անցնի. առիւծը կը լռէ: Գայլը կու գայ վրայէն կը ցատկէ, առիւծը ասոր ալ կը լռէ: Ֆշշալով ոճ մը կու գայ առիւծի փորին վրայէն սողալով կը փաթթուի վիզին, եւ առիւծը ասոր ալ կը ներէ:

Կու գայ նախ խլիւլած էջ մը իր աննոսի գոննչովը եւ ամացի մը կու տայ խեղճ ու հիւանդ պառկած առիւծին: Բայց այս մէկին չի կրնար դիմանալ առիւծ իշխանը. ու կը գոռայ.

— Լաւ էր ինձ մեռնիլ, քան էջի մը ամացին ստանալ...

Եւ իր ուժերը կը հաւաքէ, կը ցատկի, քաթին մէկ հարուածովը կը ճեղքէ ամանակին փոքր:

ՎԱՅՐԵՐԱՆ ԸՏՊԻՏԸ

Իշխան մը ունէր հոսպիտ մը, որ «վայքերան» կը կոչուէր, որովհետեւ բերանէն որեւէ բարի խօսք կամ լուր չէր լսուէր:

Օր մը, իշխանը կ'ուզէ իր այս չարախօսիկ հոսպիտին բերանէն անպայման բարի խօսք մը խլել, մեծ խոստում մը բնելով, թէ՛

— Իսկի՛շ, գաւալս, անա ես ճամբայ կ'ելլեմ Մէքէէ, ու խօսի, կը խոստանամ ճեղքի պատուական ապառօշ մը բերել Սուրբ Քաղաքէն, եթէ միայն բարի ճանապարհի խօսք մը լսեմ ճեղքէ:

— Պէ՛ Քաղաւս.— կը պատասխանէ հոսպիտը.— դու ն' այդ խոստումը կ'ընես ինձի, բայց եթէ դու ն' Մէքէէ երթաս ու հոն մեռնիս, ո՞վ պիտի բերէ ինձի այդ ապառօշը...

Վերոյիշեալ «Գիրք բառակացոյ յառաջարանին մէջ, բազմապատակ կրթական մշակ Միւրան Սէֆէրեան կ'ըսէ.

«Արժ. տէր հօր նախաձեռնութիւնը եղած է՝ անցեալի մոխիրներու տակէն, մեր ժողովրդական բառապատկերներէն, ասացածներէն քաղելու գիրք յամօճել միւրքեր, որպէսզի կորուստէն խոշոր փշուր մը եւս փրկուի ու նոխանայ հայ մատենագրութիւնը, թաղելով զանոնք իր անձնական յիշողութենէն կամ ծերունիներու բերանէն: Անոնք կը բովանդակեն բազմապիսի դասեր ու սրամտութիւններ:

«Ժողովուրդի կրթութեան եւ դաստիարակութեան մէջ՝ ամէնէն դիրքահասկնալիս առակներու լեզուն է: Առակներով ու գուարբարոհութեամբ ժողովուրդներու դաստիարակութեան սատարեցին մեծ իմաստուններ, որոնց գործերը աւելի ժողովրդականացան, քան շատ մը գիտական ու գրական գործերը: Առակը ո՛չ միայն հանելի է, այլեւ անկէ դասեր վերցնելը աւելի դիւրին է, եւ հետաւաքար՝ աւելի օգտակար»:

Շատ հետաքրքրական պիտի ըլլար ընդլայնել մեր ուսումնասիրութիւնը, իրրեւ լրացուցիչ աշխատանք, նաեւ հետեւեալ ուղղութիւններով.

— Բազդատութեան հայ եւ այլ ժողովուրդներու առակներուն.

— Բնորոշում հայկական առակներուն իրրեւ արտայայտութիւն ժողովրդային մտայնութեան.*

— Դասաւորում հայ առակներու՝ ըստ բովանդակութեան ու նկարագրի.

— Լծան բիրիտկրաֆի հայ առակագիրներու.

— Զանազան դասառներէ հաւաքուած «չրջուն առակներու» մէջ տեղական նկարագրի ու ոճի արտայայտութիւնը երեւան բերել:

Բայց այսպիսի եւ այլ նիւթերով ընդլայնում մը մեր ներկայ նշմարը պիտի վերածէ մեծագրական ուսումնասիրութեան մը, որ մեր նպատակը չէ: Կը բաւականանանք միայն բակով, որ եթէ ուզէինք բազդատութեան գնել հայկական առակները ուրիշ ժողովուրդներու առակներուն հետ, տարբերութիւնը պիտի գտնէինք ո՛չ այնքան տեսակի միջեւ, որքան մոթիֆներու ընտրութեան ու մշակումի ու, մասնաւորապէս՝ խորքին հանդէպ նկարագրին միջեւ: Ընդհանրապէս հայ առակները եւս կը տարածուին թէ՛ Ֆապայիսի առասպելական եւ թէ՛ մարդկային տեսակներու վրայ, բայց անոնց մոթիֆները աւելի գրական հարցեր են, մարդու կենցաղու վարքին, արդարութեան, խաղաղութեան, շինարարութեան, քաջութեան մոթիֆներ, որոնք կը յատկանշեն առասպելապէս հայ ժողովուրդի ցեղային նկարագիրը, մշակումն ու ոճը եւս պարզ ժողովրդական բանասէս ու մով, ջերմ ու անմիջականութեամբ իրական:

Ը.— ԱՒԵՏԱՐԱՆԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Նկատեցինք, որ առակի գլխաւ որ յատկանիւր այն է, որ անիկա տունը՝ ւած պիտի ըլլայ ո՛չ թէ գիցարանական մթնոլորտէն, ինչպէս առասպելավէպը, ոչ այլ կենդանիներու կամ բոյսերու կեզծ բեմագրութեան մը, ինչպէս Փապլը, այլ պիտի գայ ու զգակի մարդկային կեանքէ եւ աշխարհի իրականութենէն: Ամէն մէկ նշմարիտ առակ կու գայ մարդու բնութենէն եւ ընկերային յարաբերութիւններէն, եւ իր ներկայացուցած փոքրիկ գէպտէն աւելի վեր բարոյական ու հոգեկան իմաստի մը կ'առաջնորդէ, կու տայ կեանքի մեկնարանութիւն մը:

* Այս կարգէն, տեսնել մեր «Ժողովրդային հօդերանութիւնը «Բայ նազար» հեթաթիւ մէջ, «Բագին», 1974, Ապրիլ-Մայիս-Յունիս քիւիեր:

Եւ ժարդկային կեանքէ զայն այդ տեսակէտով է, որ տիեզերականօրէն զաստիարակիչ ու գերազանց արժէք ունին Յիսուսի խօսած առակները: Աւետարաններու մէջ արձանագրուած բոլոր Տիրուանց առակներն այժմարդն՝ կեանքէն առնուած եւ ուղղակի ժարդու խօսող առակներ են: Յիւնը Քթիմոսըին առակը, Սերմնացանին առակը, Անտակ որդիին առակը, Բարի Մաժարացիին առակը, Հովիւի եւ իր կորսուած ոչխարին առակը, Մեծատունի եւ Ղազարոսի առակը, Տագանդներու առակը եւ միւսներն ու միւսները, քառասունակ մը: Բոլորն այժման գարեթի թ վեր ապրած են ժարդու սերունդներու յիշողութեան մէջ ու թափանցած ժողովուրդներու սիրտին, ու ժարդու ճշմարիտ Հոգին պարզած ժարդու ն: Բոլորն այժմարայկա ժարդկային ամէնօրեայ կեանքի փոթորիկներէն բարձրացող եւ յաւիանական ճշմարտութեան մեկնութիւն ցոյցանող պատկերներ են՝ լուսաւորելու համար ժարդու կեանքի նամբան:

Աշխարհի բոլոր առակախօսներէն ան՝վ կը տարբերի Յիսուս, որ իր ոչ մէկ առակին նիւթը բրած է բուսական կամ կենդանի աշխարհը, այլ միայն ժարդու՝ աշխարհէն առած է զանոնք: Նոյնիսկ այդպէս անպատու թղկներէն առակին կամ նմաններուն մէջ, հիմնականը ժարդկային տարրն է գարձնալ:

Աւետարանի բոլոր առակներուն գերակատարը մարդն է:

Յիսուս իր առակները ժարդու կեանքէն առած ու ժարդուն ուղղած է՝ ժարդ արարածը ազատագրելու: Համար իր Հոգին կաշկանդող աշխարհային կապանքներէ, սովորութիւններէ, ժարդուն յայտնաբերելու: Համար իր Հոգեգէն էութիւնը, ինչպէս մոլորած Անտակին յանկարծ գի՛տը բնել կու տայ իր իշխանական ծագումին եւ գայն կը վերադարձնէ իր բնիկ ազնուական կեանքին: Յիսուսի առակները ժարդուն կը յայտնեն ժարդուն մէջ հարազատար — աստուածայինը ժարդուն մէջ: Անոնք ժարդը զաստիարակելու եւ իջի՛ գայն կը փրկեն մոլորութիւններէ ու կը պայծառացնեն կեանքի խորհուրդը, ժարդը կը բարձրացնեն կեանքի նոր մէկ իմացումին:

Յիսուսի առակները իրենց լեզուովն իսկ կը զատորոշուին ժարդկային ուրիշ առակներէ: Անոնք «չորինուած» պատմութիւններ չեն, կամ այլաբանական բեմագրութիւններ, այլ իրական արարքներ են կեանքէ, վերացականութիւնէ ազատուած, կեանքով եւ անմիջականութեամբ ժարդուն տրուած: Բառակերտու մի պայծառացողն մեռով տրուած, խօսուած լեզու ըլլալէ աւելի՛ կեանքի քատերականացումներ են անոնք: Այս պատճառով այժմ գերազանց ստեղծագործութիւններ են, արուեստի աստուածայայտ տուչութիւններ, կեանքի զհղեցկութեամբն ու խորհուրդովը կատարելագործուած:

Այս է պատճառը, թէ ինչու Յիսուս իր առաքելութեան ամբողջ տեսողութեան՝ իր երկնայայտ սուրբ մեծերը ժարդոց սորվեցուց առակներով, ըստ Աւետարաններու վկայութեան:—

«Եւ ուսուցանէր նոցա առակօք բազում ինչ «...» Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն, եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ մասսա: (Մատթ. ԺԳ. 3,34, Մրկ. Գ. 23, ԳԶ. Ղուկ. Զ.38, եւ այլն):

Թէ ինչու Յիսուս առակով կ'ուսուցանէր՝ բացարտութիւնը ինք ինք իսկ կու տայ, երբ աշակերտներ իրեն կ'ուղղեն այդ հարցու մը.

«Եւ աշակերտները մօտեմալով ըսին անոր. ինչո՞ւ առակներով կը խօսես անոնց:

«Եւ Յիսուս պատասխանեց. Ես առակներով կը խօսիմ անոնց՝ այն պատճառով, որ տեսնելով հանդերձ՝ չեն տեսներ. ու լսելով հանդերձ՝ չեն լսեր, եւ իրենց սիրտին մէջ չեն ընդունիր ճշմարտութիւնը, որովհետեւ բամբար են միտքով: (Մատթ. ԺԳ. 16-16):

Երբեմն աշակերտներն իսկ թանձրամիտ կը մտային, չէին հասկնար
ատակին իմաստը, և՛ Յիսուս մեկուսի կը մեկնարանէր անոնց:

Ամբողջ Նոր Կտակարանի գրուածքներուն մէջ՝ եզակիան էրեւոյթ է Յիսուսի
ատակախօսութիւնը: Այ՛ մէկ ատաքեայ իր թուղթերուն մէջ փորձեց ընդ
օրինակել կամ շարունակել Յիսուսի ուսուցման այս ատակախօսական մեթոտը:
Այ՛ ալ յաջորդ ատաքեայական գործերուն, եկեղեցական հայրեր հետեւեցան
նոյն մեթոտին: Բացարձակութիւն մըն է Յիսուս՝ ուսուցողական իր այս
չբաշխի պայծառաստեանութեան մէջ, իր այս ինքնաստատութեան կատարելու-
թեան մէջ:

Արդ, հարկ է պատասխան փնտռել հարցումին, թէ ինչո՞ւ Յիսուս, իր
ատաքելութեան բացումին, լեւրան քարոզչի հրապարակային ուսուցման
մեթոտի փորձէն գրեթէ անմիջապէս ետք, փոխեց իր ուսուցման մեթոտը և
սկսաւ ատակներով խօսիլ:

Կարելի է ատաքեայի բացատրութիւն մը, թէ կըր Յիսուս նկատեց, որ
իր անձին ու ատաքելութեան դէմ կ'անի Փարիսեաց ու Դպրաց ընդդէմու-
թիւնը, անմիջապէս փոխեց լեւրան քարոզչի ոճով իր հրահանգային ու-
սուցման կերպը և՛ սկսաւ խօսիլ ատակներու զօրեղանքով ոճով: Բայց այս
բացատրութիւնը ճիշդ չէ: Որովհետեւ, առաջը ո՛չ թէ ճշմարտութիւնը ծածկե-
լու համար կը խօսուի, այլ զայն պայծառ ու պարզ լոյսի բերելու համար, ինչ-
պէս և՛ մանաւանդ Յիսուսի ատակները: Ինքն իսկ կ'ըսէ, թէ լոյսը տրուած է՝
ո՛չ որպէսզի գրուանի տակ պահուի, այլ որպէսզի աշտանակի մը վրայ գրուի,
մէջտեղը: Մասնաւանդ՝ որ Յիսուս Փարիսեցիներու և Դպրերներու ընդդէմու-
թեանն ո՛չ թէ խուսափեցաւ, այլ ինքն իսկ ընդատառեց անոնց, շարունակ չբա-
պարակաւ ընկալատելով զանոնք, մինչև որ անոնք ամբաստանութեան ու
քաղաքական մասնութեան դիմեցին:

Պարզ իրողութիւնը այս է, որ Յիսուսի ատակախօսութիւնը ուսուցման
իր ընդհանուր մեթոտն է: Մածկուած ու վերացական ճշմարտութիւնները և՛
հոգեկան կեանքի երանութիւնը մարդոց ըմբռնելի ներկայացնելու համար է:
Եւ նոյնիսկ իր լեւրան քարոզչին մէջ ներկայ է այդ ատակախօսութիւնը: Երբ,
օրինակ, կը խօսի Վերկինի արքայութեան մասին, զայն ըմբռնելի բնկու հա-
մար կը գործածէ ատակներու շարք մը: Արքայութիւնը կը նմանցնէ ճիւղիմու-
րին, որ կ'անի իր ներքին տարածական ուժովը: Կը նմանցնէ ճամանակի
սերմանահատիկին, որ անկող հոգայ ծառ կ'ըլլայ: Վարդարիտին, որուն
զիւտը բնոյք կ'ներթայ իր ամբողջ ստացուածքը կը ծախէ՝ վերագտնաւորով այդ
մարդարիտը գնելու համար:

Այսպէս, Յիսուսի ատակները ճշմարտութիւնը պայծառացնելու հա-
մար են, ո՛չ թէ ծածկելու: Ատեկա ի՞ր այլ բացատրութիւնն է, թէ ինք ատակով
կը խօսի, որպէսզի ճշմարտութիւնը թափանցէ մարդոց սիրտերուն: Իր ամբողջ
նպատակն է տիեզերական խորունկ ու մեծ ճշմարտութիւնները մարդու հո-
գիին բնոյութեան գաղտնի:

Մէկ ասարեարակիչ յատկանիշ և՛ ու նին Յիսուսի ատակները: Բողոքովին
դրական նկարագիրներ կը ներկայացնեն: Մենք նկատեցինք վերեւ, որ թէ՛
Փապղները և՛ թէ՛ միջնադարեան ատակները՝ ընդհանրապէս անիրաւուած
գասակարգի մտայնութեանն և կամ ըլլալով՝ քննադատիչ ու ժխտական նկա-
րագիր կը ներկայացնեն: Միշտ գատապարտութիւն մը կը բերեն: Միեւնոյն
Յիսուսի բոլոր ատակներն ալ հիմնապէս շինելու ու գրական նկարագիրներ կը
յայտնեն: Նոյնիսկ այն ատակները, որոնք ատաղին արարով կը յայտնեն եր-
բեմն ժխտական նկարագրի տիպարներ՝ իրենց վերջաւորութեան կը յանդի-
նապիլու նկարագրի, կը պանծացնեն մարդու մէջ բարին:

Եւ այդ եզակիանութեամբ ալ՝ Յիսուսի ատակները տիեզերական լոյս
են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Առակը, ուրեմն, խօսուած թէ գրաւոր ձեւի մէջ, գաստիարակչական ու բարոյացուցիչ սքանչելի մեթոտ մըն է, որ կրնայ եղանակաւ որեւէ մարդու աւորեայ կենցաղու վարքի սկզբու նքնները, միաժամանակ ներդաշնակել ընկերային յարաբերութեանց շափանիչները եւ մեկնարանել կեանքի եւ աշխարհքի մասին տիեզերական ճշմարտութեանց խորհուրդը: Ու ստի՛ առակը հարկ է ժողովուրդին բնծայուի գեղարուեստական մշակու մով ու գրաւիչ ոճով:

Եւ արդարեւ, լեզուական կառուցումի եւ դրական ոճի այս տեսակէտով՝ առակը կը յատկանշուի գործածուած բառերու սակաւութիւնով, գործողութեանց թատերականութեամբ ու բովանդակած դասի պայծառութեամբ: Առակի մէջ զեղչուած է զգայնական տարրը, նկարագրութիւնն ու զարգ կը անականային զուհաւորում: Առակը ամբողջ գործողութիւն է, քան կայուն մասնողութիւն: Առակի մը նախադասութեանց մէջ, ինչպէս հեքիաթի, աւելի շատ բայ կը գործածուի, քան անական եւ այլ զարդարանք: Եւ այնքան բիրտ է անոր լեզուն, որ պէտք չունի մեկնարանութեան:

Եւ գրական ոճի այս սեղմ տարագր եւ յատկութիւնը արեւելեան նկարագիր է: Մահաւանդ անոր ոճն ալ պարզ է, ժողովրդային: Ժողովուրդը բնականաբար սակաւախօս է, չի սիրեր զարդարուն նախադասութիւններով արտայայտել իր մասնումները եւ զգացումները, կ'արտայայտէ գործածելով միայն անհրաժեշտ բառեր, ու կը խօսի աւելի շատ բայերով, քան անականներով:

Արգ, կենսունակ թատերականութիւն, բնական գոյներով հարազատ պատկերացում, պայծառութիւն, արագութիւն եւ ուժգնութիւն, եւ ընտանի տեղական միջավայրի մը խորքին բեմադրուած հասարակական նկարագիրներու կամ արիւթարներու ներկայացում: անա՛ ոճը առակախօսութեան, որ միաժամանակ ոճն է ժողովուրդին գործածած լեզուին:

Եւ այս յատկանիչներով՝ առակը սքանչելի կերպով ժողովրդային գրականութիւն է: Եւ որովհետեւ բոլոր ժողովուրդներն ալ նոյն են կեանքի խորքով ու բնոյթով, առակը իբրեւ ժողովրդային սանդղազործութիւն միջազգային հիմերու վրայ կանդնած յաւաքոյն գրականութիւն է: Եւ այս հանդամանքին մէջ է բացատրութիւնը, թէ ինչու առակը չչրջուն գրականութիւնն կրնայ կոչուիլ, այսինքն՝ նոյն եւ նման առակներ կը խօսուին, կը տարածուին բոլոր ժողովուրդներու մէջ:

Դիցարանութիւն, առասպելավէպ, գիւցազներգութիւն, պատմազրուութիւն բնզաներապէս ազգային եւ աշխարհագրական տուեայ որոշ սահմանի մը մէջ կառուցուած կը ներկայանան: Առակը, սակայն, անկախ է ամէն ազգային եւ աշխարհագրական սահմանափակումէ եւ պայծառաւ որումէ: Թէեւ անիկա կ'օգտագործէ աշխարհագրական սահման եւ ազգային տարագ, բայց առակը վեր է ազգի մը երկրամասէն, եւ անկախ նոյնիսկ ժամանակներէ: Առակը ունի էսպէս մարդկային նկարագիր, խոր, քան ազգայինը եւ աշխարհագրականը, եւ այդ է պատճառը, թէ ինչու համալուարդկային արժէք է:

Առակը, ուրեմն, առաջնակարգ միջազգային գրականութիւն է: Անիկա կը պատկանի բոլոր ժամանակներուն եւ կը խօսի բոլոր ժողովուրդներուն՝ նոյն լեզուով:

Արդի գրագէտը պէտք է սիրէ առակով խօսիլ, որովհետեւ նախ՝ դարեւրու իմաստունները խօսած են առակով: Բայց մենք պէտք է սիրենք առակով խօսիլ ու գրել նաեւ այս պատճառով, որ պիտի ուզէինք հոգեկան ճշմարտութիւն:

թիւները եւ բարոյական արժէքները թանձրացնելու կեանքի խորհուրդները ժողովրդականցնել: Իմաստասիրութիւն, հոգեբանութիւն, աստուածաբանութիւն, բարոյագիտութիւն եւ ընկերաբանութիւն — ասոնք անըմբռնելի վերացականութիւններ պիտի մնային ժողովուրդին համար, որոնք սակայն պէտք է վերածուին կեանքով թափարկանացած ու բնական զոյներով պայծառացած պատկերներու: Եւ այս վերծանումը կը կատարէ առակագրութիւնը:

Առակը ճշմարտութիւնը ճանչցնելու ամենէն արագ եւ ուժգին կերպն է:

Առակը գրականութեան Մեթուսաղան է, գրականութեան Նեղոսն է, փիւնիկն է, մշտադալար մայրիկն է, այն գրեւածեւը, որ միշտ կենդանի է եւ իրմէ կենսունակութիւն կը բաշխէ:

ԲԻԻԶԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ

(Շար. 3 եւ վերջ)

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

«ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ»

(ՀԵՂԻՆԱԿ՝ ԵՐՈՒԱՆԴԻ ՖՐԱՆԳԵԱՆ)



ԵՐՈՒԱՆԴԻ ՖՐԱՆԳԵԱՆ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1990ի Հոկտեմբերին, «Համազգային»ի «Վահե Ալեքան» տպարանին լոյս տեսաւ Լ.Ֆ.Դ. երիտասարդական միութեանց «Կայծեր» պարբերաթերթի մատենաշարին առաջին հատորը՝ դաշնակցական մտաւորական եւ տեսաբան Երուանդ Ֆրանգեանի «Քրիստափոր» թիւերը:

Միջին ծառայի 111 էջեր հաշուող այս հատորը կը բաղկանայ երեք բաժիններէ: Ամփոփ գիծերով, առաջին բաժինով նախ կը ներկայացուին այս մատենաշարին հետապնդած

նպատակները, ապա՝ Երուանդ Ֆրանգեան մտաւորականն ու տեսաբանը, որուն յատկացուած էջերուն կը յաջորդէ «Մանօթագրութիւն» խորագրեալ կարճ գրութիւնը, որ ընթերցողին կը ներկայացնէ այս հատորին էջերը գրած Ե. Ֆրանգեանի «Քրիստափոր Միքայէլեան. նրա կեանքը եւ աշխարհահայեցողութիւնը» ուսումնասիրութեան ծննդոցին հետ կապ ունեցող մանրամասնութիւններ:

Հայ Ազատագրական Շարժումի հին թէ՛ նոր փուլերուն նուիրուած գործերը Հայ երիտասարդութեան տրամադրութեան տակ դնելու, Լ.Ֆ.Դ.դաշնակցութեան Մրազերն ու հուսիւնը, անոր գաղափարական աշխարհահայեցողքը, ազգային, քաղաքական եւ ընկերային առաջադրանքներն ու պահանջները, պարզ խոսքով՝ Հայ Դատի եւ Դաշնակցութեան ռազմավարութիւնն ու գործելակերպը սփրոքահայ երիտասարդութեան ներկայացնելու եւ անոր քաղաքական մտածողութեան բիւրեղացման հովւոյթը ճիշդ հունին մէջ պահելու առաջադրանքով նախաձեռնուած այս մատենաշարին նպատակները կէտ առ կէտ նշելէ հաջ, «Երուանդ Ֆրանգեան (1878-1928)» խորագրեալ կենսագրականով՝ խմբագրութիւնը ամբողջական գիծերով կը ներկայացնէ դաշնակցական Ֆրանգեան մտաւորականն ու տեսաբանը: Մանօթագրութեան մը կ'իմանանք, որ այս կենսագրութիւնը համալրումն է երկու գրութիւններու, առաջինը՝ տպուած «Դրոշակ»ի մէջ (28րդ տարի, թիւ 5, Մայիս 1928), իսկ երկրորդը՝ Ս. Վրացեանի ստորագրութեամբ եւ իրրեւ յառաջարան տպուած 1929ին, Փարիզի մէջ լոյս տեսած Ե. Ֆրանգեանի «Մեր փիլիսոփայութեան աշխարհահայեցողք» իրապաշտ փիլիսոփայութիւնը հատորի առաջին էջերուն:

Կը յաջորդէ Ե. Ֆրանգեանի ուսումնասիրութեան վրայ լոյս սփռող «Մանօթագրու-

քիւնքը, որ իբրև գասախօսութիւն պատ-
րաստուած ուսումնասիրութեան վրայ պար-
զարանող լոյսեր սփռելէ ետք, կը նշէ խմբա-
զրուութեան կողմէ կատարուած փոփոխու-
թիւններն ու այլ մանրամասնութիւններ:

Հատորին առաջին 21 էջերը գրուած այս
բաժինէն ետք, կը սկսի Յ. Փրանգեանի ու-
սումնասիրութիւնը: Առաջին մասով՝ «Ք.
Միֆայլիխանի կեանքը եւ գործունեու-
թիւնը» (էջ 22-61), հանգրուան առ հանգրու-
ան կը ներկայացուի մեծ յեղափոխականին
կենսագրափէլը, մանկութենէն մինչեւ երի-
տասարդութիւն եւ յեղափոխական-բաղա-
ջական գործունեութիւն:

40 էջեր գրուած այս բաժինին կը յաջորդէ
երկրորդ մասը ուսումնասիրութեան՝ «Ք.

Միֆայլիխանի աշխարհայեցողութիւնը»
(էջ 62-107), որ յասակ կը գարձնէ անզուգա-
կան յեղափոխականին ու գործիչին բարոյա-
կան եւ զազափարական գիժազիժը՝ իբրև
կենդանի գործի մեծ ախոյեան, Արևմտա-
Հայաստանի գառի անխոնջ պաշտպան, յեղա-
փոխութեան բարոյական արժէքներու եւ յա-
րատեւ կռիւի ուսուցիչ, հնարաւոր ամէն մի-
ջոյճ օգտուելու պատրաստ եւ ջիւրտ ժողո-
ւորդի հոգեբանութիւնը նպաստ ուսումնա-
սիրած խորաթափանց միտք:

Ք. Միքայէլիանի նուիրուած հարուստ ազ-
րիւրներ օգտագործած այս պարզ, բայց խոր
ուսումնասիրութիւնը կը փակուի խմբա-
զրուութեան կողմէ պատրաստուած անձնա-
նուններու եւ տեղանուններու ցանկով:

«ԳԱՌՁՈՒ»

« Իր ժամանակի վկան եւ ապագայի դեսպանը »

(ՀԵՂԻՆԱԿ՝ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ)



1990ին, Հաշէպի մէջ լոյս տեսաւ Ֆրանսա-
Հայ համրուաւոր գեղանկարիչ Գառգուի
(Գառնիկ Զուլումեան) կեանքին ու արուես-
տին նուիրուած Թորոս Թորանեանի «Գառ-
գու» ծաւալուն հատորը՝ «Իր ժամանակի
վկան եւ ապագայի դեսպանը» ենթախորա-
զիրով:

Գուհաւոր եւ սեւ ու ներմակ բազմատասն-
եակ պատաստներու եւ վաւերագրական լու-
սանկարներու պատճէններ օգտագործած այս
հատորը կը բաղկանայ 24 բաժիններէ, որոնք
կ'երկարին մեծածաւալ 184 էջերու վրայ:

Հատորի առաջին էջերուն, Գառգուր եւ իր
ծնողքին հետ կապ ունեցող քանի մը փաստա-
թուղթերու պատճէնները հրատարակելէ ետք,
Թորոս Թորանեանի այս մենագրութիւնը կը
բացուի «Մալտէ» խորագրեալ մէկ էջնոց խիտ
նկարածակամով, որուն կը յաջորդէ «Էայլու
կենսագրութիւն» խորագրեալ գրութիւնը, որ
ամփոփ գիծերով կը ներկայացնէ Գառգուի եւ
իր լուսանկարիչ հօր կեանքի ժապաւէնը:
Ապա, հատորին յաջորդ 19 էջերը կը զբաւեն

եմ Գառզումն անուն գրութիւնը, որ կը սկսի մեծանուն արուեստադէտին հետ նրեւանի մէջ, 1966ին Թորոս Թորանեանի ունեցած առաջին հանդիպումին՝ Գառզուի Հասարակական մէջ տուած անդրանիկ ցուցահանդէսին առիթով: ԵԳարումնի էջերուն (Ա. տարի, 1967, թիւ 3) հրատարակուած վերոնշեալ հանդիպում – Հարցազրոյցէն լայն մէջբերումներ կատարելով, Հատորին հեղինակը կ'անցնի տանհամեմակներ շարունակ գրեք հետապնդած իր մեծ երազին՝ Գառզուի մասին գիրք մը գրելու ծրագրերին հետ կապուած մանրամասնութիւններուն: Ապա, ան կը թափանցէ մէջտեղ գեղեցիկին հետախոյզ, գեղեցիկը առաւել գեղեցիկացնող եւ իր ժողովուրդի անցեալին ու ներկային մէջ շուսապայծառ ապառաչան ապրող լուստես ու սիրեղակ արուեստադէտին ոգին աշխարհէն ներս, յանգելու համար այն եզրակացութեան, որ ինքզինք ճամա սա մառ արեւիմ պէս քաճճուող, բայց, արեւիմ պէս անվերջանալիս ԵԳառզում լիազուամար ճկարիչն է, որ կ'իյնայ է դարերէն ու կ'երթայ դարերումն՝ իրեն հայութեան մէջ զարմանալի նուէրը աշխարհէն, զոր գարմամալիօրէն ծնաւ այն օրերուն, երբ կը ճիւղուէր կործանուէր ռազիայութեան:

Հայ մամուլի էջերուն Գառզուի նուիրուած յօդուածները եւ ուսումնասիրութիւնները յատուկ բաժինով մը տեղեկագրելէ ետք, ԵԳառզու կ'ընտրուի ֆրանսական գեղարվեստից կանառի անդամ խորագրեալ բաժինով հեղինակը էլ կը բանայ այս մեծ նուաճումին, հայ մամուլի ներկայացուցիչներուն առջև մեծանուն արուեստադէտին արտասանած ելոյթին եւ սփեռաբանայ մամուլի արձագանգներուն: Ապա կը յաջորդեն տեղեկատուական բնոյթ ունեցող երկու այլ բաժիններ՝ «Ակադեմիայի Եմ Գառզուի անուան քանգարան» եւ ԵԳառզու քանգարանէն Եմ Գառզու մատուց խորագրով:

Հոս կ'աւարտի 56 էջի գրաւած Հատորին առաջին գլուխը: Կը բացուի նոր դուրս մը՝ ԵԳառզու ֆրանսական գեղարվեստից կանառի անդամ, ուր յաջորդաբար կը ներկայացուին մեծանուն արուեստադէտին ուղղուած նրանապի հանրապետութեան նախագահ Վայրի Ժիւքար Տ'Կաթիլի ողջունի նամակը, ակադեմիական Ալպետ Տեքարիսի ողջունի խօսքը եւ էնսիկլոպիդի Գմբէթի տակ Գառզուի արտասանած ակադեմիական ճառը:

Գառզուի ֆրանսական գեղարվեստից կանառի անդամ ընտրուելու երեսոյթն ու անոր արձագանգները կը գրուեն առիւծի բաժինը

Թ. Թորանեանի այս գործին ժամանակաշրջան կարգով, քան էջերու տարածքին կը ներկայացուին ֆրանսական մամուլի խանդավառ արձագանգները, յատկանշական մէջբերումներով: Մեծարանքի այս բաժինը կ'աւարտի ֆրանսացի հանրածանօթ անձնաւորութիւններու ողջունի խօսքերէն կատարուած մէջբերումներու փունջով:

Հայերէնով, անգլերէնով, գերմաներէնով, ճափներէնով, պուլիարերէնով, բայց մանաւանդ ֆրանսերէնով եւ այլ լեզուներով Գառզուի ինքնատիպ արուեստին նուիրուած գիրքերն ու ուսումնասիրութիւնները կը ներկայացուին յատուկ բաժինով մը: Օտար լեզուներով հրատարակուած գործերը յատկանշական մէջբերումներով ընթերցողին սեփականութիւնը վարձնելէ ետք, Թորոս Թորանեան յատուկ կարեւորութեամբ կանգ կ'առնէ հայերէնով հրատարակուած երեք գործերու՝ հայերէն արուեստարան Վահան Թարութիւնեանի ԵԳառզու անուն գրքուկէն, ԵԳառզու ճկարիչը եւ ժամանակը ծաւալուն ուսումնասիրութեան եւ Գրքոր Գլուխեանի ԵԳառզու – մոզական աշխարհի մը ճկարիչը անուն մեծագրութեան վրայ: Ապա, յաջորդ էջերով Թ. Թորանեան կը ներկայացնէ Գառզուի հետ ունեցած իր հանդիպումները, տաղանջաւոր գեղանկարչին կեանքի խօսուն տարեթիւերը, անոր արուեստին նուիրուած մեծագրութիւններուն, նկարազարդած գիրքերուն եւ Գառզուի ստորագրութիւնը կրող գործեր ունեցող թանգարաններուն ցանկերը, իր Հատորը փակելու համար միջազգային վարկ ու անուն վայելող մեծ արուեստադէտին հետ անուղղակի կապ ունեցող բաժինով մը, որ կը միտի հայ ընթերցողին ծանօթացնել Գառզուի գրադէտ կողմէն ու զուակը՝ նաեւ եւ ժան – Մարի Գառզուները, ինչպէս նաեւ Հայաստանով խանդավառ թողը՝ Լուին:

Գառզուի կեանքը եւ արուեստը հանգրուան առ հանգրուան պատկերած Թորոս Թորանեանի այս ծաւալուն աշխատութիւնը կը փակուի «Որպէս վերջաբան» խորագրեալ էջով, որուն եզրափակել նախազատութիւններով կը կատարուի սա հաստատում-մարտնչը:

ԵԳառզու անունը ուրախութեամբ ազբիւր է: Ահա թէ ինչու Հայաստանի մէջ եւս որոշուած է իր անունով քանգարան հիմնել:

Թող հիմնուի այդ քանգարանը, որպէսզի ըսեմք, թէ հայ գեղարվեստի Հայաստանը կը հասի. այսպէս աշխարհագրութիւնը մեզի կ'ըսէ, թէ Հայաստանի բոլոր գետերը դեպի դուրս կը հոսին:

«ՀԻՆ ԱՐՄԱՏՆԵՐԷՆ ՆՈՐ ԸՆՁԻՒՂՈՒՄՆԵՐ»

(ՀԵՂԻՆԱԿ՝ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ)

ԳԱՐԵԳՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԻՆ ԱՐՄԱՏՆԵՐԷՆ ՆՈՐ ԸՆՁԻՒՂՈՒՄՆԵՐ

ԻՐԷՆ ՈՒ ՍԵՍՈՐԸ

(ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ)
(Վախճանձան 80-ամեակ)

Արտատպում
ՀԱՅԿ ամսագրի (1989 Նոյեմբ. 1989)

Ազգի լիս
1990

Գարեգին Բ. Կաթողիկոսի շքանշանները և շքանշանները
ընդ նախ ընդհանրապես ուսումնասիրում
թիւնը գրքային ձևով լայն տեսակ 1990ին, Մե-
ծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տը-
պարանէն, շքանշան ամսագրի 1989ի Նոյեմ-
բերկա. միացեալ թիւին մէջ հրատարակուելի
ետը:

Երջանկայիշատակ Սահակ Բ. Կաթողիկոսի
(Խաչայեան) վախճանման 50ամեակին առի-
թով հրատարակուած այս գրքայից կը բաղկա-
նայ 56 էջերէ:

Առաջին 42 էջերու տարածքին, ամբողջա-
կան զիծերով, Գարեգին Բ. Կաթողիկոս կը
կազմէ կենդանազիրը զգրեթէ դար մը ամբողջ
իր ուսերուն վրայ շարժած և 8 Նոյեմբեր
1939ին Հողին յանձնուած իր նախորդներէն
վատասեակ Սահակ Բ. Կաթողիկոս Խա-
չայեանի, զոր եղաւ կամուրջ Կիլիկիան
դարաւոր Աթոռի բնասելույն կաթողիկո-

սանիստ Սիս վայրաբնակի և ժողովրդային
ու կանաչաւտ Անթիլիասի միջեւ:

Կարճ մուտքէ մը ետք, Գարեգին Բ. Կաթո-
ղիկոս ամփոփ զիծերով կը ներկայացնէ Սա-
հակ Բ. Կաթողիկոսի մանկութիւնն ու պա-
տանութիւնը, անցնելու համար անոր Հոգե-
մբաւոր կերպարի կազմաւորման և ծաղկ-
ման առաջին հանգրուանին, Երուսաղէմի
մէջ, 17 տարեկանէն մինչև 53 տարեկանը՝
իր բն. ուսուցիչ, դասագիրքերու Հեղինակ,
«Արեւ» ամսագրի խմբագիր, զարագիչ, լուսա-
բարսպետ, Հոգեւորական և վարչապետ:

Այս ընդհանուր ծանօթութիւններուն կը
յաջորդէ կենդանազիրը Սահակ Բ. Կաթողի-
կոսի, աւելի ճշգրտ. անոր կենսի երկրորդ կէ-
տը, որ, իր երկարագոյն մասով, անցաւ Կիլի-
կիոյ Կաթողիկոսական գահին վրայ՝ Հոկտեմ-
բեր 1902էն մինչև Նոյեմբեր 1939ը: Առաջին
հերթին, Գարեգին Բ. Կաթողիկոս յատակ կը
զարձնէ Սահակ Բ. Կաթողիկոսի բնարութեան
նախորդած ու թ տարիները, երբ Կիլիկիոյ Կա-
թողիկոսութեան զարաւոր գահը կը մնար
Թաթուր և Կ. Պոլսոյ Պատրիարքութեան և
Կիլիկեան Աթոռի Հոգեւորականութեան ու
ժողովուրդին միջև ծայր տուած խոր տարա-
կարծութիւնները, վէճերը, հակամարտ կեց-
ւածքներն ու ընկերային, տնտեսական ու
քաղաքական ներքին սաղնապնիրը ժխտա-
պէս կ'անդրադառնային Կիլիկեան Աթոռի
դերակատարութեան, վարկին և Հեղինակու-
թեան վրայ:

Ապա, Գարեգին Բ. Կաթողիկոս հանգամա-
նորէն կանգ կ'առնէ ժանշտացեալ և լքուած
գահին բարձրացած Սահակ Բ. Կաթողիկոսի
անդրանիկ կոնդակին և Ամենայն Հայոց
Կաթողիկոս Խրիմեան Հայրիկէ հետ անոր փո-
խանակած թղթակցութեան վրայ, որպէսզի
ընթերցողին համար յստակ դառնայ, թէ յու-
սահատեցուցիչ և մոայլ ինչպիսի՝ պայման-
ներու մէջ Սահակ Բ. Կաթողիկոս լծուեցաւ
քայքայուած դարաւոր Կաթողիկոսութիւնը
վերականգնելու գործին, գործը հաղիւ
աւարտած՝ ճաշակելու համար դառն բաժակը
Կիլիկեան Ազտի, Մեծ Եղեռնի և Կիլիկիոյ
հայութեան կրկնակ զաղթին ու թափառա-
կան կաթողիկոսի անձկութիւններուն և սա-

ասպանքներուն՝ ամբողջական Սիւս մայրաքաղաքէն մինչեւ Հալէպ ու Անթիպատ, ուր, շնորհիւ իր անխոնջ եւ հետեւողական հետապնդումներուն՝ զինու զօրութեամբ տեղահանուած Կիլիկիոյ հայութեան թափառական Կաթողիկոսութիւնը կայք հաստատեց նախ վարձու հողաշերտի մը վրայ, ապա, եօթը տարիներ ետք՝ 1937ին, անոր սեփականացման բարիքը վայելելու համար:

Աւելին. Սահակ Բ. Կաթողիկոսի կոնդակներէն եւ նամակներէն բնորոշ մէջբերումներ կատարելով, Գարեգին Բ. Կաթողիկոս աւելի պայծառ կը գարձնէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շարունակականութիւնը ապահովելու նպատակով ոչինչէն զգրեւանք, տպարան, համապատասխան մարմիններ եւ վարչական կառույց առաջացուցած եւ Կիլիկիան Աթոռի շարունակականութիւնը ապահոված «տու՛րապակիր», «զահազուրկ», «սրտահալած» եւ նման կոչումներով պարգեւատրուած սապահապար Սահակ Բ. Կաթողիկոսի կերպարը, որ «ժողովուրդին խաշակից դարձած եւ

տոռապիտոց միօթաբիշ հաճիսացած ըլլալու շրջագծէն անդին»՝ «ճոր աւիշ հոսեցուց Կիլիկիան Աթոռի թոյր սպասարներուն մէջ, անցնող յիսուն տարիներու ընթացքին»՝ իբրեւ «արմատ ճշմարիտ»:

Կոչումի, նուիրումի եւ Պաշայութեան այս անխոնջ հոգեւորականին կեանքի կենդանի որինակէն եւ գործքէն թելադրուելով, Գարեգին Բ. Կաթողիկոս իր հոգու եւ սրտի խօսքը կ'ուղղէ ո՛չ միայն երկնարնակ Սահակ Բ. Կաթողիկոսի, այլեւ՝ Հայ երիտասարդութեան, «ճշմարիտ արմատէն ճշմարիտ աւելջ ստանալու եւ անոր ազդանուէր գործը շարունակելու համար»:

Գրքոյկը կը փակուի Սահակ Բ. Կաթողիկոսի 88 տարիքէն թուղթին յանձնած «Սրտիս Կիլիկիոյ խորագրեայ սրտարուխ եւ անմիջական գրութեամբ, անոր գրչէն քաղուած յատկանշական հատուածներով եւ յիշատակը անմահացնող «Երգ ձօնեալ ՏՏ՝ Սահակ Հայրապետին» կտորով:

ՇՆՈՐՀԱԿԱՂՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

- «ՄԻ ՔԱՐԻ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ» — արձակ բանաստեղծություններ — Արտակ արքեպիսկոպոս, Թեհրան, 1985, «Նայիրի» տպարան:
- «ԺԱՄԱՆԱԿԻ ԱՔՑԱՆԻՆ ՄԷՋ» — բանաստեղծություններ — Արտակ արքեպիսկոպոս, Թեհրան, 1985, «Նայիրի» տպարան:
- «ԱՍՏՂԱՂՈՅՍԻ ՈՏՆԱՀՆՏՔԻՆ» — բանաստեղծություններ — Արտակ արքեպիսկոպոս, Լոս Անջելոս, 1987, «Նրազ» տպարան:
- «ԲԱԶԿԱՏԱՐԱԾ» — բանաստեղծություններ — Արտակ Արքեպիսկոպոս, 1990, Թեհրան:
- «ԴԱՐԱՎԵՐՋԻ ՍԱՐՍՈՒՌՆԵՐ» — ֆերբուածներ — Արմանտ, Թեհրան, 1989, «Նայիրի» տպարան:
- «ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»
Ժորժ Մարտիրոսեան, Թեհրան, 1990:
- «ՀԵՊԸՆԹԱՅ ՏԱՐԻՆԵՐ» — յուշեր, զիրքեր, հեղինակներ — Լեւոն Սոփոկիւեան, Փարիզ, 1990:
- «ԲՕՀԵՄԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ» — ֆերբուածներ — Վարանդ, Թեհրան, 1988, «Ալիֆ-ֆարաբի» տպարան:
- «ՊԱՆՈՒՐՑԸ» — թատերախաղ — Արման Վարդանեան, Իսթամպուլ, 1988, «Նորֆ» հրատարակչատուն:
- «ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» — բանաստեղծություններ — Սայաթ - Նովա, 1989, Պէյրուք, «Գառնի» մատենաշար:
- «ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ» — ֆերբուածներ — Համօ Սահեան, 1989, Պէյրուք, «Գառնի» մատենաշար:
- «ՀՈՍՀՈՍԻ ՁԵՌԱՏԵՏՐ» — երգիծական արձակ — Յակոբ Պարոնեան, 1989, Պէյրուք, «Գառնի» մատենաշար:
- «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» — ֆերբուածներ — Գրիգոր Նարեկացի, 1990, Պէյրուք, «Գառնի» մատենաշար:
- «ՄԵՆԱՒՈՐ ԸՆԿՈՒՁԵՆԻՆ» — վիպակ — Վարդգէս Պետրոսեան, 1990, Պէյրուք, «Գառնի» մատենաշար:
- «ԱՐՄԱՏ ԵՒ ԷՈՒԹԻՒՆ» — բանաստեղծություններ — Ալիսիա Կիրակոսեան, 1990, Պէյրուք, «Գառնի» մատենաշար:

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ (գոյգ թիւ)
Տարեկան բաժնեզին

1500 Լ. Ո.
9000 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (գոյգ թիւ)

80 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեզին

40 Ամերիկեան տոլար

بأكين
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցե՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban